



Բագին

ԷՍՍԵԳԻՐ

Գրադպրատն-թերթ
և Արտ-Էսքր



ԺԳ. ՏԱՐԻ

Թ Ի Ի 9

ՍԵՊՏԵՄԲԵՐ 1974



digitised by

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. ՀԱՅԿԱԶ	Մարդը եւ արեւահար շունը
Յ. ՆԱԳՈՒԼԵԱՆ	Քանաստեղծութիւններ՝ քաղաքի, կեանքի, հրաշքի մասին
Բ. ԱՐԱՄԵԱՆ	Աշնան օր
Յ. ՕՇԱԿԱՆ	Մաթիկ Մելիքխանեան (վէպ)
Ա. ԵՐԿԱԹ	Յ. Օշական
* * *	Ստույգեմբը շաղախուած սուտ գրականութիւն
Գ. ՊԸԼՏԵԱՆ	Անդրատառը, Ինտրա եւ Տիրան Չրաֆեան
Լ. ՄԿՐՏՁԵԱՆ	Մտածումներ բանաստեղծութեան մասին
Ն. ՉԱՐԻՈՒՏԵԱՆ	Ֆրանսական ժամանակակից բանաստեղծութիւնը
Ք Ճ.	Կ. Մեհեանի «Ալեքսանդր զուրներ» հատորը
Ա. Կ.	Խ. Ն. Գաւառի «Հին կարօտներու համբով» հատորը
* * *	Ինքնաբերկահարման մրցակազմ

Բարձր



ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

Ճ. Գ. ՅԱՐԻ. ԹԻՒ Յ

Ս Ե Պ Ե Ս Ե Մ Բ Ը Ն Ե Դ Ե Դ Ե Դ Ե Դ

ՊԵՏՐՈՒՊ

3863 (489)

Ա Ր Ա Մ Է Ա Յ Կ Ա Ջ

Մ Ա Ր Դ Ը

ԵՒ ԱՐԵՒԱՀԱՐ ՇՈՒՆԸ

Թէև ողորդական է, բայց ի՞նչ մեղքս պահեմ, մաքիս խնդարով է, որ կ'անցնիմ սեղանիս առջև այս պատմութիւնը գրելու համար: Գիտեմ նաև, որ եթէ դաշն մտադրածիս պէս յաջողութեամբ կարենամ աւարտել, կարգ մը գրադատներ ու ընթերցողներ զիս պիտի դասեն «յստաղիմական» գրողներու կարգին: Կը վստահեցնեմ ձեզ, թէ ինծի շնորհուած այդ կասկածելի պատուին համար խայտալով քանի մը գիշեր քունս պիտի չկորսնցընեմ: Լման յիսուն տարի «յստաղիմական» դաւանուելէ ետք, թող կեանքիս վերջին քանի մը տարիներն ալ մնամ այդ դասաւորման մէջ:

Նիւ Եոթքի մէջ, ուր կ'ապրիմ ներկայիս, ու ապրած եմ երկար տարիներ, լաւ կը ճանչնամ քաղաքին արեւելքն ու արեւմուտքը, հիւսիսն ու հարաւը, բարիքներն ու բարքերը, շարիքներն ու շարագործները: Ուրիշ շատ մը բաներու կարգին, գիտեմ նաև, թէ ամէն մուրացկան, ինչպէս երկնքի ամէն թռչուն, իր իշխանութեան ու գործունէութեան սահմանը ունի: Բնութեան օրէնքներէն ու աշխարհի բաներէն անտեղեակ անձերու թերեւս անհաւանական ու անիրական թուին այս բաները, բայց իրականութիւն են:

Նիւ Եորքի մէջ ուտիկանները, աւազակները, մափիայի անդամները, լրտադրամառները, քահանաներն ու խել մը ուրիշ զբաղմանց սէր մարդիկ գործունէութեանց եւ ազդեցութեանց իրենց սահմանները ունին: Այդ սահմանները, լուս Համաձայնութեամբ, բնաւ չեն բռնաբարուիր: Օրինակի Համար, Լոնկ Այլէնսի մէջ գտնուող եկեղեցիի մը քահանան չի կրնար քաղաքի սրտին վրայ գտնուող եպիսկոպոսանիսա եկեղեցին կրթալ ու Հոն պատարագիլ, քարոզ խօսիլ Զատիի օրը կամ Մաղկազարդին... եւ ըսել, թէ ճիսուս խաշուեցաւ, որովհետեւ Երուսաղէմ մտաւ Համեսա անասունի մը վրայ նըստած...: Եթէ միով կամ ինքնաշարժով մտնէր Երուսաղէմ, Հաւանարար չըխաշուէր... Բայց Տէրը որոշած էր, որ իր Որդին Համեսա անասունի մը մէջէն նստած մտնէ Երուսաղէմ, շարչարուի, խաչուի, Հողը դրուի, ու երբորդ օրը յարութիւն առնէ, որպէսզի երբ երեք կիները այցի գան իր գերեզմանին, գայն գտնեն պարագ, ու սուրբ Հրեշտակը անոնց աչքին երևալով՝ ըսէ.

— Չէ սսա, քանզի յարեա՞ւ...

Ուրիշ օրինակ մը:

Նիւ Եորքի Բենրաի օգակայանը կողոպտելու առանձնաշնորհումը ունեցող աւազակախումբը կը ձգէ՞, որ ուրիշներ գան ու Հարիւր քսան ժիլիոնի Հասնող իրենց եկամուտը բաժնեն Հեռերին... Ըլլալի՞ք բան է... Անհաշիւ արի՛ւն կը թափի:

Օգակայանը միայն մէկ լաւ կազմակերպուած խումբի գործունէութեան դաշտն է:

Պոխորը, Լեվինը կամ Մաքսը կ'ուզեն հրէական մեծ տօնի մը օրը, մեծ շահ մը չկորսնցնելու համար՝ իրենց միաճառատունները բանալ: Աններեւի՛ մեղք: Բայց դիւրութիւն կայ: Կը դիմեն իրենց շրջանի խախտիին, նըւէր մը կու տան անոր եւ արդեւիքները կը վերանան: Կրնան խաղաղ արտով տօնը պղծել...

Հիմա գանք մուրացկաններուն:

Առջի օր, տեսայ, որ ՏՅրդ փողոցի մուրացկանը, Հաւանարար Հանգըստեան կոչուելու տարիքին Հասած, իր ազատա վիզէն թոկով մը կախուած քրեկիսքըր փոքր ուտիոյին ու Վոյր եմ, օգնեցէ ինծիքին քով, աւելցուցած էր ուրիշ մը, Վերջին օրերս ենք:

Հաւատացէ՛ք՝ նման ծանուցում մը կախած էր վզէն...

— Աս մարդը ի՞նչ ըսել կ'ուզէ, — խորհեցայ, ու Հասայ ա՛յն եզրակացութեան, թէ ըսել կ'ուզէ, որ մօտ օրէն ալ աս կողմերը պիտի չըլլամ... տալիքնիդ տուէ՛ք... ուրեմն՝ իր տեղը ծախած է ուրիշի մը... Իր արուեստակիցը ի՞նչ վճարեց այս Հասութեան տեղին Համար, որոչ չէր, չէի գիտեր, ոչ ալ կրնայի գուշակել:

Հակառակ տարօրինակութիւններ տեսնելու մարտուած ըլլալուս, զի՛լ մը զարմացայ. խորհեցայ, որ եթէ դերձակ մը ծանուցանէ, թէ շարաթէ մը կամ ասօր օրէն իր խանութը կը գոցէ վերջնականապէս, կամ Օգոստոս ամսու մէկէն մինչեւ տասնը՛հինգը ձուկ որսալու կ'երթայ, ու յամախորդները միծնչել այդ օրը առնելու են արդուկուելու համար իր մօտ ձգուած տարատները, ձեւով մը Հասկնալի ու տրամաբանական կ'ըլլայ... Բայց ո՛ր տեսնելու է, որ մուրացկան մը յայտարարէ, թէ Վեր վերջին օրերն են: Թերեւս ան Համոզուած է, թէ իրեն արուած ողորմութիւնը բնաւ չի կորսուիր. այլ՝ տուողին, ապագային դէպի երկինք ու արքայութիւն կատարելիք ուղեւորութեան ճամբան եթէ՛ դերբուկ է, կը հարթէ՞. Հետեւարար պէտք է օգտուին վերջին պատեհութենէն:

Յամենայնգէպս, ինչպէս ըսի, ամէն մուրացիկ, կամ ողորմութիւն ստանալով Հարստացող, իր մուրացիկ ըլլալուն պատճառն ունի. ոմանք կոյր են, ոմանք՝ կաղ, ոմանք անդամահատուած են, ոմանք՝ ծոյլ, ոմանք ազան են, ոմանք՝ արժանապատուութենէ զուրկ ու մակաբոյժ, ոմանք ալ՝ շուտով Հարստանալ ցանկացող:

Չանազան պատճառներով ափ բանալ ստիպուած եղողներու եւ կամ ափ բացողներու մէջ, իմ ճանչցածներէս ամէնէն Հպարտն ու Համակրելին, ու նաեւ ինքնատիպը, ՅՏրդ փողոցի, նախկին ուսական եկեղեցիին — Հիմա սինակրելի վերածուած — սանդուխներուն վրայ ապրող դիմով մուրացիկն է:

Մեծդի, առողջ, Հպարտ, լայն ուսերով ու կուրծքով, բարեղէժ, երկարահասակ, կարմիրին տուող առատ բաշերով մարդ մը:

Տարիքը՝ 35-40ին մէջ բան մը: Վստահ եմ, շատ մը կիներ, մաքով զայն մաքրելէ ետք, Հպարտութեամբ մտած են անոր թեւը կամ ծոցը:

Փողոցին ձախ, արեւմտեան կողմը գտնուող սինակրելին սանդուխտանքը իր կեղրոնատեղին են: Շէնքի Հսկիչին բոլոր հիգերը, զայն տեղահան ընելու Պամար, անցած են տպարդիւն: Անկիւնը զրուած նամակատուփին կամ Հողեհի ահագանգը պարունակող կարմիր ներկուած սիւնին պէս, փողոցին տեւական մաս կը կազմէ այլեւս:

Իր եղած տեղէն ամէն օր ու օրը քանի մը անգամ անցնողները ալ վաթճուած են իրեն ու ալ չեն տեսնք դիւքը: Հաւանաբար այս բանը գէշ կ'անդրադառնայ իր եկամուտին վրայ. միւս կողմէ՝ ունի առաւելութիւն մը. կան քանի մը բարի ազնիւներ, որոնք, Ուրբաթ օրերը երբ վճարուին, չեն մոռնար անոր բաժինը ափին մէջ զնել, եթէ նոյնիսկ այդ ափը բացուած չէ այդ պահուն:

Աչքը ծակ, Հասարակ մուրացիկ մը չէ: Ետևով կամ երբեմն չեն գրտտան կոչուելու Հաւանականութիւն ու յոյս չունի Հաւանաբար: Կը Հաւատամ, թէ այս բաներուն մասին խորհած իսկ չէ: Երկնքի թռչուններուն պէս, վաղուան մտահոգութիւն չունի: Ազգական կամ պարագայ՝ չեմ դիտեր: Բայց Համակրողներ ու բարեկամ շատ ունի: Անոնց կարգին՝ ես:

Ճակատը լայն է, առանց նշմարելի կնճիռի: Աչքերը խաղաղ ծովի կապոյտով կապոյտ են: Մորթը արեւախանձ է, գրեթէ պղնձագոյն: Իրլանտացի ըլլալ կը թուի: Ըսի թէ մեծդի է: Իր ամէն մէկ թեւին երկարութիւնը մէկ մեթրի կը մօտենայ: Երբ կողքէն վար կախէ, անոնք իր ծունկերուն կը Հասնին: Կոփամարտիկ մը ի՛նչ պիտի տար զանոնք օւնենալու՝ կամ դէթ վարձելու Համար. վարձել իր երկար թեւերն ու ամուր բունցքերը վստահ յաղթանակ պիտի նշանակէին:

Յանախ իր կոնակի Հազուտանքը Հնամաշ են ու քրտինքով օծուն: Բայց երբեմն, բարի ձեռք մը, չի գիտցուի թէ ո՞վ, զուրգուրանքով մաքրած ու Հազուեցուցած կ'ըլլայ դիւքը:

Նման օրեր, ձեւականութեանց Հանդէպ անփոյթ երիտասարդ իշխանազունի մը կը նմանի:

Կ'ըլլան օրեր, որ գուլպայ չ'ունենար սոքը, կամ եթէ ունենայ՝ միայն մէկ Հատ: Երբեմն, սոքին բթամատը, Հետաքրքիր կրեայի մը գլխուն պէս, գուր կը նայի կօշիկին ծակէն: Հսկառակ ամէն օր քիչ թէ շատ աղտոտ ըլլալուն, զգուանք չ'ազդեր: Հարկ մնա՞ց ըսելու, թէ Համակրելի ախպ մըն է...

Օր մը, զինքը երկար դիտելէ ետք, Հարցուցի ինքզինքին. թէ ի՞նչն է զինքը Համակրելի դարձնողը: Իրրեւ պատասխան՝ իր անթերի Փիգիբականն ու կերթ Հարժուձեւերը գտայ: Անկասկած որ լաւ շրջանակի մէջ է ապրած

ժամանակ մը, եւ դաստիարակուած, զպրոց, զպրութիւն տեսած:

Մեր երկիրը խենթ շատ կար: Անոնցմէ ոմանք խենթ էին ծնած, ոմանք ալ՝ այս կամ այն պատճառաւ յետոյ խենթացած: Փողովուրդին մէջ այն կարծիքը կը տիրէր, թէ յետոյ խենթացածները, խորունկ սւաման ու խորունկ սիրոյ զոհերն էին:

Աս մարդունը ո՞ր մէկն էր...

Ըսի թէ իր տշքերը, ծովու կապոյտով կապոյտ են: Մեծ, մաքուր, խնդացող աչքեր, որոնք միշտ լայն են բացուած աշխարհի դէմ. ու կը թըւի, թէ միշտ կը խնդան, արովհետեւ աշխարհը հակասութիւններով լեցուն ծիծաղելի տեղ մըն է:

Թերեւս ալ թեթեօրէն անհաւատարակչիւ իր մտքէն զուարճալի բաներ կ'անցնին... Ո՞վ գիտէ, ո՞վ կրնայ գուշակել...

Իր մասին բան մը գրել տուրադրելէս ի վեր, յաճախ կ'երթամ զինքը դիտելու: Երբեմն հոն չ'ըլլար: «Արդեօք ո՞ւր է, ի՞նչ եղաւ», կը հարցնեմ ինքզինքիս: Կը սկսիմ ենթադրութիւններ ընել՝ մինչեւ որ երեւի:

Երբեմն սինակոկի սանդուխներուն վերին աստիճաններէն մէկուն վըրայ դիմքը քնացած կը գտնեմ. երբեմն, նայած թէ ուր շուք կայ՝ վարի:

Յուրս օրերը՝ բարի արեւուն մէջ է, տաք օրերը՝ բարի շուքին:

Տեսած եմ նաեւ ազօթատեղիին կից շէնքին դրան առջեւ. քնանալը՝ պուրպոնի պարսպ ու տափակ շիշը կողին: Խորհած եմ, թէ սինակոկի պաշակը զայն իր նախընտրած անդէն վոնտած ըլլալու է:

Դատելով պուրպոնի (իր նախընտրած խմիչքէն) հանդէպ իր ցոյց տուած հաւատարմութենէն կարելի է ըսել, որ եթէ մէկը սիրած ու հետը ամուսնացած ըլլար, կ'ըլլար հաւատարիմ ու օրինակելի ամուսին:

Ուրիշ մուրացկաններու պէս թեւ չէ երկարած յանուն սանտուշի մը կամ բաժակ մը սուրճի. անօթութենէ, օրերով բերանը բան դրած չ'ըլլալու պատճառովն չէ շինած՝ գութ շարժելու համար. բայց երբեմն, միայն երբեմն, երբ ծարաւէն շատ նեղուի — ջուր չի խմեր, արովհետեւ միայն հիւանդներն են, որ ջուր կը խմեն — ու խմելիք չունենայ, բոլոր գրպանները, ծակ կամ լման, կ'որոնէ հերթով, գտած բոլոր գրամները կ'որսայ ու զանոնք սանդիստերէն մէկուն վրայ շարկում՝ կը համրէ:

— Հինգ, տասը, քսան, երեսունեւհինգ, յիսու...

Գիտէ թէ քանի՞ սենթի պէտք ունի շիշ մը կամ բաժակ մը պուրպոն գնելու համար: Ունեցած գումարը միտքը պահելով՝ կը կանգնի ճամբու եզրին ու կ'ուսումնասիրէ անցորդներու գէմքերը, յուսալի թուող անձի մը ճամբան կը կարէ ու կ'ըսէ.

— Բաժակ մը պուրպոնը 85 սենթ կ'արժէ. ես յիսուն սենթ միայն ունիմ...

Իր ճամբորտախօսութիւնը դիմաթափ կ'ընէ դիմացիներ: Իր ուզած քանի մը սենթին տեղ՝ լման առլար մը տուողներ կ'ըլլան. շնորհալիօրէն չընորհակալութիւն կը յայտնէ ու չունեցած գլխարկը վերցնելով՝ կը խոնարհի առատաձեռն բարեբաբին առջեւ:

Սքանչելի թենոր է: Կ'երգէ անցորդներուն, ու անոնց բացակայութեան պարագային, շուրջի շէնքերուն համար: Շիտակ կ'երգէ: Բտտերը կ'արտասանէ մաքուր ու յստակ:

Կուրծքը, որ բաց է ամառ թէ ձմեռ, քնաւ չէ դաւաճանած իրեն: Նախընտրած բեմը սինակոկի սանդուխի վերին աստիճաններն են. հանդիսականները՝ դիմացի շէնքերուն դոց, ծանրօրէն վարազուրուած պատուհանները: Բեմական անթերի շարժումներով ու այնպիսի եռանդով կ'երգէ, որ

կարծես կը հաւատա՛յ, թէ այդ բազմայարկ շէնքերու պատուհաններուն ետին սրտին սիրա՛ծն է, որ իր երգը լսելու համար լուսարացին կամ իր երգելուն կը սպասէ:

Անցորդներէն զնահատուկով, մանր կամ մեծ դրամներով վարձատրուելու համար չէ, որ կ'երգէ, ինչպէս ուրիշներ կ'ընեն. ինք, արեւոտ օր մը ծառէ մը կատարէն դարնան զալուստը աւետող տարձահաւի մը նման է, կ'երգէ որովհետեւ արեւը կը շողայ, օդը պայծառ է, երկինքը կապո՛յա, ու ինք երջանիկ: Երջանիկ՝ որ կ'ապրի, ու կ'ապրի ոք երջանիկ ըլլայ, ու իր երջանկութեան զպացումը, անխտիր, բաժնէ բոլորին, բոլորի՛ն, բոլորի՛ն...

Ձէ՞ որ ապրելու համար աշխարհը աղուր տեղ մըն է: Գէշը ա՛յն է, որ իր երգը, յաճախ լսուած, որքան ալ սրտառուչ ու հոգեպարտ ըլլայ, կործնեցած է իր հմայքը. ա՛լ ուշադրութեան չ'արժանանա՛ր. այս մեծ քաղաքին մէջ մարդիկ տէրը չե՛ն իրենց ժամանակին եւ զպացումներուն: Ստիպուած են, որոշ ժամու մը՝ որսը տե՛ղ մը ըլլալ: Եթէ հագուստէն ստանէք մէկը, որ չ'անապարհը, հոս ու հոն կը յամենայ, բերանը բաց, զիջը ետ ծռած, շուրջի շէնքերէն վեր կը նայի, դիտցէք, որ տեղացի չէ. հեռուոր կամ մօտուոր տեղէ մը եկած քուրիք մըն է:



Անան ոտնաձայնը պարունակող ցուրտ դիշեր մը, ուշ առեմ, երբ դեռնուզի մտնելու համար այնտեղէն կ'անցնէի, ահօայ, որ զինովք, իր սովորական տեղը կեցած՝ կ'երգէր իր երգերուն ամէնէն յուզիչն ու օրատարաւ: Պահիկ մը կանգ առի դինքը մտիկ ընելու համար: Դիմացէն պատուհան մը բացուեցաւ ու դուրս երկարած գլուխ մը բրտօրէն ազդարարեց, որ լռէ:

— Եաք այի, ետ պէտքարտ... Ձե՞ս կրնար գիշերը դանազանել ցերեկէն... Ձե՞ս գիտեր, թէ մարդիկ պէտք է գիշերը քնանան...

Հաւանաբար ուրիշ գոգո՛ւի մը հեռաձայնով ըրած թողոքին վրայ, զլրեթէ միաժամանակ վրայ հասան երկու ոտիկան: Անոնցմէ մէկը ելաւ կտուրէն դուրս, մօտեցաւ իրեն ու քիչ մը խիստ շեշտով մը պատուիրեց, որ տուն երթայ:

— Երգչ, վաղը առաւօտ, լուսնայէ ետք շարունակէ: Հիմա զնա՛ տուն ու հանգչէ: Քնանալու ժամն է թէ՛ քեզի եւ թէ՛ ուրիշներու համար:

— Իրաւունք ունիք, — ըսաւ ան ոտիկանը մտիկ ընելէ ետք, — իրաւունք ունի՛ք. հիմա գիշեր է ու մարդիկ պէտք է որ քնանան... քնանան, որ վաղը իրարու կոկորդ կրծելու համար ուժ հաւաքեն... Հիմա գիշեր է, ներողութի՛ւն...

Թեւը երկարեց ու բռնեց խօսակիցին ձեռքը, թօթուեց, ներողութիւն խնդրեց զիրենք անհանգստացնելուն համար. մեծ, արագ քայլերով իջաւ վար սանդուխներէն, զնաց կտուրէն մէջ նստած միւս ոտիկանին ջով, ու անոր առջեւ ալ խանարճելէ, անոր ձեռքն ալ թօթուելէ ետք, ելաւ համբայ: Ո՛ւր երթալու համար...

Ձե՛մ գիտեր:
Գիտնալու համար՝ նայեցայ իր հաեւէն:
Կողմնակի փողոց մը մտաւ:
Ժամը մէկն էր:
ձիւզ իր դիմացէն, սպիտակ շապիկ հագած մարդ մը կու գար: Մօտե-

ցաւ անոր ու խօսքի բունուկցաւ Հեաը: Քիչ ետք, թեւերնին իրարու ուս նե-
տեցին ու միասնաբար մօտեցան ճամբուն ձախ կողմը գանուող վաճառատան
մը դրան: Ողորկ սալալատակին վրայ շարժուն սեւ գիծեր դծուեցան ու նս,
մտքէս խնդարով, շարունակեցի ճամբաս:

Հիմա չեմ յիշեր, թէ քանի՞ ամիս ետքն էր որ, օր մը, երբ սինակո-
կին առջնէն կ'անցնէի, տեսայ զինք օտնդուխներուն վրայ պառկած: Իր
ձախ ծունկը վերակապերու մէջ էր, ու վերէն վար ճեղքուած տարտախն մէ-
ջէն կը նայէր դուրս: Իր քով, շատ երկար երկու անթացուպեք կային, ու
ինք՝ խո՛ր, խաղա՛ղ քունի մէջ էր:

Արդեօք մ'ըր ու ինչպէ՞ս վերաւորուեցաւ, — հարցուցի ինքզինքիս, —
ո՞վ կատարեց նախնական դարձանումը եւ ո՞վ վճարեց անթացուպերուն հա-
մար... Իր պառկած տեղը, որ առաւօտուն շուք ըլլալու էր, Հիմա ամբողջո-
վին արևու մէջ էր: Իր դէմքը, որ հովէն ու արեւէն եփուած, թխացած էի
տեսած միշտ, Հիմա ճակնդեղի պէս կարճրած էր, քրտինքներու մէջ: Վերջը,
մինչև անութներուն տակ, թաց էր:

Միջօրէ էր. ամէն կողմէ յորդոզ բազմութիւններ կ'անցնէին վեր ու
վար: Իր վրայ ուշադրութիւն ընող չկար:

Երկու ճւղղուն աղջիկ, երբ իր գտնուած տեղը հասան, կանգ առին:
Միծաղը սրբուեցաւ իրենց դէմքէն:

— Մէրի՛, — ըսաւ մէկը միւսին, — խեղճը վերաւորուեր է: Մե՛ղք...
Գիտե՛ս, պուրպոնէ զատ ուրիշ բան չի խմեր:

— Ինչէ՞ն գիտես:
— Քովի պարսպ շէր միշտ պուրպոնի շէշ է:

— Ոոչ Փրէնտիս նախընտրած խմիչքն է: Իրեն համար միշտ շիշ մը
կը պահեմ սենեակիս մէջ. սուղնոց խմիչք է:

— Եթէ սուղնոց խմիչք է՝ առ մուրացիկը ինչպէ՞ս կընայ ամէն անգամ
զայն գնել...

Միւսը պատասխան չտուաւ այդ հարցումին:

Միրուն, մատղաշ աղջիկներ էին: Ինչպէս իրենց հասակակիցները, ի-
րենք ալ, օրուան տաքը պատրուակելով՝ կէս մը հանուեր էին: Բարակիրան
էին .բարեձև: Նոր ուսիլ սկսող կուրծքերով ու շնորհալի բազուկներով կը
թուէր, թէ ձեւով մը յաջողած էին բռնել գարնան օր մը կապոյտ երկնքին
վրայ թափառող ամպ մը ու անկէ հագուստ կարել իրենց համար:

Գնում մը ընելու համար մտայ մերձակայ խանութ մը, ուր հերթի
սպասեցի. երբ դուրս ելայ, բազմութիւն մը հաւաքուիլ սկսած էր սինակոկի
ճուղքին առջև:

Մարդը արթնցած է ու բարեսիրտ հետաքրքրուողի մը իր արկածին
մասին կը պատմէ, խորհեցայ: Եռտով յայտնի եղաւ, թէ սխալած էի:
Մարդը իր նախկին պառկած տեղը կը ննջէ՛ր խաղաղ քունով: Մունկի վի-
րակապէն սուղուող արիւնը, կուպրի պէս սեփ-սեւ, շորցած էր ու ինք կը
շարունակէր քրտնիլ: Մտքէս անցաւ, որ արթնցնեմ զինք ու թելադրեմ, որ
չուքին մէջ փոխադրուի, բայց քաջութիւնը պակսեցաւ ինծի:

Սանդուխին վրայ հաւաքուած բազմութիւնը հրժտակելով՝ բարձրա-
ցայ մինչև վեր, ստուգելու համար, թէ ի՞նչ էր այս արտասովոր իրարան-
ցումին պատճառը: Այնքան շատ էին ելլող-իջնողները, որ դժուարութեամբ
հասայ վեր:

— Փլի՛զ, փլի՛զ, ճամբա՛յ տուէք, — կը պաղատէր աղջիկ մը, — սառ
ջուր բերելո՛ւ կ'երթամ:

— Բան մը ըրէք, ոստիկան մը կանչեցէք, ան կը դիտնայ ընկիւղը...

- Վիճակը յուսահատական է, կը մեռնի'...
- Բերանը բացէ՛ք ու լեզուին վրայ կտոր մը պաղպաղակ գրէ՛ք...
- Հոգածութեան առարկան շուն մըն էր, Զուրի պէս դետինը փռուած, շորս ոտքերը երկարած, աչքերը կիսախուփ՝ կը հեւար:
- Արեւահար է եղած, ազուր պաղ տառչ մը կ'ուզէ, — մտնեց մէկը:
- Տուչը ինչպէ՞ս կարգադրենք... Գլխուն սառ դրէ՛ք:
- Մայ կա՛տ... Լէսիին կը նմանի:
- Արդեօք տէրը ո՞վ է, մօտակա՞յքն է...
- Կորսուած ըլլալու է:
- Ծունները շնն կորսուելը, կորսուողները կը դաննն, — առարկեց մէկը:
- Առ մէկը կորսուած ըլլալու է, քաղցած է, օրերով բան չէ կերած. տեսէ՛ք կողերուն ճաղերը կը համբուին:
- Պաղ-պաղ ի՞նչ մը լեցուցէ՛ք կողորդէն վար:
- Կաթը աւելի օգտակար է:
- ◆ Սա դիմացի դեղարանէն դոյլ մը ջուր ուղեցէ՛ք ու բերէ՛ք լեցուցէ՛ք գլխուն, անմիջապէս կը բանայ աչքերը:
- Անոնք մարդո՛ւ համար ջուր շնն տար՝ ո՛ւր մնաց շունի'...
- Մինակոկի ժամկոչը գտնելու է, ան կը գիտնայ ընելիքը:
- Հիմա լայն, տարածուն սանդուխտ լեցուած էր հոգածուններով ու խորհրդատուներով, սրտցաւ մարդերով, կիներով, աղջիկներով...
- Վարը, մէկը դպաւ փրաւոր քնացողի ծունկին ու ան շարժեցաւ, բացաւ աչքերը, քնաա՛ նայեցաւ շորս կողմը, ու խելքը բանի մը չհասնելով՝ դարձաւ կողին ու քնացաւ:
- Մարդուն վէրքին դպար, — ըսաւ մէկը կէս յանգիմանական:
- Թող ան ալ անասունի պէս ճամբուս վրայ շպառկէ՛ր, — արդարացաւ միւսը, — տուն-տեղ շունի՛, թող երթայ հոն շնթուկի:
- Վերջապէս հրեաներու աղօթարանին կողքի դուռը քայտեցաւ ու սեւամորթ գունապանը գուրտ ելլելով՝ տեսաւ ամբողջը, քանի մը քայլ յառաջանալով՝ տեսաւ դետինը պտուկած շունը ու ձեռքը աղտոտ քաւէքիին տակ կոխելով, սկսաւ քերել գլուխը:
- Կը մտածէր:
- Լայն բերանով աման մը ջուր բեր ու գիր քովը, — ըսաւ մէկը՝ անոր տուր մը երկարելով:
- Մէջն ալ սառ լեցուր, — ըսաւ ուրիշ մը եւ, իր կարգին, օփ մը մանրուք դրաւ սեւամորթի ափին:
- Մարդը, միշտ իր գլուխը քերելով, մտաւ եկած գուննէն ներս, ու պահ մը ետք վերադարձաւ ապսպրուած բաներով:
- Ծունը դեռ կը հեւար, իր օրհասը կ'ապրէր կարծես:
- Պիտի մեռնի, անասնաբոյժ մը կանչելու է, — ողբաց աղջիկ մը:
- Առջի օր, հիւանդ հօրս համար բժիշկ մը գտնելը անկարելի եղաւ եւ ոտիպուած ոտաթիկանութեան օգնութեան դիմեցինք, հիմա առ շունին համար կը խորհի՞ս, թէ անասնաբոյժները իրենց հետաձայնին քով կեցած մեր հրաւէրին կը սպասեն հոս վազելու համար, — դիտել տուաւ մէկը:
- Մինակոկի գունապանը կրկին ներս գնաց ու ետ եկաւ՝ իրեն հետ քերելով քառուկէ երկար խողովակ մը, որուն մէկ ծայրը միացուց պատին վրայ գտնուող րնդունարանի մը եւ, ջուրին հոտանքը բանալէ առաջ՝ հարկ տեսաւ զգուշացնել ներկաները:
- Զուրը պիտի բանամ, բացուցէ՛ք, հեռացէ՛ք, ես հիմա անոր այն-

պիտի տուչ մը կու տամ, որ...

— Հեռացէք, տեղ բացէք, Սամը շունին տուչ պիտի տա՛յ, — կըրկնեցին շորս կողմէն:

Սամ ըստաւոր բացաւ ջուրի խողովակին փակը ու հոսանքը դարձուց գետինը պատկած հեւացող շունին վրայ:

Ազգեցութիւնը եղաւ անմիջական: Ամբոխը սրտադին գոհունակութեան զօ՛խ մը քաշեց ու շունը բացաւ իր աչքերը, անգամ մը նայեցաւ շորս կողմը ու գլուխը նորէն դրաւ թաց գետինին վրայ:

Պահ մը ետք, զիչ մը դեղեւելով, ելաւ ոտքի ու թօթուրեցաւ:

Ուրախութեան ալիք մը անցաւ ներկաներու վրայէն: Յրուիլ սկսան:

Կարճ փէշ աղջիկները մանաւանդ, զիչ մնաց գրկուին ու համբուրուին իրարու հետ: Իրենց գործերուն գացին բարի գործ մը կատարած ըլլալու մեծ գոհունակութեամբ լեցուած սրտերով:

— Ատտաւ՛ած իժ, ետ կործնեցի թէ պիտի մեռնէ՛ր...

— Ե՛ս ալ այդպէս կարծեցի:

— Ե՛ս ալ:

— Եուններն ու կատունները այդքան շուտ չեն մեռեր, կատուններուն համար մանաւանդ կ'ըսեն, թէ իննը կեանք ունին:

Այսպէս հրճուազին վիճելով դացին իրենց գործին:

Ամբոխին ու շան հեռանալէն ետք, պահակը սրունց լուալ սինակոկի սանդուխները: Սկսաւ վերնամասէն եւ աստիճանաբար ջուրի ցայտքը իջնացուց ցած: Աղտոտ, տաք քարերուն վրայ տարածուող ջուրը սկսաւ շոգի արձակելով հոսիլ վար: Հասաւ վարը պատկած մարդուն:

Անցորդ մը, կացութիւնը չափելով, ջանաց արթնցնել գինովը ու թելազրէլ, որ անդափոխուի:

— Ե՛լ, մի պառկիր տաք արեւուն տակ, թրջուեր ալ ես...

Յետոյ խօսքը ուղղեց սեւամորթին.

— Հէ՛յ, տխմա՛ր, չե՛ս տեսներ, սր հոս մարդ է պատկած...

— Ի՛նչ մարդ, ես մարդ չեմ տեսներ, դուն այդ գինովը մա՛րդ կը համարես... Յետոյ քու ի՛նչ գործն է, հող պառկողը եղբա՞յրդ է...

— Հիմա կու գամ քովդ ու քեզի կը սորվեցնեմ, թէ պառկողը եղբայրըս է թէ ոչ...

Իր սպառնալիքը դործադրելու վրայ էր, երբ երկու հողի, հաւանաբար գործակիցներ կամ ծանօթներ, մտան թեւերը ու փորձեցին հեռացնել զինքը:

— Քա՛ւ ան, թէ՛ս, երեխայամիտ մի՛ ըլլար...

— Աղէկ, չեմ կրուիր սեւամորթին հետ, բայց պէտք է վարը պատկած խեղճը արթնցնել, աղտոտ ջուրերուն մէջն է...

Քանի մը քայլ ետ երթալով՝ ծոկեցան քնացողին վրայ եւ ուսէն բռնած մեղձօրէն ցնցեցին զինք:

— Ե՛լ, հոս տաք է, դնա՛ տուն կամ գէթ պառկելու զով տեղ մը գտիր:

Դժուարութեամբ բացաւ աչքերը: Շլմորած նայուածքով շորս կողմը դիտեց ու բան մը չհասկնալով՝ փորձեց նորէն պառկիլ:

— Թէ՛տ, անօդուտ աշխատանք է, ժամապահառութի՛ւն, երթա՛նք...

— Եթէ կ'անգապարէք, դուք դացէք:

Միւսները կ'անգապարէին: Գացին:

Ինք, մինակը, արթնցուց քնացողը, հանեց ոտքի ու անթացուզերը դըրաւ ուտերուն տակ:

— Գնա՛ տուն, պիտի անձրելէ, — թելազրեց անոր:

Գինովը, որ ա՛լ լման մը արթնցած էր, իր անծանօթ բարերարին առջեւ խոնարհութիւն մը ըրաւ, ձեռքը բռնելով շնորհակալութիւն յայտնեցօրհնեց .

— Թող Աստուած օրհնէ՛ք զեզ :

Երբ միտակ մնաց, ձեռքով շօշափեց տարաաին ետեւի գրպանը ու զայն պարագ գտնելով՝ դժգոհութեան շարժում մը ըրաւ : Անթացուպերը խնամքով քով քովի գրաւ սանդուխին վրայ ու նստեցաւ անոնց քով :

Մտածոյր, շուարած երեւոյթ մը ունէր : Ինծի թուեցաւ, թէ կը Զսանար յիշել, թէ ի՞նչ պատահեցաւ իր ծունկին, ե՞րբ եւ ո՞ւր . . .

Գլուխը կախած էր սեւ արիւնով ծեփուած ծունկին ու կը խօսէր անոր հետ, շեւ գիտեր ինչ . . .



Ծոռ էր : Ամպերէն դեղնազոյն տաքութիւն մը կը հոսէր վար եւ անշնչի կը դարձնէր հրանիւթի ծուխով արզէն իսկ յազեցած օդը :

Յանկարծ երկինքը գոտաց ու անձրեւի քանի մը խոշոր կաթիլներ ինկան գետին : Երկինքը, այս անգամ աւելի ուժգին, նորէն գոտաց՝ ու սեւ մեյտնի վրայ լուսեղէն գիծեր քաշածի պէս բազմաթիւ կայծակներ իջան հոս ու հոն : Երկնաքերները դողացին ու գրէթէ մթնցաւ : Փախող փախողի :

Ես ապաստանեցայ դիմացի խանութին արեւարդելին տակ : Հիմա անձրեւը կի՛նէր յորդ ու շատաշաղին ու կը փչրուէր գետնի հնոցին վրայ : Լայն պողոտան գետ դարձաւ . . . ամէն կողմէ կարկաշող ու մունդոյ հեղեղներ կը հոսէին : Յորդառատ ջուրը վար կը հոսէր նսեւ սինակոկի սանդուխներէն : Գինովը անոնցմէ մէկուն վրայ իր լման հտակով ուղիղ կայնած՝ խաչուածի նման թեւերը բացած էր . գլուխը ետ էր նետած ու անշարժացած :

Ատեն մը ետք շտկուեցաւ . ափերը բերաւ իրարու ու անոնց մէջ բրունած ջուրով զէմքը լուսալու շարժումներ ըրաւ, ափերը իրարու շփեց, երեւակայական օճառի կտոր մը փրփրեցուց, ու դէմքէն ետք լուաց վիզը, դանկը, թեւերը, կուրծքը :

Այս գործողութիւնը աւարտելէ ետք, իր երկար թեւերը կախեց վար եւ անշարժացաւ :

Ուրախ ըլլալ կը թուէր : Չեմ գիտեր կը նշմարէ՞ր անապարանքով հոս ու հոն վազողները, կամ անոնց վրա՞յ է, որ կը խնդար միտքէն . . .

Ոչ ոքի դէմ որ ունէր : Ոչ ոքի շարիք չէր կամենար : Եթէ նոյնիսկ կարենար յիշել, թէ որ մէկը իր թարմ վէրքին էր դպած ու արիւնած զայն, պիտի ներէր անոր ալ :

Իրեն համար աշխարհը ապրելու սքանչելի տեղ մըն էր : Կը սիրէր բոլոր մարդերը, շէնքերը, սոսիկնաները, իրեն ողորմութիւն աւուողները, սինակոկի պահապան սեւամորթը, որուն հետ մշտական անհամաձայնութեան մէջ էր :

Ու եթէ իր վէրքը երբեմն չկոտտար, լման մը երջանիկ պիտի ըլլար : Բայց ի՞նչ, ի՞նչ կար մտահոգուելու . վաղը միւս օր կը բուժուէր վէրքը ու ինք ա՛լ անթացուպի պէտք չէր ունենար :

Ոտքի ելաւ . նայեցաւ անձրեւի մոխրազոյն շղարչին տակէն քիչ մը պղտոր, անորոշ զիծերով երեւցող բարձր շէնքերուն եւ իր առոյգ ձայնով սկսաւ երգել :

Պողոտան մաքրուած էր ազաէ ու փոշիէ : Հիմա անոր վրայէն ծորող ջուրը գրեթէ մաքուր էր : Յորձանքը մաքրած էր զայն :

Հիմա անոր երկայնքէն հոսող ջուրը երգողի սրտին նման յստակ էր :

ԱՐԱՄ ՀԱՅԿԱՋ

Յ Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ա Գ Ո Ւ Լ Ե Ա Ն**Ք Ա Ղ Ա Ք Ի****Կ Ե Ա Ն Ք Ի****Հ Ր Ա Շ Ք Ի****Մ Ա Ս Ի Ն****ՍՊԻԱՑԱԾ ՍԷՐ**

Երէկ նայեցայ ծիծեռնակի մը պպտիկ աչքերուն

Երազներուս մէջ
բարկացած ջուրը ովկիանոսներուն
դեռ կը պղտորի
դեռ կը վարնուի
ցամաքամասին

շունչս կը լեցուի
մտորումներով

դարձեալ նայեցայ ծիծեռնակի մը բարի աչքերուն
քնքռութիւն տեսայ
նոյնիսկ
տխրութիւն

ծանօթ չեն կարծես մեծ քաղաքներուն
ծանօթ չեն
կարծես
քաղաքակրթուած մետաղէ մարդուն

քաղաքի մարդը կրնա՞յ հաստատել
որ իր երկրին մէջ ծիծեռնակներ կան
այսօր նայեցայ
մայթերէն անցնող մարդոց աչքերուն
ապակի աչքեր
շփոթ ու վայրի
կոհուով լեցուն

digitised by A.R.A.R.@

վախով
տաժանքով
սպիացած սէր
սիրոյ սպիներ
ոչ մէկ քնքշութիւն

աչքի հիւանդութիւնները քազմապատկուած են
ակնոցաւորներ կը տեսնեմ ամէն քայլափոխիս

Խաղաղականը դեռ կը պարնուի
մեծ
քաղաքներուն
ու կը պղտորի

պիտի կոռէի
անկեղծօրէն
ապրումներու զեղեցկութիւնը պաշտպանելու համար

անիմաստ կռիւ

ինչպէս պաշպանուիմ մեծ քաղաքներէն
ինչպէս պաշտպանուիմ
ովկիանոսներու պղտորած ջուրէն

Լէոնարտոյի նկարներուն մէջ հանգիստ կը փնտռեմ
դեռ չպղտորած
ովկիանոսի ջուր
չսպիացած սէր

Բամպըրանտին մէջ
այլազանութիւնը
կեանքին եւ մահուան
զեղեցկութիւնը
լոյսին
մթութեան

իսկ նորերուն մէջ
ծիծեռնակի մը տխուր աչքերը

ինչպէս պաշտպանուիմ մեծ քաղաքներէն
ամէն ինչ մեծ է մարդուն համեմատ
իսկ ես մարդ եմ
չէ՞
բարդոյթներով լի
ես պիս կը կարծեմ
առաւել խելօք
ասուն ասուն քան անասունը
ասուն չէ՞ն արդեօք աչքերը կովուն
ասուն չէ՞ն միթէ խոշոր աչքերը

սուանակներուն
 աւելի խելացի հայեացքներ
 չունին
 քան ակնոցատր ու խաբկանքով լի
 աչքերը
 մարդուն...

Վ Ա Ն Կ ՈՒ Կ

Քաղաքներու մէջ
 սրտի տրոփը քեզի փոխանցող մարդ չէ մնացած
 աչքերով համբուրող մարդ չէ մնացած

Ներաշխարհիս մէջ
 դաշտեր հերկեցի
 եւ երկինքին չափ բաց տափաստաններ
 գոյներ երկնեցի
 բազմապատկեցի քերքը հոգիիս
 երազներուս մէջ
 դարձեալ ցանեցի

արեւածաղկի հմայքին առջեւ
 տիրապետուելու երկիւղն ունեցայ

բնութեան երգին շշուկն սգացի

եւ առաւօտ մը
 հոգիիս մէջէն նոր-նոր արեւներ
 ժպտեցան ինձի

Նոր հորիզոններ բացուեցան յանկարծ
 նոր երկինքներու
 առտուն արթնցայ
 պատուհանիս շուրջ տերեւներ տեսայ
 տիեզերքներէն բերուած են
 ըսի.
 ծաղիկ են
 ըսի
 նայեցան դէմքիս
 ժպտեցան կարծես

բազում գոյներու
 թանգարան բացին
 ներաշխարհիս մէջ

Գուցէ՛ գայ օրը
բոլորս իրարու աչքերուն նայինք
զիրար հասկնանք

սեւը ճերմակին
ճերմակը սեւին
ու մարդը մարդուն

չնուաճուող մերձեցումը մարդու տենչանքին
փախուստ ներքինէն
եւ վերադարձ դէպի հոգին

պղտորած ջուրի նմանող տրամադրութիւն

այս գիշեր թերեւ
տասնեակ մը աստղեր վար թափին
ափերս այրեն

այս գիշեր թերեւ հրաշքի գիշերն է
արեւը ծագի ճիշդ կէս-գիշերին

այս գիշեր թերեւ վերածնունդ է
չարացած մարդիկը ցնանան
եւ առաւօտուն մաքուր աչքերով նային աշխարհին
գիշերը եկաւ
հրաշքներն եկան տունս քանդեցին
մի հարցնէք ինչու

Հրաշքներ չկան երկինքէն անդին

տիեզերքն ի՞նչ է
— կեանքին ու մահուան
անբացատրելի խորհուրդը խորին

աստղերը ի՞նչ են
— երակներուն պէս անջօշափելի
յաւիտենութեան խորաններ
լոյսի

ճառագայթն ի՞նչ է
— հողին կեանք տուող
կեանքին համ ու հոտ
մեր ներաշխարհին
հազար տեսակի տրամադրութիւն

երկինքը ի՞նչ է
 – տիեզերքներու կապոյտ հայելին
 մտորումներու բաց տափաստանը
 անհունէն անհուն

արեւը ինքնին դեռ քանի-քանի
 հրաշք պարփակող
 երկրի թագուհին

հրաշքներ չկա՞ն երկինքէն ասդին
 ապա բերկրանքի
 յոյսերու
 սիրոյ
 անշօշափելի կգացմունքներու
 ճառագայթն ի՞նչ է...

ՓՈՐՁՈՒԹԵԱՆ ՃԱՄԲԱՆ

Մտորոշութեան ու կեանքին միջեւ
 հորիզոններ կան
 նախավերջին մասնիկն եմ տարածութեան մէջ այդ
 լայն
 արեւին հետ կը փոխուիմ
 կը մթնամ
 կը լուսամ
 գոյնի տարբեր երանգներով կը լեցուիմ

օրն եմ ես
 տրտմութիւն եւ ուրախութիւն փոխանցող
 ճառագայթներ կ'արձակեմ

կը թաւալիմ անդադար
 ու կը փնտռեմ գոյութեանս միտք-բանին

ինձմէ ասդին երկիրն է
 ինձմէ անդին երկինքը

յաւիտեանս թափառական ճամբորդն եմ
 երբ կը հասնիմ հորիզոնին
 լոյսի մէջտեղն ու մթութեան
 դարձի ճամբուն կը նայիմ
 տառապանքներս փոքրացած կ'երեւին

յաճախ կ'անցնիմ հորիզոնէն ալ անդին
 եւ կը մտնեմ դէպի աշխարհի անստուեր

գոյութիւնս կը դադրի
կը ձուլուիմ ես մարմինիս
տենչանքներս իոգիիս
կ'ամբողջանամ
կ'անէանամ
ազատութեան կը հասնիմ

❖❖

Նման եմ մէկուն
որուն չտեսայ չհանդիպեցայ
երազներուս մէջ

տգեղ անկիւններէն նայեցայ կեանքին
եւ գեղեցկութիւնը տեսայ
միմիայն

շուքին կեցայ
արեւի լոյսին հաճոյքն զգացի

կեանքը տարբադադրեցի
արեւի
շուքի
եւ գեղեցկութեան

եւ քանի որ ձերբազատուած եմ
թեաւոր ստուերներէն
հոգիիս մէջ գեղեցկութիւնն զգացի
իբրեւ կեանքի ստուեր
եւ կեանքը իբրեւ
մթնցող
լուացող
ստուերն արեւին

❖❖

ծովէն գեղեցիկ տեսարան չկայ
անընդհատ փոխուող
բայց նոյնանման
թող մենք մեռնինք եւ լոռփիւնը ծնի

ահա կը տողանցեն պզտիկ ու մեծ աչքեր

անկշիռ վապքը ծովու
ալիքներուն
անիմաստ սկիզբէն
մինչեւ անհեթեթ վերջատրութիւնը

տողանցքը ժամերուն

չտիրապետուիլ
 ձեալիոխութեամբ
 հրաշքներ փնտռել
 ակնոցատրոսերու անփայլ աչքերուն մէջ

եւ յեղափոխուիլ

անորոշութիւն
 արեւածաղկի ընդարձակ դաշտեր
 յոգնած եւ յուզուած եւ յուսալքուած
 արշաւող ձիեր
 զգացումներու ողբերգութիւնը
 բացուող եւ գոցուող թթածակերուն
 ձիարշաւէն առաջ
 ձիարշաւէն յետոյ

պիտի հասնինք մահուան

եւ լուսեան մէջ պիտի չդադրի
 ահեղ մռունչը ծովու ալիքներուն
 պիտի չդադրի
 շրջիւնն արեւին
 արեւածաղկին

✽

ուծս չներեց առաւել եւս
 զոհաբերութեան
 բայց չընկրկեցայ
 թափառականի այս հոգիովս

անվերջանալի երազէն յոգնած
 անցեալս ամբողջ
 քնքշանքը կեանքիս
 զոհաբերեցի
 եւ ապրումներուս ամէնէն նորին երանգներն անզամ
 թափառականի ամենադաժման հոգեբանութեամբ

կը տեսնեմ հիմա
 դիմացս դրուած
 հայելիները

կը տեսնեմ ես զիս
 բան մնաց միթէ զոհաբերելու

չմտածեցի
 ապրեցայ միայն
 եւ այդ ընթացքին
 բաղձանքներուս մէջ

երջանկութիւնը եւ որոնեցի
 ծարաւի շունչով
 ամէն աղբիւրի պղպջակին մէջ
 երազանքի մը
 փլատակները
 եւ շօշափեցի

տիեզերքին չափ նոր աշխարհներու
 տենչանքն ամէն ժամ
 եւ երազեցի

թափառումներէս բան չսորվեցայ
 ամէն տեղ մարդիկ
 միօրինակ են
 չար են կամ բարի
 ձանձրոյթի բարդոյթ
 ու չսիրելու
 ու չսիրուելու
 մտահոգութիւն
 կառչելու տենչանք
 քարին կամ ցուրին եւ կամ երկինքին

իսկ եւ ուզեցի կառչիլ երեքին՝
 երկինքին
 ծովին
 ցամաքամասին
 եւ հոգիս մէջ
 ուզեցի սեղմել տիեզերքը ողջ
 ուզեցի դառնալ անէութեան չափ
 մեծ ու կատարեալ

թափառումներէս բան չսորվեցայ
 չկարողացայ կառչիլ եւ անոնց
 բայց
 տիեզերք մը մնաց երազիս փրփուրներուն մէջ
 ովկիանոս դարձած անհուն երազիս
 փխրուն ու փրոզ
 բայց երբեւիցէ չվերականգնող
 փրփուրներուն մէջ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՆԱԳՈՒԼԵԱՆ

«Գրական քերթի խմբագրական կո-
լեգիան թերթի 1973 թվականի ժրջա-
նակը շնորհեց .

Ռաֆայել Արամեանին՝ «Աշնան օր»
պատմուածքի համար (Թիւ 51) :



1920ին եւջ աշխարհ եկած ու Համալիարեւային Երկրորդ պատերազմի սոջ հակա-
ամարտներուն ժէջ հոգի կազմած հայրենի աշխարհի գրողներէն է Ռաֆայել Արամեան, որոնց
իրենց հայրենիքին, արիւնին ու ժշակոյթին հաստատազգիք ստորագրած՝ յիսունական
թուականներէն զիջ ժը սասլ իջն հրազարակ ու իրենց հետ ընթաց աշխարհ սարսափներով,
արեւելափերով ու թարմութեամբ կարծան խորհրդանշող գրականութեան երրորդ սերունդին
ներկայացուցչական ղէճքերը :

Ինչպէս յոճարի կը պատահի գրականութեան պատմութեան ժէջ՝ սերունդին թէ՛ բա-
նաստեղծները (Սեւակ-Դասութեան) եւ թէ՛ զննաչափները (Թամրազեան-Աղաքարեան) ունի
արտը համարուի հասան, ժիւղչեւ արձակագիրները (Արամեան-Սարգսեան), հակառակ իրենց
սասնամայրող արձանիքներուն՝ ասորիներ եւջ ժիւղի ընթերցողին ժաջին գրուելին իրենց
արձանի տեղը :

Մամուլին ժէջ երեւցած ասորիք բնագուտներու պատկանող իր գրութիւններէն
զոս՝ Ռաֆայել Արամեան լոյս ընծայած է հայրենազուրկ ժաջուան, հայրենի հողին, ժիւր
ձնագործութիւններուն ու ձնագործներուն խոճիքներով բարսխուն շարս (ժիւր Ժանօթ)
արձակ գործեր՝ — «Ռուրիկեան երթոյրներ», «Ձիւրամ ձիւր», «Մեան Կազաքի պարսպ-
ների տակ», եւ «Ով կարմնաշիւ», սրտեք, բուրբ ուլ, կը վկայեն արուեստագէտ գրողի ժը
ժաթն եւ, նովին բունի՝ տնին ժաջուան ու թուութեան աշխարհին բիող կենսատու շխտու-
թիւն ժը, չթամբան ձիւրով կազմուած հրազուրի բնակարանը, ժեանս զաղաքներու տնը-
տնի ձաշի ու զարմանալի բազուճ երբերանգներ :

Դիժաջի էլին զոյս կու տանք «Գրական քերթի խմբագրութեան պատկան Արամ-
եանի «Աշնան օր» պատմուածքը, որ կը ձեկանցէ գրողի արձանիքներէն ջանի ժը հասը,
— ժիւրլորս կազմելու կարողութիւնը, ժամանակներու զգախութիւնները թանձրացնելու
կերպը, արամութիւնը տնտեսելու ժուճկալութիւնը, պատկերուող ոճը, եւայլն : «Ռաբի ըն-
թերցուճ», — պիտի ըսէր Արամ Հայկազ :

ՌԱՏԱՅԷԼ ԱՐԱՄԵԱՆ

Ա Շ Ն Ա Ն Օ Ր

Դու ասացիր.
— Առանց երաժշտութեան չեմ կարող ասրել:

Երբ ասացիր, ոչ մի տեղ նուազ չը կար:

Յետոյ ասացիր.

— Միթէ չե՞ս լսում լուսութեան ձայնը:

Լսում եմ: Իմ մէջ ապրող անորոշ, տարտամ նուազները հետու-հետունեփեց յուշերի բեկորներ էին բերում: Մի ծրուէն մեղեդի անցած-զնացած, նուիրական անձրևի բուրմունք է բերում, յետոյ մանկական խաղերով լեցուն մի երեկոյի գովութիւն դիպչում է գէմքիս, եւ ճոռում է մի Հին դարպաս: Մեղեդին զայլու-զնում է, յետոյ նորից յայտնուում է որպէս երգ եւ, տաանձնանայով, ձեւ ստանալով, տանջում է ինձ այնպէս, ինչպէս մի ժամանակ տանջել է սեւ անդրափարտիքիս վրայի շէկ կարկատանը, որ մայրս էր դրել: Տարիների խորքից ես լսում եմ իմ ձայնը: «Մա, այ մա, սեւի վրայ գոնէ սեւ կարկատան գնէիր, ես ո՞նց դպրոց գնամ»: «Մեւ լինէր, սեւը կը գնէր. կարեւորը ծակ չը լինի ու չմրսես: Երբ մեծանաս, նոր շայվար կը հագնես»:

Ձեռքս տանում ու ստուգում եմ: Կարկատան չկայ. ափսոս, որ կարկատան չկայ: Նորից ականջ եմ դնում: Հարազատ, մեղմ ու կրծքային ձայն եմ լսում, մի՞թէ մայրս է: Ի Հարկէ մայրս է, այդպէս միայն նա էր երգում:

ՓԱՄԻ ԳՌԱՆ ԳՈՂԳՈՂԱԷՆ
ԿԱՆԿԵԱՄ Է ՄԻ ԱՂՔԱՏ ԿԻՆ...

Մերտս ճմլում է. ուզում եմ բրանել նրա մեռքը ու գնալ փողոցն ի վար: Ցանում եկեղեցին է, եւ պէտք է որ աշխարհից վաղուց հեռացած մայրս այնտեղ լինի: Մի պահ, ուզում եմ պտտմել, թէ ինչպէս, երբ մայրս երգում էր, իրեն թւում էր, թէ աղքատ կենջ փոխարէն ինքն է կանգնած ժամի դռանը:

Այն ժամանակ ես դեռ չէի հասկանում, որ մարդիկ կարող են խղճալ իրենք իրենց եւ խղճալով մի սրտածմբիկ նակատազիր յօրինել: Յետոյ ինքս էլ յօրինեցի: Դա մի սրբ աղայի պտտու-թիւն էր, որին խնամում են ուրիշները, իսկ ինքը չգիտի հարազատ մօր եւ Հօր մասին: Նրա Հայրն ու մայրը աշխարհում փնտրում են իրեն եւ չեն գտնում: Յետոյ, շատ յետոյ, ժամի դռանը դողդողացող կինը կերպարանափոխում, իմ մայրն է դառնում, իսկ ես՝ նրա կողքին կուշ եկած մի սրբուկ: Եւ խղճում եմ ինքս ինձ:

Հիմա մօրս ձայնն եմ լսում, նա երգում է հետու-հետունեփեց, եւ նրա կրծքային, մեղմ ձայնը ինձ տանում է տարիների խորքը: Դպրոցականի պատասակը ուտիս վազում եմ մեր Հին փողոցով, վազում եմ, որ հարեւանի աղջկը, նա, որ մեծ, թիթեռնածեւ ժպտաւէն է կապում մազերին, շտեմնի սեւ անդրափարտիքիս շէկ կարկատանը: Իսկ կարկատանը մայր մտնող արեւի նման Հըր-գեհնում, բոցկլտում է ուղղակի նստու-

կիս եւ մինչեւ ժութը չընկնի, չի մարի, չի ձուլուի տարատիս սեւին: Հասնում եմ տուն, մի կողմի վրայ թեքուած քարէ սանդուղքներով սլանում եմ վեր եւ պատրաստում եմ ողբալու կարկատանըս, երբ տեսնում եմ ծօրս, որ նստած պատի տակ լաց է լինում, լաց է լինում եւ խնամքով կարկատում է եղբօրս հընամաչ վերնաշապկի օձիքը, լաց է լինում ու լացի միջից երգում է.

ԺԱՄԻ ԴՌԱՆ ԴՈՂԴՈՂԱԼԷՆ
ԿԱՆԳՆԱՄ Է ՄԻ ԱՂՔԱՏ ԿԻՆ...

Սեղանին մեղրահացի նման ծակ-ծակ հացի մի կտոր է դրուած եւ մի չէկ սոխ, որ կտրուած է ու արծաթին է սաւթս:

— Կե՛ր, — առում է մայրս, — գըպըցից ես եկե՛լ, կե՛ր:

Յետոյ արքում է աչքերը, նորից երգում ու կարկատում է եղբօրս հնամաչ վերնաշապկը:

Քո մայրը գերձակուհի է եղել, կարող պահել, մեծացրել է ձեզ երեքիդ ու պէտք է որ կարկատանների հմայքը ամէնից լաւ դու հասկանաս, քանի որ պատմել ես, թէ ինչպէս ուրիշների բերած չթերի մնացորդներից աթոռների համար զոյնզոյն նստարարներ էր կարել: Իսկ իմ մայրը կարում էր վերձակի երեսներ: Այն ժամանակ ծօրս մատնեմատի ոսկէ մատանին արդէն վաճառել էինք՝ մեծ եղբօրս ծանրոց ուղարկելու համար: Մայրս արծաթէ մի մատանի էր կրում, որ հիմա իմ մատին է եւ փոքր է մատնեմատիս ու մի քիչ մեծ՝ ճկոյթիս: Ինչո՞ւ յիշեցի այս բոլորը:

Մի րատ ճմլում է: Թէպէտ նրանք՝ հայրս ու մայրս, վաղուց չկան, բայց այնտեղ, ժամի դրանք մի աղքատ կին ու մի աղքատ ծերունկ պէտք է որ լինեն: Էլ ի՞նչ եկեղեցի, առանց ողորմութիւն խնդրողների: Եթէ այսպէս անընդհատ ցած զնանք, կը հասնենք եկեղեցուն ու կը հանդիպենք նրանց, այն աղքատ կնոջն ու աղքատ ծերուկին, եւ որքան էլ օրը արեւ

է, նրանք զողողալով կը մեկնեն իրենց ձեռքերը, եւ օդի մէջ սառնութիւն կը լինի, մինչեւ ոսկորները թափանցող ցուրտ: — Մրտ՞ւմ ես:

— Ո՛ւ, — խուսափում եմ պատասխանից: — Ինչո՞ւ պէտք է մրսեմ:

— Ո՞վ դեմք, — առում ես զու, — Մարոյեանը առում է. ցուրտը մեր մէջ ապրող ցուրտն է:

Ու զու մի տեսակ կուչ ես գալիս: Երեւի յիշում ես ձեր չվառուող վառարանն ու ծօրդ, որ վառելիքի ետեւից գընում էր մերձակայ անտառը: Հաստատ, զու յիշում ես հենց այդ, իսկ իմ մէջ ապրող ցուրտը զանոնում է մանկութեանս օրերի ձիւնոտ մի բակ, մերկ ծառի ճիւղին թառած ցրտահար ճնճողակների մոխրազոյն բողբոջներ, սառած տոտիկներ: Մայրս տոտիկներս շփում է ափերի մէջ եւ անհիծում հնակարկատին:

Հնակարկատը նկարիչ որդի ունէր ու առում էր որդուն:

— Արհեստդ լաւը չէ, նկարը ուշ է մաշում, ու եթէ չպատուեն՝ երբեք չի պատուուի: Մորդուս արհեստը այնպիսին պէտք է լինի, որ արած զործը շուտ մաշուի եւ յաճախորդը նորից պատուիրի:

Ցուրտ օրերին հնակարկատը ոտքերի տակ նաւթ-օճախ էր վառում ու իրեն խղճալու համար առում էր.

— Արհեստս աչքիս լոյսն է խլում. մի օր կը կուրանամ ու մէկը չի լինի, որ ձեռքս բռնած տեղից-տեղ տանի:

Այսպէս է առում հնակարկատը եւ, ի հաստատումն իր ասածի, զթի տակ մի հին երգ է երգում, ուր մի կոյր իր տունն է փնտառում եւ չկայ մէկը, որ ձեռքը բռնի տանի տուն:

Հիմա ամէն ինչ խառնում է իրար՝ երգը-երգին, հնակարկատը մեր հարեւանին, եւ մայրս դայրանում է մեր հարեւանի վրայ, որ կօշիկներս վատ է վերանորոգել, իսկ ես խղճում եմ ինձ, որ բովհետեւ ԺԱՄԻ ԴՌԱՆ ԴՈՂԴՈՂԱԼԷՆ ԿԱՆԳՆԱՄ Է ՄԻ ԱՂՔԱՏ ԿԻՆ, եւ նա իմ մայրն է, ու ես ոչինչ չունեմ նրան տալու:

Այս ամէնը փողոցի մի փոքրիկ հատուածում է տեղի ունենում, փողոց, ուր դեռ հին քաղաքի ծածկամուտքով տներ կան, ուր դեռ երեւի թիթեղեայ վառարաններ են վառում, ուր դեռ երգընում են հին երգեր:

Եւ ոչ ոք չգիտի, թէ ինչ է կատարում ինձ հետ, կամ զեղ հետ. եւ մենք էլ չգիտենք, թէ ինչ է կատարում նրանց հետ, ովքեր ընդատալ են գալիս, կամ Հասնում-անցնում են մեզ:

Եւ դու ասում ես.

— Իսկ ես մտում եմ. իմ մէջ ապրող ցուրտը սարսուղանում է ինձ:

Եւ ես յիշում եմ ջո պատմածն այն անցած-զնացած աշնանային անձրևոտ օրուայ մասին, երբ մայրդ տառապից զնաց հացի ու չվերադարձաւ:

Աշնան բարակ տեճերի տակ կանգնած էիք երեքով, ձեռք-ձեռքի առանձնակցած էիք, իսկ օրը մթնում էր եւ ցերեկուայ լոյսերը մարում էին կապարազոյն երկնքի խորքում:

Մտանալա՛ք երեխաներ էիք, ու եղբայրդ, որ բոլորիցդ կրտսերն էր, կանգնած էր ձեր միջեւ եւ ուշադիր նայում էր փողոցի շրջադարձին, որտեղից պէտք է յայտնուէր մայրդ: Նրա փոքրիկ թաթիկներն ու փոքրիկ աստիկները ստուել էին, բայց լաց չէր լինում: Հարեանուհիները համոզում էին տուն զնալ, տանը սպասել, իսկ դուք տեղից չէիք շարժւում: Սկզբում անձրեւը խաղողի հատիկների շափ եւ խաղողի հատիկների նման պողտոր կաթիլներով զարնում զետին ու փխլում էին, եւ զա զրազեցնում էր ձեզ, յետոյ ողկոյզ-ողկոյզ թափուեց, իսկ յետոյ, երբ դարձաւ թիւ-թիւ, արդէն թրջուել էիք ու չէնքի պատի տակ կուչ եկած նայում էիք անձրեւի միջից երեւացող ամառի փողոցին: Տուն չէիք զնում, տանը ոչ ոք չկար. վառարանը չէր վառում, հաց չկար ու հայր չունէիք: Ձեզ հետ էր նաեւ ձեր նիհար կատուն: Թանձրացող մութը կտոր-կտոր կուլ էր տալիս հեռունները, մութը կտորատում, կրճատում էր փողոցի խոնաւ փապաէնը, եւ դուք էլ չէիք տեսնում

շրջադարձից յայտնուող մարդկանց: Յուրտը դառնում էր անտանկի: Քո ձիւղը, որը յանկարծ սկսուեց, ասես փորձում էր իր շուրջը ժողովել աշխարհի բոլոր մարդկանց, մօրդ գանկու համար, ու խեղդում էր անարձագանգ: Աշխարհում դուք միայնակ էիք: Հարեանուհիները իրենց տներն էին գնացել, աշխարհը պատերազմում էր, իսկ փողոցը՝ ամառացել էր: Այսպէս մինչեւ լուսարաց կը մնայիք պատի տակ, եթէ յանկարծ խաւարի միջից շերեւար շալի մէջ հացը փաթաթած մայրդ: Նա գալիս էր յոգնած քայլուածքով, եւ նրա ծակ կօշիկների մէջ ճողփում էր սառը անձրեւաջուրը: Դուք ուրախութեամբ մագեղիք նրան ընդառաջ: Ամէն ինչ մոռացաք, մոռացաք ե՛ւ սով, ե՛ւ անձրեւ, ե՛ւ ցուրտ, ե՛ւ կտորիւն, որ մշուում էր պատի տակ: Վերադառնում էր մայրդ: Օրհնուած լինի ուշացած մօր, պատերազմ զնացած հօր, անհող ամուսնու, անփոյթ որդու, մոլորում կնոջ եւ անցած-զնացած պատմութեան վերադարձը:

Դու յիշում ես, թէ ինչպէս այն ժամանակ նստեցիք շվառուող վառարանի շուրջը եւ ձեզ թուաց, թէ նորից վառում է վառարանը, իսկ դրսում ցուրտ էր, եւ աշնան քամին հին մեղեդի էր երգում ծինելոյցում: Այդ մեղեդին անձրեւի ու մեռնող տերեւների բոյր ունէր: Հիմա էլ, երբ դու մրմնջում ես ջո ինքնահնար մեղեդիները, դրանք աշնան խոնաւութեան ու մեռնող տերեւների բոյր ունեն: Ձգացե՛լ ես արդեօք: Տարօրինակ հարց եմ տալիս, ի հարկէ զգացել ես, «աւ հենց այնպէս՝ ինքս ինձ զիմելով, ինքս ինձ պատասխանելով խօսում եմ զեզ հետ ու խօսեցնում եմ զեզ: Միայնակ մարդիկ երեւի այսպէս են երկիւղեղում, խօսում են մէկ ուրիշի փոխարէն եւ պատասխանում են նրան, յետոյ խօսում են իրենց փոխարէն եւ պատասխանում են ուրիշին: Եւ այսպէս քայլում ենք կողք-կողքի, քայլում ենք լուռ, անխօս, այս մարդաշատ փողոցներով: Ի՞նչ ասեմ զեզ. ինքս ինձ ուղղուած, բայց զեզ ասուած շատ բաներ են գալիս միտքս,

չառ մեղքեր եմ յիշում: Չէ, շնորհակցայ ջո եւ ոչ մի մեղեդին: Քո կիսատ, պատահականորով երգուած երգերը լռելիս շնորհքի, թէ ինչո՞ւ մինչեւ վերջ չես երգում: Ասենք, ճիշդ չեմ ասում, մի անգամ Հարցրել եմ ու գու պատասխանել ես:

— Առաջ մինչեւ վերջ էի երգում: Եւ յետոյ, ասես մի ուրիշին գիմելով, աւելացրել:

— Երբ ինքզ ջեզ համար ես երգում, չարժի մինչեւ վերջ երգել: Մի կտոր, մի պատասխակ բուսական է, որ մեղեդին ջեզ ես տանի, ու դու այնտեղ, անցած օրերում յինես: Իսկ այնտեղ, անցած օրերում թէպէտ ե՛ւ ցուրտ, ե՛ւ քաղց, ե՛ւ դժուարութիւններ կային, բայց կար նաեւ մի մեծ անհոգութիւն, որը երբեք ու երբեք էլ չի լինի:

Ինչու դու այդքան երկար չէիր խօսել եւ չէիր բացատրուել այդքան հանդիստ. ասես անդորր աշուն լինէր, ասես ո՛չ անձրեւ կար, ոչ ընկնող տերեւներ իւլլոց, ու ես ջո բարի, որաստօտ խոտովանահայրն էի, որին արժէր պատմել ամենանուիրական բաները:

Այո՛, ո՛չ անձրեւ կար, ո՛չ քամի եւ ոչ էլ ընկնող տերեւների իւլլոց, բայց մի մեծ օտարացում կար, որ ասուերի նման վազում էր մեր ետեւից: Մենք երկու կողմերէ՛ կողք-կողքի, ոչ մի մակոյկ չէինք ուղարկում իմ արից քո արից: Չէ՛, թոչուններ չկային, որ թոչէին մի կողուց միւսը: Մ՛ւր էին կարել թըռչունները, մի՞թէ նրանք նոյնպէս աշնան տերեւների նման ընկել էին երկնից եւ սուզուել ինձ ու ջեզ բաժանող ջրերի մէջ: Երբ երկնքում թոչուններ չեն լինում, երկինքը նմանում է տերեւաթափ ծառի:

Եւ ես տեսնում եմ թոչնաթափ եղած երկինքներ, ուր ո՛չ ասող կայ, ոչ ամպ:

Քայլում ենք, լուս ենք: Հին երեւանեան տների շարքը ուղեկցում է մեզ: Չգիտեմ, կարճ՞տ է, թէ՞ հաւատ. կարծում եմ, որ եթէ բացեմ այդ տներից մէկն ու մէկի դարպասը, բակում անպայման կը տեսնեմ իմ մանկութիւնը:

Բացում եմ ու ներս նայում: Կիսախաւար ծածկամուտքի վերջում արեւով լցուած բակ կայ, բակում ոչ ոք չկայ, անգամ՝ մանկութիւնս:

— Ինչո՞ւ բացեցիր, — Հարցնում ես դու:

Եւ ես ասում եմ.

— Չգիտեմ:

Իսկ յետոյ՝ արդէն ասում եմ ինքս ինձ. «Բացեցիր, որ էլ լիստես ինքզ ջեզ հետ: Անձայն ասուած բառերի թնդիւր խլացնում է ջեզս: Յետոյ ասացի. «Մենք կղղիներ ենք, իսկ կղղիները չեն զրուցում իրար հետ, այլ մակոյկներ են ուղարկում մէկը միւսին, թոչուններ ենք, որ մի կղղուց միւսն են թոչում: Գոնէ մի ճնճողուկ լինէր, շարտանս քարերի նման պոկուէր ձեռքիցս ու սլանար երկինքս: Ինքս էլ չգիտեմ ինչո՞ւ, յանկարծ նայում եմ երկնքին եւ յետոյ նորից խօսում եմ ինքս ինձ հետ, իսկ դու ընդհատում ես:

— Դու ինձ տեսլ ես, որ մէկը Հին նուագներ է վաճառում: Տար ինձ նրա ծօտ:

— Ասել եմ, գնանք:

Ու մենք գնում ենք Հին նուագներ վաճառողի ծօտ:

Դուք բացում է մի ծեր, շատ ծեր մարդ, ու մենք ասում ենք, որ Հին նուագներ ենք փնտռում, իսկ նա ասում է, որ ինքը չի ճանաչում իր երգապնակները, եւ պէտք է որ մենք փնտռենք մեր ցանկացածը: Ու մենք փնտռում ենք Վեկոյենի «Միտիկը»:

«Աստուած իմ, գոնէ այդ ծիտիկը գտնենք», — ասում եմ մտքումս եւ ջեզ հետ կարդում եմ երգապնակների մակարութիւնները: Ու յանկարծ... չէ, չեմ հաւատում աշքերիս — Վեկոյեն՝ «Միտիկը»: Երգապնակը մեկնում եմ ջեզ: Դու անում եւ ուրախութիւնից ճչում, յետոյ չիկնում ու շուրկով մըրմընում ես:

— Դպրոցական հասակում ուստիոյի պատուէրով համերգների հաղորդումներին պատուիրեցի Վեկոյենի «Միտիկը»: Գրեցի, թէ իբր համալսարանի ուսանող

սարանում եմ սովորելու եւ ուսանողներին շնն մերժում: Հաղորդեցին եւ հաղորդելուց յայտարարեցին անունս եւ, որ կարեւորն է, ասացին համալսարանի ուսանողուհի է:

Դու պատմում ես այս ամէնը կարօտով եւ անոնց դառնութեան յիշում, որ ուսուցչուհիդ լսել էր քո պատուէրը եւ յետոյ, դասի ժամանակ ծաղրելով, ասել. «Դո՛ւ, սիրելի համալսարանի ուսանողուհի, պատասխանիր դասը, քայց ծիտիկի նման չծլըլաս»: Դու ինձ պատմում էիր կեանքդ, իսկ ծերուկը սպասում էր, որ գնենք երգապնակը: Ու գու ասացիր:

— Կարճի՞ր է, որ մեզ մօտ հենց այստեղ լսենք իմ երգը:

— Կարելի է, — ասաց ծերուկը, — միայն թէ գնէք ու նոր լսէք, թէ չէ շատերը դալիս, գտնում են իրենց երգը, լսում եւ անոնց գնելու գնում են:

Մենք գնում ենք Վեկուլենի «Միտիկը» եւ հենց այդտեղ, ծերուկի տանը յսում:

Մի քաջ, մոխրափետուր ծիտիկ ճախրում է երկնքում, մի քաջ մոխրա-

փետուր ծիտիկ ճուռղում է երկնքի ճիւղին: Փոքրիկ, ափաշափ մի ծիտիկ աշուն տերեւի նման փողփողում է երկնքի մերկացող ծառին:

Երգապնակը բռնել ես թելիդ տակ ու քայլում ես, ասես գտել ես կոքորածդ երջանկութիւնը: Թեւիդ տակ երգում է մի շլտող ծիտիկ, որ կարող է մի կզզուց միւսը թռչել ու թռչնաթափ երկինքը նորից կեանքով լցնել:

Սրհնուած լինի այս փոքրիկ ծիտիկը, քո առաջին պատուիրած մեղեդին, եւ թող օրհնուած լինի այս ծերուկը, որ պահել-պահպանել է նրան:

Հիմա մենք կարող ենք տուն վերադառնալ եւ երկու կղզիների նման նստել սենեակի ծայրերում ու քաց թողնել Վեկուլենի «Միտիկը»: Իսկ նա կը կարի, կ'անցնի մի կզզուց միւսը:

էլ մի խօսիր, սիրելիս, իմ մեղքերի մասին մի խօսիր, նրանք աւելի շատ են, քան դու պատկերացնում ես, դէր երգապնակը ջրաղացքարի նման պտտուող այս ափսէի վրայ, ու թող մեր աղունը այս ծիտիկը աղայ:

ԲԱՏԱՏԷԼ ԱՐԱՄԵԱՆ

Յ. Օ Շ Ա Կ Ա Ն

ՄԱԹԻԿ ՄԵԼԻՔԻԱՆԵԱՆ

(Վ Է Պ)

Կը յամենամ այս ամէնուն վրայ, վասնզի կը հաւատամ, թէ կեանքէն ամէն վկայութիւն փշրանք մը հողի է, զոր սարսաւոր ենք փրկել կորուստէ: Մարդ, բարք, ոճիւր, նախապաշարում, ազոթք, — բոլորը իրաւունքը ունին պատմութեան դամբարանին: Անոնք, որ արտակարգ անիմաստութեամբ մը կեանքը կը կապեն միայն ու միայն սանկ երեսուն-քառասուն տարիներու ծիրին մէջ բովանդակուող ժամանակի կտորի մը, ատով պատժած կ'ըլլան իրենք զիրենք: Աւելորդ է կեանքը չափել մեր տարիներուն մատնոցով: Ատիկա ովկիանոսը մատնոցով պարպել պիտի նշանակէր: Ատոր համար է, որ Մաթիկ Մելիքիանեանին հետ ուղղակի աղերս մը չունեցող սա վարբերը, բարքերը, անձերը կ'ընդունիմ վէպէն ներս:

Այդ մէկ հատիկ սրճարանին — շեմ նկարագրեր թշուառական այդ բանն ալ, հողատակ, թանձրորմ, միակ պատուհանով պատերուն տակ բորակի սաքուններով — ատուած, սարսափուած յաճախողներէն, տակաւին, ամէն ամազլուսիւր կանխող շարժուն, հարկահաւաք պաշտօնեան: Երեսին վրայ մորթի տեղ իրական ստաւատ(1) մը կրող: Ուլունք-ուլունք փորում, ստեղծագործուած էր այդ երեսը, բնական դաժանութիւնը տասննապատկելով իբր տղեղութիւնը: Մազկախառ ահաւոր եղած էր աւերին մէջ: Ջրհուրիւ թաթարը: Որ նախակիր ձեւով մը կը մարմնաւորէր իթթիհատեան ողին, ազգային ալ քիչէ բարբարոսութիւնը (րոնութիւն, ծեծ, հայհոյանք, կիներու հարածում, կրօնքին ու զիրքին հասցէին լեզուազար հեշտախօսութիւն) իբր թէ այսպանելով, վարուելով զեղացիներուն հետ մեղմ, գրեթէ քաւքով, արդարութեամբ, բարեկրթութեամբ, երբ վճարէին, այլապէս դառնալով հին թուրքը փնտռել տուող սառնասիրտ դազանութեան, երբ պարտականութեան գերի՞ն, զողահար, ստամենքը կճրտելէն ու եօթը անգամ թուրք, կը մտնէր աղքատին տունը, այսինքն՝ ախոռը — քանի որ խտրէն ու այժու մազէ ծածկոցէ մը զատ ոչինչ ունէր հոն գտնելիք — իր ձեռքովը կը քակէր պարտականին ալ սատկելու վրայ — որովհետեւ անօթի — էշը, ոսկոր կառոյց կովիկը (ձմեռները այս խտութիւնը կը հասնէր ծայրակէտին, երբ ձիւնը կ'արգիւնէր անոնց թափառումը դուրսերը) ու Քառասուն փարայի (ո՛վ իմ ականջները, ինչեք չէք լսած) հարկը մեղաք կը ծախէր սրճարանին առջև միշտ ազուաներու պէս դիակ հոտոտող փոմաք գաղթականներուն, որոնք կեանքին սպրանքը կը կրէին իրենց հիւզակներուն, օրհնելով փառելահը եւ անոր փոխանորդ Վասֆի էֆէնտիին կտրուկ բազուկ կը մաղթէին: Ընդդիմութիւն: 1896էն յետոյ հարկահաւաքը պետական շատ

(1) Մոզ, մեծ ծակերով, ցրեմ մազկու:

կարելորդ անձնակերպութիւն մըն էր: Անոր զէմ ցոյց մը հաւասար՝ պետութեան զէմ ըմբոստութեան մը: Հաւաքարար պատճելու դրութիւնը ատկէ կ'անձ սկիզբ: Հիօրկաւաքը առանձին չէր անշուշտ: Անոր ընկերացող ոտտիկանները վար չէին մնար թաթար Վասֆիէն, դարհուրանքը հագնելու, ոգեւորելու կերպերուն մէջ լայնօրէն հաւատարիմ, մաղխատրոս իրենց ականաւթեանց, բլլալով ընտրուած լեզներու ամէնէն հասակաւոր, դառնադէմ, ծաղկաւեր դազաններէն, անոնցմէ, որոնք քաղաքներու մէջ վայրենութիւն մը կը թելադրեն ու եւրոպացիներուն աչքերը կրնան անհաճոյ զգայութիւններով տպաւորել, խուրձ-խուրձ պիտերով, ցուլի բառաւորով, սրոնց պարզ երեւումը գեղջուկ թաղի մը մուտքին՝ բաւ էր դաճատալները պարպելու, ակնթարթի մէջ, արդարէն ու ժեղաւորէն, մանուկէն ու ծերէն:

Հրաշք մը, Աստուծոյ անհաս ճամբաներէն, այս տեսակ գեղի մը մէջ, գոյութեանը չէն սա օճախին, գիւղապետին երիտասարդ մանչուլը անզամ մըն ալ ուշքի ելած, նոյնիսկ ջարդերէն վերջ: Ժողովուրդը իր գէշ կամ քէշ հասկացած բաները այսպէս կը ջանայ բերել իր խելքի փլանին: Հրաշքը անշուշտ կարծիքն էր տէրտէրին, ա՛ն ալ մէկ հատիկ, պարզ ու քաղաքիս հողազործ, որ առտու-իրիկուն ժամը կ'ընէր, կը վազէր պարտէզ, զգումները ջրելու, միշտ զարմանալով Ամենակալին իմաստութեան, որ չէր աչքէ հեռու պահած իր ալ գեղը, արտօնելով հոն բարգաւաճ գոյութիւնը փարթամ օճախին: Ան, իր նախորդէն, մեռած հարիւրամեայ, որմէ եօթանասունը տէրտէրութեան մէջ, ժառանգած էր այդ տաճարաւոր ընտանիքին համար նոյն աւանդութիւնը, այս անգամ՝ ալ հաստատ, անսխալ իրակաւնութիւն: Աստուծոյ աջը հովանի կ'ընէր այդ տունին: Անոր մօտ երկու հեղ յիտուն համրած գուրբը կը յիշէր բարբարոսութեան ու կրակի մեծ հանդէսները, որոնք թուրքերուն կանխող երկու դարերը ըրած են տակնուվրայ, դարկած էին այդ խուլ գեղն ալ, բայց միշտ ալ խնայած օճախին, որուն հիմնադիրը աստուածատես արդար մը կ'ըլլար ծերունի քահանային բերին, — Թարթիշի հաստութեամբ անգամ չլեղած Երկաւորին ուղիէն: Վեր ոչ գնայ ի ճանապարհս ամբարշտաց», կ'ըսէր իմ օրերուս, տէրտէրը, Թաքուն հակառակորդ գիւղապետին, բայց չիտակը խօսելու մէջ ալ երանդոտ ու արի: Հեքիաթ մը հիմնելու տունին նախկինները կը հանէր շատ վար, ժամանակը գէպի իջնալու մէջ հանոյք ունեցող ու սկզբնական օճախին հիմը փորուած պահուն երեւան կը բերէր զուր մը, մարդու հասակով, պարունակութիւնը՝ հարկ չկայ ճշդելու... ոսկի, պահ զրուած միշտ օրս, տունին անյայտ աչքերուն խորք, անձեռնմխելի, ոչ ոքի ծանօթ, բայց որուն հոտը բաւ էր ներս քաշելու դուրսի ոսկին: Ինչո՞ւ չէ: Գուրբ այդ կողմերու բոլոր արտերուն մէջ ընտանի գիւղ մըն էր գեռ իմ օրերուս, բայց ոսկի՞ն: Ան ալ թող մտածէ Հեքիաթը: Բարգաւաճ՝ այդ տունը, պապերուն ամբողջ գիծովը: Բարբարոսները քանի՞ անգամ կրակի են տուած այդ գեղը. ծերերուն յիշողութիւնը կ'ապրի թոռնէ թոռ: Բայց կրակը դացած մարած է անոր պատերուն շրթներուն: Ու հաւանաբար միջամտած ալ է աւանդութիւնը, յարգելու համար Աստուծոյ աջով հովանաւոր օճախը, երբ նոյն այդ մարգերուն համար ականատեսի քրոնիկներ կը պատմեն անհուն աւերած ու անպատում սպանդ: Ինչո՞ւ եւ ինչպէ՞ս յարգած են թուրքերը սա հրաշքը. սոնոնք, որ սրտի մեծ գոհունակութեամբ աստը տառին գործադրած են արիւնին ու կրօնքին պատգամները, չձգելով մարդ այդ գիւղին մէջ, որ կուշտ հաց ունենայ տարին գոնէ քանի մը ամիս. գրաւելով դարէ գար ցորենն ու դարին, այնքան անուանի ճարճախուտի եզրերու արտերէն, պետական, ան-

խատանքները, թերեւս մեծ վեզիրներու մտածնունդ, որոնք թուրքերը մօտեցուցին արեւմտեան մշակոյթին, առնելով այդ Արեւմտաքին մեծ ցուցմունքները, համոզումով, ոչ թէ հիմկու նման, ձեւով, տարազէ կամ գլխադրկէ: Այն ատեն Ղարզ մը մտածելը հեշտագին, զայն կազմակերպելը ծանր, զայն իրագործելը բացառիկ աշխատանքներ էին, որոնց իւրաքանչիւրին համար իշխանութիւնները ուրոյն խաւերու կարիք ունէին: Իսկ օր ցերեկով դեղ մը, քաղաք մը հուրի եւ սուրի մատենելու տրարքը հողերանախան մեծ նախապատրաստութիւն կը պահանջէր: Մեծ պատերազմները՝ նման առիթներ անուշաւ, Բայց որոնցմէ զուրս, պետական ու սահմանախախտ հաշիւներով շրջան մը իր բնիկներէն դատարկելը թուրք գանդուածին համար դժուար հասկնալի, որով եւ տանելի քաղաքականութիւն մը չէր: Այդ ժողովուրդը նախնական ու վայրագ, խելօք էր, առանց արտաքին ժահրի: Հիմա՞: Ինչ չէք կրնար գտնել մէկ հատիկ թուրք, որ, մէկ ձեռքին սիլիտորը, միւսին՝ հարազատ, շահչտանայ ինքն իրմէ, երկուքն ալ գործածելուն մէջ հաւատարմակցութիւն ու իմաստութիւն գտնելուն: Ու հարկ է աւելցնել՝ առանց մունետիկի, Հերիք է, որ ամէնէն գոհնիկ թերթը երկու սիւնակ վայրահալ գրգռութեամբ մը այդ համալիր օգտակար հուշակէ հայրենիքին շահերուն: Անշուշտ հարիւր տարի առաջ ալ թուրքը թուրք էր, այսինքն՝ վաւերական հայրը այժմու գլխարկաւոր, պարահանգէսի հանդերձանքով Ղարզ հրամայող հանրապետութեան նախագահին. ու թուրք էր աւելի խոր ու հարազատ ձեւով, քայց կը կենար ու կը հարցնէր, երբ առջին բերուէին ձեռնակապ մարդեր, մորթելու համար, մեղքերը այդ թշուառականներուն, մա՛նաւանդ վարձքին տեսակը, երկրի՝ ինչպէս երկինքի մէջ: Սոսկական անհատներէն վեր, որոնք ամէնէն մտայլ շրջաններուն դէմ են դացած հրահանգին, թելադրանքին, ժահրի պատուաւորն ու պաշտպանած ղրաղին, աղաւթ ու տող բարեկամը, հայր. պետական աւազ անձնաւորութիւն մը ինքզինքը չէր խաբեր, երբ նամակի շղիջանելով հանդերձ, իր պալատին ստորապարկերուն մէջ դասակ-դասակ մտնէր ու աղջիկներ քոյժի կը դնէր՝ իր անկողինին համար: Ու միւս կողմէ կը հաւատար իր ըրածին, երկիրը արեւմտացնելու, այդ դերին ամէնէն ընդունակ տարրերուն ձեռքովը, զանոնք պահելով իր պաշտպանութեանը ծիրին մէջ, որքան ատեն որ անպատեհութիւն չէին ներկայացներ: ԺՔ-ըդ դարու կէսին թրքական հողերուն վրայ ծաղկող պատասխանութեան արմատները այս ենթաշխարհին ազդանքն են եւ ոչ թէ ցեղային չփայտուած, անգոյ առաքինութիւններու: Մենք շշտեցինք անուշտ իրենց հայրենիքը, — կը հասկնամ 1900ի Խզմիրը, Պոլիսը, Պրուսան, Էստրիկն, Սվազը, Տիարպէֆիլը, Էրզրումը, Ատանան, Գամասկասն ու Պէլլուսը ու քաղաք Երուսաղէմը: Այս քաղաքները դիմադրած մը ունէին թուրքերէն առաջ ալ: Իրենց հինգ դարերուն յանելո՞ւմը, — պէտք է սպասել, ատիկա տեսնել, ճշդել կարենալու համար: Եւ սակայն առնուապն անգթութիւն է մեզ մեզադրել այդ պատկերին իրեւ հեղինակ: 1940ին, ամերիկացի ճամբորդներ պատմած են այդ հողերուն երեսին կատարուող փոփոխութիւնները, զգացած ալ հողին, որ այդ շէնքերուն ներքը կը սնանէր արգի մտածողութեան ամէնէն ընթացիկ փառքերովը: Ձեռ թերահաւատ: Թուրքն ալ ունի իր խելքը, ձեռքը, ոտքը: Սակեդարը (ԺՔ-ըդ դարու կէսը), զոր այնքան լրբութեամբ կը շահագործեն, երբ կը ջանան քաղաքակրթական արժանիքներու ընդունարան հանդիսանալ, ըլլալէ վերջ մարդերու պատմութեան մէջ երբեւիցէ երեւան եկած ամէնէն աւերիչ վճռակը, վերջացած է այսօր: Մնաց որ, երբեք սիւսլ շղատեցին զայն. ներքնապէս զայն ընդունելով իրենց



պատմութեան ամէնէն մեծ սխալը: Ինչ հեշտագին ժողովուրդ մը որքելով իրենց մտքէն շրջանները, ուր Պոլիսը գրաւող հռչակաւոր բանակը, ժՍ. դարուն, մէկ երրորդովը կազմուած էր ութուոր տարրերէ: Ու Գանուէնիին կայսրութիւնը միակ արիւն շփազուց: Քրիստոնեան՝ ինչպէս արարը, յոյնը՝ ինչպէս հայը իրենց գիրքերուն մէջ սրհնութեամբ կ'արձանագրեն անունը մեծ ինքնակալին: Քուրքերուն կայսրութիւնը ժէ.րդ դարու սկիզբին գեղեցիկ ու շքեղ իրադրութեամբ էր, որուն ազդակները շարդէն շին աններ իրենց սնունդը:

Քսաներորդ դարու սկիզբը, Վրեւիլեան մահաճգնաբանութիւնը (գեղեցիկ գիւտը՝ սպաննելու համար պատմութեան քսան գարեբը) հայկական գիւտըը սխալմամբիք փնայման գաղտնաբերող ոգին ասանըհինգ տարի վերջը դժուար պատահութիւնը պիտի ունենար վերջնական, արժատական դարձանուժով մը սրբազրելու մեծ սուլթաններուն անուշազրութիւնը: Միակտուր Քուրքիան երազ մը չէր անշուշտ: Ու մինչեւ այդ թուականներուն բացուիլը՝ կեանք մը կար անշուշտ այդ գիւտերուն մէջ. այսօր գժուար ըմբռնելի, վաւրնգի այդ կեանքին մեծ խուկր կորսուած են հետախաղաղ, մեր ժամանակներուն երջանիկ անփութութեանը երեսէն: Արեւմտաքին բացուող թուրք կայսրութիւնը ընդունած էր կարգ մը նորութիւններ:

ՉԼԺ մանրամասներ:

Ատոնցմէ որուն մէջ գետեղելի էր սակայն վիճակը սա գեղին, ուրկէ սկիզբ կ'առնէ Մաթիի Մելիքիանեանին պատահարը: Ի՞մ գուած ու տեսածս այն էր, որ Հայաստանէն հազարուոր քիլոմէթրով բաժնուած ու թրքութեան ծովուն մէջ տառապի խեղդուած այդ գեղին շուրջը մշակելի հողը քառորդն իսկ չէր ներկայացներ խոպանին, որ տիրակալ արձակութիւն մըն էր, ժայռաստանի, ձորուաքի, անբեր աւազներու կերպարանքին սակ: Հո՛ղը, այսինքն՝ ան, ուրկէ հասցը կը բուսնի, իր կարգին հետ ու անբերել, սովորութիւն ունէր խաբիլու, անուշաղն աւազը միայն ետ տալու, վրայէ վրայ, տարիներ շարունակ: Անձրեաները, օգտագործել, այսինքն՝ անոնց քլած դիրտերը տարուէ տարի խնայել ու մանկութեան սկսուած պարտեղիկը շափահասութեան աւարտելը այդ գեղացիներուն համար պայծառական աւանդութիւն էր: Այսպէսով է, որ ժայռաստանին զանազան կէտերուն յորինուած էին կալիկներ, քառակուսիներ, եռանկիւններ, ուր կիներու նետած ոսպը, սիսեւը սանկ դարնան կանանչնալ ունէին: Բայց քիչ, քիչ, քիչ: Այնքան՝ որ սրամտութիւն բլլայէ աւելի իրական պատկեր էր հեզնութիւնը, որով հողը կը յայտարարուէր ԸՆՍՍԸՆԸՆ համար ստեղծուած եւ ոչ թէ՛ մշակուելու: Գիւղացին, անանց հողի: Ի՞ժուա՞ր՝ ըմբռնել սա իրողութիւնը: Եւ սակայն իրաւ էր անիկա: Ու սպրիլը՝ պարտք, դրուած ուսին տանողին՝ ինչպէս շտանողին: Վարը, դաշտի բոլոր հանդրուաններուն, գիւղակներ, պարզ, բայց հողաւատ: Որոնց բախտն էր ճամի մը ունենալ իրենց կեդրոնը, զանգակատան փոխարէն: Հոն մարդերը շէին իսկ մտածեր հող ըսուած հարցի մը: Ասդին, զանգակով պատժուած գեղին մէջ, գեղերու մէջ մարդիկ պիտի ծընէին աղքատ, արգանդէն իսկ գուրկ, պիտի անէին աղքատ, խաբիլու խրճիթէ մը ներս, հողով յատակուած, քանի մը խաբի, ճահիճէն գաղուած՝ մրի բերք, արեան տուրքով մը մօեղներուն պայմանաւոր, այժու մազէ վերմակ, փայտէ պնակներ, դղումէ սափորներ, թի, բահ, բրիչ, քիչ անգամ կացին, — ահա այդ անհող գեղերուն խրճիթները: Ուտէին պիտի կորեկ, եզիպտացորեն, խոտ կամ սատկելու վրայ եզան քար դարձած միւսը: Պիտի մեռնէին՝ հողի նոյն կտորը, խրճիթը, այժու կապերտը կտակելով իրենց զաւակներ:

բուն ու ասիկա այսպէս բանակիրն ու անվերջն: Դար մը առաջ մասամբ հասկընալի, սա բաները հեքիաթ կը թուին մեր զարու մտաքին: Բայց իբրևն անոնք, Եղեմակեան ստուգութեամբ մը: Երեսուն ասարի առաջ, այդ հոգեբուն վրայ աշխատաւորը, մահուան գնով իսկ, անկարող էր նշանակել մը փոխել սա կարգերէն: Ու ասիկա օսմանեան հայրախնամ՝ կառավարութեան բարիքն էր մեր ժողովուրդին: Փոխազրե՛լ այս ամէնը դէպի քաղաքները: Ասիկա պիտի նշանակէր Տանթէ մը ստեղծել:

Հիմէն հանուած գուբին հրաշքովը, թուրքերուն հերասէր, գորովատ, բարեհաճ արտօնութեամբը, Ամենակալին անհատ մէկ պատգամովը — ո՛ր մէկով որ կ'ուզէր — գոյութիւն ունէր սակայն այդ զիւղին մէջ մէկ հասիկ սրճարանէն աւելի արդար փառքով մէկ հասիկ օճախը: Գիւղացեալ կուսակցի բարեբան, բոլորն ալ պետ, ըստ աւանդութեան, իրենց կարգին: Ու անուշտ նորէն հրաշքը պէտք է միջամտէ, որպէսզի հասկնալի ըլլային անոր անդամանները, հազարէն վեր արտաբարով, որոնց կէտը ճահիճը կը նուաճէր երբեմն տարիներով, բայց անձրեւի քիչ տարի մըն ալ այդ հոգեբուն տուն կը զրկէր առասպելական բարիք: Իմ հոն եղած տարին Գուբերը հաստ էին եւ երբեք մտադիր նահանջի: Գիւղացեան նախիրը, տեսակներովը, զարմեալ վեր քանի մը հազարէն: Ու անոր աղջիկները, բոխ անգամ մը, փաշաներու պալատին վայել աղուորներ: Հարցուցէ՛ք ու զարմացէ՛ք, թէ ինչու կ'ըլլան այս ամէնը այսպէս քով քովի, մօտիկը՝ միտ անհուն թշուառութեան, որ իբր արդու խարանուած ու փակցուած էր ուրիշներու երբեք հանդիստ շնանցած ոսկորներուն: Կը պարտէինք անոր աղուն հետ արտերը, պարտէնքները, մարազները, թխտատանները ու կը սիրէինք կեանքը ասոնքուազն մեզմէ զուրս շաշուութեան: Ինչպէ՞ս: Այսպէ՞ս: Իմն մը կար, որ ըստիպուած էր սորվիլ, բաւական տառապանքով, գիւղացեալ — ասիկա մոռնալու էր իր պատանութիւնը, այսինքն՝ մինչեւ հոգ հասնող ազատութիւնը իր պայքարուն բերքէ, վարկէ, որսէ, զէնքէ, աւաղաններու հետ յաղթական բարեմաներէ — բոլորն ալ բունպետութեան աջաններովը մէկիկ-մէկիկ նեղցուած: Հայկական աղէտը, այսինքն՝ 1895ի ջարդերը, վերջարան մը կը կազմէր արեւելու կերպի մը: Քիչ մը ամէն տեղ, մէկ ամսուան մէջ, մեր ժողովուրդը, ամենազօր կարգախօսով մը զարձակեցաւ դար մը աւաղան իր գերութեան: Չեմ բանար պատկերաշարքը յղացքին: Ու կը բացուէր նոր չըջանը: Պարտաւոր էինք ասորիլ, թուրքին հարկը վճարելու, մեր գերութիւնը մեզի հաշտ ընելու՝ մեր միտքին ալ գերութեամբը, փրցնել նետուրով մեր միտքին բաներ, որոնք բաց վէրքի մը պէս կը թունաւորէին մեր հոգին: Չեղանք ցեղովի սողոսկուն, կեղծաւոր... լուսչող. թուրքերուն հետ հարիւրին կէտը հասնող քաղցը մեր տարիները մեզ կ'արգիլէին ասիկէ: Միտ կողմէն փոխուած էր մա՛նասանդ թուրքը, որ ո՛չ միայն մեզ կ'ատէր, այլևս մեր ամէն մէկ օրը իրեն սպառնալիք, իրմէ կորզուած, զոզցուած բարիք մը կ'արժեւորէր: Ու այս մտայնութիւնն էր, որ պիտի հանդերձէր 1915ի աղէտը: Առայժմ, մենք բոլորս, ու ամէնէն առաջ սա թշուառական գիւղը պարտաւոր էր վարձիլի գիւղացի, զայժմադամին խոհարարէն մինչեւ զրացի առանձին կոշի մուրացիկը, որ իր երզը բունի կը ծախէր կեանքներուն ու բերանը կը բանար ո՛չ միայն երգի, այլևս ցեղին վայել հայտնութեանց հեղեղին, քրիստոնէսային կերուած ամէն մէկ պատանին մէջ բաժինը ճշգրտով արդար հաւատացեալին, Մեր լեզուով վարձիլի գիւղացի կը նշանակէր, այդ օրերուն, վատասակին 4.5ը բաշխել այդ ջուրերին: Ու թերևս խորունկ բան մը ըստ չեմ ըլլար, երբ այս գերութիւնը ընդհանրացնեմ բոլոր օճախներուն,

փառքերուն, բոլոր դարերէն: Օգտակա՞ր: Անշուշտ: Թերեւ հոռ է գաղտնիքին սկզբն այն մեծ անձնաւորութեանց, որոնք ստիպման տակ, իրենց տուրքերը կը սրցնեն: Թո՛վր քանի հերկէ, այնքան աւելի կը փայլի: ... Այդ յայտ ու ծածկուած տուրքերէն դուրս, ամէն գիւղապետ իր անձնական պատասխանատուութեան տակ, երաշխաւորն էր իր ժողովուրդին հաւատարմութեան: Ան յանձնառու եղած էր ժառանգիչ ընել իշխանութեանց ամէն օտարական, ի՛նչ ազգի ալ պատկանէր ասիկա: Աւելի՛ն. տեղեակ պահել կտտափարութիւնը երիտասարդութեան հակամեծերէն, զէնքերու գործածութեան մէջ վատնուած եռանդէն, որի պատրուակով նշանառութեան ընդարձակ ժարգանքներէն ու առ ու տն վէճին առիթով ծաղում առած ընտանեկան խորովքներէն, յուզումներէն: Մատնութի՛ւն: Բաւական բիրտ է բառը: Մեր հայրենիքին մէջ յանձնառութիւններուն յօտարողները պատժուեցան, կամայականայ մեղանշումներու համար: Թուրքերու ծովուն մէջ կու՞թ մը շարժող ճահճատեղէն արիւնքամ ու անօթութենէն զրեւոնուած սա խուժարանին, ժայռատանին մէջ պոմպա չէր պատրաստուեր, ոչ ալ Երլտրդի վրայ քալելիք հայ Փետայիին գինովարժութեան ժարգանքը կրնար բլլալ աներևոյթ սգիներու ցուցմունքներուն տակ: Ըսի այս ամէնը, վստայի Մաթիկ Մելիք-խանեանի մերթապալութեան մէջ բոլոր այս նկատումները մէյ-մէկ քիչ դեր մը ունեցան:

- Կ'աւելցնեմ ուրիշներ:
- Գիւղապետին շափ տէրտէրը:
- Ատր շուքին՝ վարժապետը:
- Այս երկուքէն առաջինը տեղական ապրանք:
- Երկրորդը՝ միշտ ներածեցի:

Այդ գիւղին մէջ ոչ ոք իր անունը գրելէն անդին հաճած էր անցնել տասր ձմեռ դպրոց երթալէ վերջն ալ, երբ ես մտայ իրենց մէջ: Տէրտէր ու վարժապետ գիւղապետին օգնականները կը համարուէին: Բայց աւելի նշանաւոր տաւար՝ կը մնային ենթակայ աւելի լուրջ նեղութեանց: Գիւղերը միշտ ասոնցմէ դուրս ունէին քանի մը սանկ զժուար որակելի ժարգեր ալ, ընդհանրապէս թուրքերու հետ լաւ երես յարգարող ստորադաս պաշտօնեաներու համակրութիւնը ալ պանացի պահապահներու ընձեռուած ասպնջական եւ այլ կարգի աւելի արտում հաշիւներու հերոսներ, որոնց տունը հացը չէր պակսեր կալէն առաջ, ու բակին քանի մը կով միշտ կը խօսէին կաթէն, կարագէն: Այս ատուելութիւնները սա ժարգերը հասկնալի է, որ վերածէին անպանդու, պղտիկ գիւղին համար անհրաժեշտ, կոթնող թուրք աւելի մեծ ազաներու, բոլորն ալ իրենց կաղապարով, բացի նիւթականէն, անբաղդատելիօրէն բարձր, որոնցմէ կ'առնէին սերմնացու, առանց ասկոսի պարտք, տուրքը վճարելու համար պայմանաւ ժամուն, ու դեղը շահադրձող հարցերու մէջ ունէին ձայն մը՝ տէրտէրին ու վարժապետին հաւատար:

(*) Այս (անդամ): Ենթերու խորհուրդի անդամները Բիլ-Բիլ ամուսնացած աւելի մուլգ տարուողներէ, այսինքն՝ միւլթական քոչ տարողութեամբ մարդեր: Գիւղապետութիւն, տէրտէրութիւն, գրեթէ ժառանգական ըլլալով գիւղացիներուն արդար փառատիրութիւնը, աշխարհի վէշ բան մը ըլլալու, ինչի մտնեալու, իր գոնացումը կը գտնէր այդ ամուսնու ժողովակաւորութեամ մէջ, չամի որ իրենց պաշտօնն էր իրենց ճիտն կայս կնիքները քաղաքի մը տակ փակցնել, երբ ասիկա երամայուէր իրենց: Բայց ազայն կինը թաղակառի մը կերէն աւելի կ'արժէր իրր յիմար:

Հատոր մը լման անբաւական կու գայ այս դարու սկիզբին ու քանի մը Հարիւր տուննոց Հայ գեղին բոլոր դարսերը, բոլոր երեսները թուղթի առնելու: Տուի այսքանիկը, Մաթիկ Մելիքիանեանը, գէթ իր հոգին հաճեցընելու համար: Լոռուած մասը անհուն է սակայն:

Բ.

Եղէք հիմա, իմ տեղս, նման դեղի մը մէջ վարժապետ: Որ օրհարստիկն (կէսօր) ցածաք Հաջր կրակին կակուղցնելու ու առանց ողբերգութեան, ընկերավարական հանգանակներու աղովը դառնացած զգացումներու, փորին կը նետէ այդ օտարէն եկած ժուճը ու կը դառնայ տէլլատուն, զիրքերուն զարատունը — մեծ սենեակ մը, առանց հիմի չորս պատերու վրայ, ասկը ախոռ: Արզիւած եմ կենդանի կապելը: Այդ սենեակը, փոխակերպուած հին հիւրանոցն է գիւղին, ուր կ'անցընէին իրենց գիշերը ճամբորդ մարդիկ: Կառավարութեան հրամանով, հայ զեղը փակած է հիւրանոցը հետունքէն դալիք ճամբորդներու: Հին զպրոցին շէնքը փլած է շատոնց: Նոր մը կառուցանելու անկարելութիւնը, Պրուսայի դաւառական ժողովին վկայութեամբ (ուր երեսփոխանները, որոնք այդ գիւղը կը ներկայացնեն իրենց մուշտակի վաճառանոցներուն ետին, առանց տեսած ըլլալու դոնէ անգամ մը այդ վերամէն (աւերակը), վաւերացուցած են թաղաքական ժողովի ծրարագիրը — ծախքերը կրնատելու, խնայողութիւն ընելու, զպրոցի կառուցման արտօնագիրը ստանալու առիթով աւելորդ ձանձրոյթ չպատճառելու բարիխնամ կառավարութեան) գեղին օտան վերածած է առժամեայ զպրոցի մը: Աւելորդ շէրլար հոս յիշելը, թէ այդ առժամեան տասը տարիէն աւելի է, որ կ'ապրէր:

Մրճարանին առջեւ բազմութիւն: Օրը՝ լուռ: Ոչ ամսավերը, ոչ տաղաւարի հող:

Գեղերը կը ճանչնամ շատ լաւ եօթր փորձանք այդ դաղանը: Կանչուած եմ, անչուշա սրճարան: Տղաքը ինձմէ աւելի կը հետաքրքրուին աւնոր երևումովը, վասնզի վարժապետը կանչուած է: Կը գնեմ իմ ներկայացուցիչը տղոց գլխուն, կու տամ անհրաժեշտ հրահանգները — բոլորն ալ կարգապահական — քնացողներուն ցանկը կը պահանջեմ, որ բռնէ ամուր ու կը նետեմ մէջտեղ զաւազանը: Այս բոլորին վարժ են տղաքը, ամէնօրեայ կրկնումներու արդիւնք մը իրրիւ:

Գեղին վարժապետը ժուխթարին (գիւղապետ) եւ տէրտէրին մէջտեղը անհրաժեշտ մարդ մըն է: Անոր աւագ պաշտօնը ճայնաւորութիւնն է. այսօրինքն՝ եկեղեցիին մէջ երգելը, այդ արարողութիւնը տղոց սորվեցնելը: Գեղին նիւթական զարհուրելի վիճակը կ'արդիւնէ զանոնք ուզուած մարդը ունենալէ, գինին երեսէն ու կը պարտադրէ գոհանալ պատահականով: Զիս կանխողն ալ ինձի պէտ բաղաձայն վարժապետ մըն էր: Տէրտէրը զզգաստութեամբ կ'նրզէ վարժապետին ալ բաժինը ու տղաքը ժամուն մէջ կը սորվին պատարագը: Իմ բաղաձայն ըլլալու գծրախտութիւնս ծանր չէ կըլուած, մա՛նաւանդ՝ որ փոխարէնը կը ներկայացնեմ շատ-շատ առաւելութիւններ, բոլորն ալ առօրեայ կեանքին մէջ օգտագործելի: Վարժապետին երբորդական, չորրորդական զրաղումը՝ տղոց գիր ու հաշիւ սորվեցնելը: Կարեւորագոյնը՝ օրուան ընթացիկ աշխատանքն է, գեղի կեանքին հազար ու մէկ

լուրջ կամ շնչին մանրամասնութեանցը նուիրուած : Ամէն օր մարդ կը մեռնի : Ձայն թաղելը տէրտէրին պարտականութիւնն է անշուշտ : Բայց կառավարութեան տեսարաններուն մէջ ալ լուսաճաղիմ վերջնականապէս թաղելը՝ վարժապետին պարտքը : Առանց անճանկամ թուղթի (այդ օրերուն համիտիէ կը կոչուէր այդ թղթիկը) կառավարութիւնը մեռել չ'ընդունիր, ինչ որ կը նշանակէ՝ ապրել չ'ընդունիր, որպէսզի շուտովն հաշիւը, էսամէն փակէ իր ամբարներուն մէջ : Քանի՛-քանի՛ անգամներ հարկ է տեսնուած թուղթ ճարել, որ կը նշանակէ պատիկի մը թուղթը յարմարցնել մեծի մը : Կառավարութիւնը կը պահանջէ, որ մեռնողին անձնական թուղթին կցուի վկայագիր մըն ալ, մտերմարէն, ազաններէն ստորագրուած, ու կնիքներովը վաւերացուած, ուր ճշգրտուած ըլլար Հիւանդութեան մերձաւոր տեսակն ալ (բարեբախտաբար այդ տեսակ Հիւանդութիւններ հասկնալու, անուանելու համար անհրաժեշտ չէ բժշկական վկայականը, քանի որ մահը վեց-սօթը հազար կերպարանքներու տակ կը ներկայանայ գեղերը : Մտնողէն մինչեւ հինգ տարեկան, տղաքը կը մեռնին փորքլուքով : Մինչեւ քսան ու քիչ մը վեր՝ հիւծախտով, թիֆոսով, եւ այլն : Յիսուսէն ետք՝ սիրտով եւ կաթուածով) ու զրկել պատրաստուած օրինական թուղթերը գումատակին կեղտոնք, զագա : Ամէն օր մարդ կը ծնի : Մկրտելը եթէ քահանային գործն է, զայն արձանագրելն ալ ժամու մեծ տոմարին, ինչպէս կառավարութեան տեսրակներուն մէջ՝ պարտքն է վարժապետին : Ամէն օր մարդ կ'ուզէ մեծնալ (տարիքէն) կամ պոսիկնալ, կարգուելու, ժառանգելու, շափի հասնելու կամ անկէ վեր մնալու հաշիւներով : Վարժապետը բաւական խնայող շուն մը պէտք է ըլլայ, այս հաշիւները տակէն հասկնալու, բայց դուրսիմ շղարհելու : Ժողովի մը վկայութիւնը զայն կ'արտօնէ թուանշաններու հետ խաղալ աշպէս՝ ինչպէս կ'ուզէ խնդրարկուն : Այդ ճարտարութեամբ տասնութը չմտած պատանին կը գտնայ քսանը՝ մէկը անցնող, Հետեւաբար՝ ինքնիշխան թագաբացի, օսմանեան հպատակ ու կը ժառանգէ : Դարձեալ այդ ճարտարութեամբ կոխի ընթացքին իր ընկերը ծանրօրէն, երբեմն մահացու կեղտով վերաւորած երիտասարդը կը պղտկնայ, օրէնքին օտմանները հասնելու համար, ուրկէ վար պատժապետութիւնը կ'ապահովուի վերէն տնտեսուած միջոցներով, ընդհանրապէս կաշտոք : Արտերը, որոնք զաղար շունին թուղթի վրայ ու կ'անցնին մէկ էջէն միւսը տեսրակներուն : Պէտք է թուղթի կապել այդ թշուառական թափառումը : Կը յիշեմ օրեր, ուր ասանով, քսանով արտեր կը զնէի կամ կը ծախէի թուղթի վրայ : Մուրհակը (իր հազարումէկ տեսակներովը) ուրիշ դիւան : Նամակներ գրելը, ինչպէս կարգալը : Կառավարական գրերը, կարգալը՝ ինչպէս անոնց պատասխանելը : Թղթեղէն ու թանաքեղէն աս փուճ, բայց այնքան իրական, եղբրական դրողոմները, ժամանակէ եւ տրամադրութենէ անկախ (կը պատահի, որ կէս դիշերին կանչուիս թուղթ մը խմբադրելու) տակաւին կը խոտնելին, կ'ընդմիջուին ուրիշ աւելի կենդանի կարիքներով, Քեզի կը դիմեն միջրնտանեկան վէճերու կարգադրումին համար : Ձեռ կընար ինքզինքդ մերժել, քանի որ փորձառութիւնը սորվեցուցած է, որ ընկոյզի կեղեւ շիջընող վէճերը յաճախ արեան կը յանգնին, ստեղծելով անդամանելի բախումներ, մէկ կողմին բացարձակ անճիտմանը առաջնորդող : Պիտի խօսիս մէկուն : Պիտի խօսիս միւսին : Պիտի ունենաս կարեկցուն հողի : Քուկդ պիտի ընես իրենց ցաւերը : Պիտի ունենաս բառ ամէնուն ջուրին : Բայց մասնաւոր պիտի ճանշան բողբոջ, օճախ պահող անդամալոյժէն մինչեւ նոր ծընած երեխան, շրականէ յանուանէ, իրենց ընաւորութեան մեծ զիճերովը :

իրենց կեանքին մեծ ակօսնորով, ցաւերուն եւ հաշիւներուն բոլոր հանդուսներովը: Ու տակաւին: Մուրալ՝ անօթի մեռնելու վրայ մէկու մը տունը դիշերը գողտուկ հաց մը զրկելու բարիքէն սրտապնդուած: Վագել բոլոր հիւանդներուն, հասկնալ բոլոր ախտերը, բժիշկէն վեր ու արգար հեղինակութեամբ մը, քանի որ արժանիքը չի միջամտել ապաքինման՝ ինչպէս մահուան իրողութիւնները զառնաքնելու: Տարին հեղ մը այդ գիւղը կը տեսնէր բժիշկին ստորը, ան ալ միշտ դժնդակ պայմաններով — մեռել մը գերհիմանէն հանելու եւ քննելու, կամ՝ մեռել մը (սպաննուած) գերեզման իջնել արտօնելու համար: Կարգալ Աւետարան, Նարեկ, զարմանազան համայնիներ, բոլորն ալ յամառ ցաւերու ասեղներէն թելադրուած: Քիչիկ մը խօսիլ պղտիկները զարնող փորձարութեան վրայ: Հայաստանի մտնողները մալարային պատասխանատուութիւնը անոնց բնոյցնել ու մեր բոլոր սուրբերը վկայութեան կանչելով՝ սիրտ առլ ծերուկին, որուն մէկ հատիկ աշխիւ լոյսը լիոնէն, զարնուած, տուն է բերուած հողին փշելու: Օ՛, կեանքը: Կեանքը իր այս խորակահար արտօնութեանց փարթած հանդէսովը: Խոտ Պուտիլ եւ անօթի քնանալ: Ու այս ամէնուն վրայ, այս ամէնը կարծես ստուերի մէջ ձող մղձաւանջը, որ ան է թուրքին, 1900ին:

Կր մտնեմ սրճարան:
 Ժպտուն, գրգռուած ամբօրը — երևոյթը բացառիկ է ամէն կարգի մարդոց ներկայութեամբ — տեղ կու առ ինծի:

— Ի՞նչ կայ, նորէն, տղա՛ք:
 Տարիներէ ի վեր ասոնց պակասը կարծես կը թարմացնէ հին յիշատակներ: Ծամբորդի տարադով: Ու հայ: Քանի որ մէկը, սրուն ձայնը կայ, բայց մարմինը՝ ոչ, շատ խոնարհ ըլլալուն, մէծի է արդէն աղայի մը հետ:

Կը բացուի ամբօրը առջիս: Կը գտնեմ ձայնին աէրը:
 Առաջին ակնարկով, տաքարին, համակրելի մէկը: Քիչիկ մը կապածիլ՝ մօրուհիլը, որ կը թուի գուրսէն գրուած է եւ, հետեւաբար՝ սուտ: Այսպէս կը մտածեմ, յիշելով իսկոյն աստիկանական խարբայութիւնները, ջարդերէն ետք ընթացիկ, գրեթէ օրինական նկատուած: Մարդիկը կնիկ ու զտակ ունին եւ ամառակնը աննուազն չորս ամիս յետոյ կ'ելլէ: Այս անձութիւնը մարդերը բրած է Հնարագիւտ: Անգործ փաստարանները ողջ ըլլան: Ուստիկանական հարիւրապետ մը զանոնք կը վարձէ, կը դիմակէ, մօրուք մը կը տեղաւորէ ու կը զրկէ շրջանի հայ դիւղները, որս հանելու: Որսը հասկնալի է: Այս կերպ յարդարուած, հանդերձուած սա մարդիկը իրենց չհասկնալի լեզուն (ինչ պէտք լեզու սորվելու, քանի որ իրենց ըսելիքը միայն կը բաւէ իրենց, լսողներու ներկայութեան) մէկ օրէն միւսը կը հասկնալին ու գիրենք մտիկ ընող գիւղացիները իրրու խոտփարաններու ունկնդիր կը քշէին գազա, քրտնցնելու, կթելու համար շունցած իւղը այդ ողորմելիներուն: Մինչեւ հանելուկին պարզումը, ճարուած կաշառքին բաշխումը գիւղը կ'անցընէր անձկութեան իրաւ տագնապներ: Ու մաքրուած, օրին մէկն ալ կը գրուէին ճամբայ, զէպի իրենց բնակարանները, փատիշառքին կեանքին արեւշատութիւն մաղթելով բանտի բակէն մինչեւ դադայէն գուրս ելլելին: Այս ամէնը, բոսկանական կ'անցնին մտքս: Անհանգիստ եմ ու անապահով:

Ու կու տամ ականջ:
 Մաքուր, տարօրէն պարզ, ընտանի, բնական արեւելահայերէն մը, բառական տարբեր խուժ այն լեզուէն, զոր աւելի յետոյ Պոլիս ու Սփիւրքի մէջ ինծի պիտի տրուէր ունկնդրել: Եւ շտի անմիջապէս անթերի հարազատ

տուժեամբ մը, այնքան՝ որ ձայնին մեղմ, մելանուշ ալիքովը մտքիս մէջ կը յօրինուի շերտաբուրմաբանի մը ստորնայարկ սրահը, կիսամութ, միշտ կուզայ փնդկերով ու ծծուկած թիթեռնիկի գարշ հոտովը: Ու այս ամէնուն հետ թաթար հարսնուկը, կազ Գերոյիքն էֆէնտին — տէրը գործին — դըրկից ուրիշ բանուր տղաք եւ... հասակը Կոմիտասէն հիւր պատանեակի մը: Հնտարոյժը արածուած էր Սեւ ծովու ճամբով, առանց Պոլիս սաք կոխելու, շոգնաւ ասնել Պաթուսի համար: Անիկա բերած էր այդ պատանին նիհար, յօգացաւէն զրեթէ ծերացած գիծերով: Բայց նաւթի իշխանի մը թու: Որ պաշտած էր Գաղիոյ եւ Գերմանիոյ հանքային լուրերը, առանց մեծ բան մը շահելու: Հանրաճողակ են, ամբողջ Արեւելքի համար, այդ կարգի, ինչպէս ամէն կարգի հիւանդութեանց համար Պրուսայի ջերմուկները: Զունիմ առարկութիւն, թէեւ գառնօրէն դատեր եմ, ասնկ լման տասր տարի, անկարողութիւնը այդ լուրերուն, քանի որ աղքատի մանչուկի իմ մենչնորհս էր մեռելները մոռով գերեզման առաջնորդել, երբ Պրուսայի վարժարանը կ'ըլլայի ամբան գործի օրերուն, մամայիս հետ: Կը հանէինք մեռելը, ընդհանրապէս մտտաղ, մտիկ ընելով փսփուքով պատմութիւնը, որ ջերմուկներէն կու գար: Մայիսը ամէնէն բանուկ ամիսն էր: ... Բայց ամէն պրուսայի անհասարկի է, երբ կը խօսի երկու բանի վրայ: Առոնցմէ մէկը, կը հետեւցնէք, ջերմուկներուն հրաշագործ յատկութեանց դիւցազներգութիւնն է, երկրորդը՝ իրենց զեղծերուն անման, թաւշանուշ գունքին, որ մասամբ կը ցոյանայ մարդերուն երեսներուն... Այդ գովեստը, թէկուզ ամէնէն պարզ բերանէն, տպաւորիչ է, երբ հանքային լուրերը կը վերածէ ուղիղ հեքիաթին էլիքսերին: Հոս տեղ շեմ տար պրուսացիներուն հեշտախտուոր նկարագրութեանց, բոլորն ալ բազմիջներուն դիրքը յարակից տեսարանները, տաք ու պաղորակ լուրի հարեւարուր ակերուն վրայ դարբերու ընթացքին գոյաւոր պտերակներուն, պարտէզներուն գաղջ, հիւանդոս, զգայութիւններով արոփուն ու իրաւ: Թիֆլիսի մէջ այդ յեղուժը գործած ըլլալու էր տպաւորութիւն, որպէսզի նաֆթի իշխանին հաւանաբար բազմազարդ սղան յօմարէր իր ցաւազար գաւակը յանձնել հնտարոյժ Գերոյիքն կազ էֆէնտինին: Ինչ ալ եղած ըլլային աղակները իր խօթացեալ զաւկէն բաժնուիլ ուզող մարդուն, իրականը ան էր, որ պրուսացին սուտ շէր խօսած: Զերմուկները քալիցուցած էին: Տղուն յօգուածներուն ներսի պատերուն դրուազուած աւազուտը, արձակած անոր անդամներուն վարանքն ու կապերը, բանալով իր շարժումներուն ազատութեան դարձող պատանին իր հարազատ կեանքին, անհող ու զուարթ խօշութիւններուն: Նստուկ, փափկացուած իր երկրորդ մանկութիւնը զայն ըրեր էր ներսէն տարօրէն խոր, զգայուն: Կը ճանչնար կիները — ձայնին մէջ կար այդ նշանը — ու անոնց երկար մարժումներուն հետքերը իրքեւ քաղցրութիւն արձագանգուած, արձանագրուած էին իր շարժումներուն, բառերուն, արտաքնացող հոգիին վրայ: Կ'երկէր, առաւօտէն մինչեւ մութին իջնելը, զրեթէ միս-միսակը լեցնելով ամառ ժամերուն երկարակից արտմութիւնը, մեր աշխատանքը ընելով տանելի, անուշ նոյնիակ (քանի որ հանոյքով կը սպասէինք լուսնալուն, մեր վիւղակներէն փախչելու անպարանքը չհասկնալով յտակ): Այդ երգը զիս կը տանէր, կ'աղաւթը թուրք քաղաքին դաժան բարեխառնութենէն շատ անդին, նախ՝ լեռները իմ գեղին, յետոյ՝ այն երկիրը, ուր մերիները կ'արհամարհէին թուրքը, թաթարը, անուազն չունէին անոնցմէ ոչ մէկ վախ, նուատուութեան զգացում: — Բան մը, որ մեր խմած լուրին, շնչած օդին մէջ իսկ ներարկած էին թուրքերը այդ քաղաքին մէջ, այնքան գեղեցիկ իր-

րեւ բնութիւն ու տեսարան, կլիմայ ու մարդեր: Իր բերնէն Սայեաք-Նու-վիւն անպատուժ, խենթեցնող քաղցրութիւն էր, այնքան որ՝ իմ ջրովիկս օանդիկ ծեծող թաթար հարսնուկին աչքերը կը խոնաւնային: Ու միւս աշուղները, իրենց ամէնէն սրտառուչ եղանակներով: Բայց մանաւանդ ժողովրդական երգերը, օրրերդ, մահերդ, հարսներդ, սիրերդ, բոլորին՝ բառերէն վեր, Կովկասի հողէն կաղմուած հոգիին անհուն թափանցումովը մեզմէ ներս: Թաթար հարսնուկն ու մատաշ աղջիկները իրենց տուներուն մէջ դեռ յմոռցուած (Պրուսայի շուրջը Ղի պատերազմէն գաղթական հազարաւոր թաթարներ կ'ապրէին աղքատիկ ու խեղճ, պահելով Կովկասի — ուրկէ գաղթած էին — բարքերը, նոյնիսկ տարազը) ազադակները կը զգային պարտնիկին ձայնովը: Ու այդ պարտնիկը կը պատմէր մեզի Բաֆֆիի վէպերը, կենդանի, քաղցր, կարծես պրուած էջ մը կարդալով, այնքան իր հիւանդոտ պատանութիւնը գինջը անեցուցած էր ներսէն: Պինդութիւն մըն էր այդ բարբառը լսել իր բերնէն: ...

Թուրք լրտեսին վախը չքացաւ ինքնարհարար: Բայց ահա աւելի մեծը:

— Հա՞յ:

Պատկերութեան նիւթը՝ Եզգային իրավամտութիւնը, որ երեք անգամ գատուած էր բառերուն հեղեղէն հազիւ բույլ մը տեսող խօսքի ընթացքին: Իմ մուսքս շկասեցուց յորդած արիւրունը, որ դուրսնուրս զէպի ինծի շարժումին հետեւելով զիս տեսաւ ու շտետաւ, դառնալու համար իր ջաղացքին: Խօսքը, կարդ մը մարդոց մօտ, դերագոյն ապրումն է: Ձայն շարունակելը՝ սրբազան պարտք, նոյնիսկ ամէնէն ծանր պարտաւնորո պիմաց:

(Շար. 2)

Յ. ՕՇԱԿԱՆ

Յ Ա Կ Ո Ր
Օ Շ Ա Կ Ա Ն



Անթափանցելի խառնուածքի տէր՝ ինքն ալ յաճախ չի կրնար փրկուիլ մտածումի եւ զգացումի անվայսեան բաւիզներէն՝ ուր քերթողական կայտարդանքը եւ իմացութեան ջրվէժը յոյսի եւ խաւարի փոթորիկներ կը յարուցանեն: Բայց կու գայ խաղաղութիւնը եւ մենք կը տեսնենք զերմեռանդ քուրմը ծնրադիր մեհեանի մը աստուածներուն առջեւ, պաշտումի հոգեզմայլ վերացումով:


Ի՞նչ փոյթ, որ իր կշռած ոսկին բացարձակ գտումի մը չէ ենթարկուած երբեմն: Ի՞նչ փոյթ, որ յաւերժութեան խորունկ հայելիին մէջ ան ցոլացուցած է պատկերներ՝ որոնք արժանի չեն յիշուելու մեր ազօրօտմունց շրթներէն: Խելայեղ, հեւասպառ մշակի մը բերքը տուած է ան մեր գրականութեան. անսպառ նաշիւ մը՝ որով սերունդներ կրնան յագեցնալ, լուսակայլակ գինի մը՝ որով ամենէն խստապահանջները պիտի արբեցան երագի եւ գեղեցկութեան ջահերուն տակ:

Մահը կանոնիս եկաւ զինքը բաժնելու մեզմէ: Բայց իբրև ի՞նչ գանձեր ունինք այսօր: Մատնաններուն մէջ անոր հրաշունջ ներկայութիւնը կայ, եւ սիրտը՝ որ բարախեց սաստկօրէն, կը թուի դեռ արիւնի անշէջ կրակ մը արծարծել մեր ցրտասարսուտ մեհութեան մէջ:

Երբ հետզհետէ թանձրամած խաւարը կ'իջնէ մեր շուրջը, սփռվանք մըն է տեսնել անոր համբոյրը, հայոց լեզուի ադամանդէ կողին վրայ բացուած լուսեղէն վերքի մը պէս:

(Անտիպ)

ԱՐՄԷՆ ԵՐԿԱԹ



ՍՏՈՒԹԵԱՄԲ ԶԱՂԱԽՈՒԱԾ

ՍՈՒՏ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

«Սովետական գրականութիւն» ամսագրի գլխաւոր խմբագիրը՝ Ստեփան Կուրտիկեան, որուն Համար սղբացեալ Պարոյր Սեւակ ինը տարի առաջ կը յուսար, որ Գրողներու Միութեան նորընտիր ղեկավարութիւնը «կը գտնի աւելի յարմար աշխատանք», կը շարունակէ սեւակեան Համոզումով իրեն վստահուած անյարժար աշխատանքը, որուն առընթեր կրթման կը ստորագրէ նաեւ «պրական» էջեր, գնեղով անոնց մէջ իր աննշաճ քիչ մը որտէն քիչ մը սիրտ, եւ ընդարձակ հաշիւներէն՝ ընդարձակ հաշիւներ:

«Սովետական գրականութիւն» ամսագրի Ապրիլի թիւին մէջ՝ ան ունի երկու շաբաթ գրութիւններ՝ «Էննիմը Եւ հայերը» եւ «Հանդիպումներ Արմենիայում» ընդհանուր խորագրերներով: Առաջին շաբաթին մաս կազմող էջերը կեղծիքի վրայ սարքուած կեղծ գրականութեան մերկապարանոց նըմոյշներ են, իսկ միւսները կը տառապին անցեալ զարու միջակ ոտմանթիկներուն էջերը ողողած անտանելի աշխատանքներով, որ կրնայ մղիչ ուժ հանդիսանալ մերափոխուած մեր հոգեբանութիւնէն անտեղեակ մարդոց միայն:

«Էննիմը Եւ հայերը» շաբաթին առաջինը կը կոչուի «Լուսաշխարհ համիս գիմ գութան» եւ պատմութիւնն է թրքական եւթադանէն փրկուած եւ Աստրախան ինկած սասունցիի մը, ասոր հարսին ու թոռան, որոնց առիթով Հակոբոսեան գրուած են «Եղածանորէն մինակ» մնացած Հայաստանին՝ ու հայ ժողովուրդին կապակցութեամբ ուստական եւ լենինեան բոլոր առասպելները:

«Էննիմը մեր պատմութեան մէջ իրրեւ զփրկիչ» մտքնելու քրտինքը աւելի առատ է սակայն յաջորդ կտորին ու միւսներուն մէջ: Յաջորդը՝ «Ելի-յիլմ ու բաճաստեղծը»:

Նախորդին մթնոլորտն ու մտահոգութիւնները տիրապետող են հոս եւս: Կը շարունակուին քաղաքացիական կռիւնները: Եւրաթամշիւր ժամը ծանր էր մայրաքղից: Հակաշեղափոխական սպաներից ու եռնկերներից կազ-

մուտն անհետնեցրել էին Գատալիան, Յալակոյէ Սելոն, սպառնում էին Պետրոսը արտաքսել: Կերեմուխի-կրտսեանի բանակները մղում էին դէպի յեղափոխութեան օրացքը: Այդ ժամը օրերուն Սմունիի մէջ Լենին կ'ընդունէ Վահան Տէրեանն ու Սարգիս Լուկաշինը: Հակառակ յեղափոխութեան վրասնեղած բախտին, Լենինի մտահոգութիւնը կը սաւառնի հետուն: Կը հարցնէ.

« Ընկերներ, իսկ ինչպէ՞ս են գործերը Արեւմտեան Հայաստանում: Ինչպիսի՞նք է հայ ժողովրդի վերաբերմունքը սովետական իշխանութեան, նոր Ռուսաստանի հանդէպ:»

Լենինի հիւրերը կը պարզեն Արեւմտեան Հայաստանի ժամը գրութիւնը, պնդելով այնուամենայնիւ, որ «յեղափոխութիւնը վերակենդանացրեց հայութեան ապրելու յոյսերը... Հայաստանում եւ Ռուսաստանի բոլոր վայրերում Յրանք կանգնեցին սովետների կողմը, քարիզագների վերայ...»:

Լենինը, ի հարկէ, կը ժպտի, եւ ժպտելէն կ'ըսէ.

« Բարեկամներս, հայերը ամէնուրեք յեղափոխութեան գիտարձաններն են, մեր ներկայացուցիչները աշխարհի բոլոր ցամաքամասերում:»

Լենինի սմունիական գրասենեակին մէջ պահ մը այսպէս կը ներկայանան հայերը, բայց զիչ մը անց գրասենեակային այդ «հաստատումները» հերքող հարցեր կը յուղուին.

« Ընկեր Տէրեան, ասացէ՛ք ինձ, այժմ ի՞նչ են ուզում հայերը. ուզում են անջատուել՝ ուսմանից, թէ նրանց միանալ:»

« Բանն այն է, որ անստեղծաբար չեն ուզում անջատուել Ռուսաստանից. նրանք գտնում են, որ առանց Ռուսաստանի չի՛ք փրկուիլիս, իսկ արեւմտահայերը ուզում են անկախ լինել:»

Լենինի պատասխանը.

« Այդ հարցը պէտք է որոշի հայ ժողովրդի ազատ հանրաժողովը: Մեր բանուարագիւղացիական կառավարութիւնը պաշտպանում է Ռուսաստանի կողմից օկուպացուած Թուրքահայաստանի մէջ գտնուած օրերուն տեղի կ'ունենայ այս խօսակցութիւնը, որու զօրքերէն պարպուած եւ ջարդարաններու հորդաններուն ստեղծած մղձաւանջային այն բոլորներուն, երբ բովանդակ հայ ժողովուրդի ֆիզիքական զոյութիւնը վտանգի տակ էր եւ մեր ղեկավարութիւնն ու ժարտական ջոկատները ունէին միայն մէկ մտատանջութիւն, — նուազագոյն կորուստով դուրս գալ որու բանակներուն նահանջով եւ թուրք բանակներուն ներխուժումով ստեղծուած ճակատագրական անելին:»

Արեւմտահայութիւնը Դամոկլեան սուրը գլխուն կը մղէր իր գոյութեան կոհերը, մինչդեռ «պատմութեան ճակատը» այդ կացութեան պատասխանատուներէն Լենինին եւ անոր հայ հիւրերուն միացում-անջատում հորովել կու տայ այնպիսի մերկապարանոց դիտումով մը, որ կարծես սուս գրականութեան շեղակոյտէն կուշտ եղած չըլլայինք եւ մեր նորագոյն պատմութիւնը կարիքը զգար նոր նենգափոխումներու:

«Պատմութեան մէջ, Վահան Տէրեան, «այնուամենայնիւ», Լենինի

պէս («ազատ ինքնորոշման իրաւունք՝ ընդհուպ մինչեւ լիակատար անկախութիւն») չի մտածեր, պապէն աւելի պապական է Տէրեան. «Ես այն հաստատ կարծիքին եմ, թէ հայերը առանց սովետների խաղաղ կեանք չեն կարող ունենալ»:

«— Ճիշդ էք դատում, — կ'ըսէ Լենին, — բայց մենք ուզում ենք, որ հուսական բանուարագիւղացիական հանրապետութիւնն այլ ազգերը դէպի իրեն գրաւի ոչ թէ բռնութեամբ, այլ բացառապէս կամաւոր համաձայնութեամբ, այլապէս կը խախտուեն բոլոր երկրների բանուարների միասնականութիւնն ու եղբայրական դաշինքը: Այս բոլորը պէտք է արտացոլուի «Թուրքահայաստանի մասին» դեկրետում»:

Ու քիչ ժը վարր:

«— Հուստացէ՛ք, հայ ժողովուրդը կ'ազատուի թուրքական մզմանանցից, կը կանգնի սցիտալիստական զարգացման ուղու վրայ»: Այս խեղճ ու կրակ ու գրականորէն բոս ամենայնի որբայի խոսակցութեան աթորոյ միտք բանին այն է, որ մեր պարագային Լենինը պատմութեան ներկայացուցած ու պատմական խօսքեր արտասանած («Յեղափոխութիւնը գոհեր կը պահանջէ, ցաւում եմ, որ մէկ միլիոն հայեր եւս գոհ կը գնան») անձը չէ, բողեւիկեան սալը յարդարած ու թրքական ժուրճը դորացած մեծագոյն դուռարիւրը չէ, այլ հանդերձուածն է, բարի՛, հոգածո՛ւ, հայասէ՛ր, փրկագո՛րծ փրկիչ ժը...

«Պատմուածքագիրն» գրչին տակ այնուհետեւ Լենին կը թելադրէ Հիւրերուն կազմել հայերուն օգնելու բոլոր հնարաւորութիւնները եւ առ այդ հրատարակելիք դեկրետին նախադիճը: Եւստով կը կատարուի իր կամօքը, եւ՛»

«— 1917ի Գեկտեմբերի 31ին Լենինի ստորագրութեամբ հրատարակուեց «Թուրքահայաստանի մասին» դեկրետը: Ամբողջ հայ ժողովրդին ազատ ինքնորոշման իրաւունք էր տրուում եւ առաջ էր ծաշուում աշխարհասփիւռ հայերի տուն դարձի հարցը...»:

1917 Գեկտեմբեր 31ին, Հոկտեմբերեան յեղափոխութենէն ընդամէնը երկու ամիս հոտք, երբ ամէն ինչ խառնաշփոթ էր ա՛նգամ Ռուստտանի մէջ, քաղաքացիական կռիւ էր, բանուարագիւղացիական կոռաւարութիւնը սաստկորէն կը ցնցուէր ի՛ր իսկ օրրանին մէջ, ստիպուած ենք մտածել, որ Լենինի այդ դեկրետը հայ ժողովուրդի կապակցութեամբ առողջ ժըղուածներ ունենալէ աւելի՛ ունէր փրոփականաի յետին միտք ժը, այդ օրերուն ասդին-անդին ճրիօրէն բաշխուած միւս դեկրետներուն յար եւ նման արժէք ժը եւ բնաւ կարելի չէ վստահել անոր հայանպաստ ոգիին անկեղծութեան: Ատկէ քիչ առաջ ռուս գիւտուորներուն ըրած իր «Իչպի սուն» կոչը արդէն կը հերքէ դեկրետին մէջ Գնարակուած հոգածութիւնը, իսկ երեք ամիս հոտք (3 Մարտ 1918), Բրեստ-Լիտովսկի դաշնագրով բուլեւիկներուն յանձնառութիւնը Հիմնովին կը հաստատէ «Թուրքահայաստանի մասին» դեկրետին փրոփականաւային բնոյթը, երեւան հանելով ո՛չ միայն Արեւելեան Հայաստանի հանդէպ Լենինի իսկական գիրքորոշումը, այլեւ Արեւելեան Հայաստանի մէկ մասը դիւրութեամբ վաճառքի հանելու անոր սարսափելի դիւրութիւնը:

Սարսափելի է նոյնպէս Լենինի դեկրետը կարգացող վաճան Տէրեանը սա ողբալի յափտակութեան մէջ դնող «պատմուածքագիրին» ծարհութիւնը:

«— Բանաստեղծը կարդում էր արդէն հրապարակուած դեկ-

րնտը, ոգևորում Լեմինով: Լեմին: Գարեհից եկող, ամսկիզբ ու անվախճան լեզբ՝նդ էր դա. առասպել, թէ՞ իրական, երկրային էակ, որ աշխարհ էր եկել՝ մարդը վերակազմելու համար...»:

Իրականությունը գունաւորելու այս կամակորուքները խմբագրելէ ետք՝ Լեմինի անցեալն ու ապագան մեր պատմութեան նժարներուն մէջ շղջուելու երդումով մեր բառերը շարաւանդ այս մարզը կը գրէ:

«— Անցան ժամանակներ, յեղափոխութեամբ համար տագնապալի, լինել-չլինելու ժամանակներ: «Թուրքահայաստանի մասին» լեմինեան դեկրետի կենսագործմանը խանգարեց ռազմականատնարում ստեղծուած նոր իրավիճակը, որ յանգեց Բրեստի ժամանակաւար նահանգին: Հազեկան ինչպիսի՞ տագնապով Տէրեանն էլ մասնակցում էր Բրեստի բանակցութիւններին:

«Բայց պետք էր տակալ, սպասել նպատաւոր օրերի»:

«Պատմուածքագիրը» այնպիսի ձեւով մը դրած է հարցը, որ յեղափոխութեան տագնապալի օրերուն եւ ռազմականաներուն պարզած նոր իրողարձուութիւններուն հետեանք էր Բրեստի դաշնագիրը եւ ոչ թէ ժողաքական վարքագիծի մը դրսևորումը, ու բարենպաստ էլքի մը համար «Պէտք էր տակալ, սպասել նպատաւոր օրերի»:

Ինչպէս ծանօթ է, յեղափոխութիւնը անցուց տագնապալի օրերը, վերջ դասու պատերազմը, բայց Բրեստի անարդարութիւնները սրբագրելու համար սպասուած «նպատաւոր օրերը» եկա՞ն արդեօք, թէ իբ տագնապները լուծած յեղափոխութիւնն ու կնքուած խաղաղութիւնը առաւել եւս ամբացուցին համայնավարներու բրեստեան յանձնառութիւնները:

Շարունակելէ առաջ, Թարմացենք Բրեստ-Լիտուակի դաշնագրին մեզի վերաբերող արամադրութիւնները:

«Բուստանանը կ'անի այն ամէնը, ինչ որ իրենից կախուած է, որպէսզի ապահովի իր զօրքերի դսւրս բերումը Արեւելեան Անատոլիայի նահանգներից եւ վերջիններիս կանոնաւոր վերագարձը Թուրքիային:

«Բուստական զօրքերը պետք է անյապազ դուրս բերուեն մա- եւ Արտեանի, Կարսի եւ Բաթումի մարզերից»:

Այս մտնուքը արդարացեալու համար՝ առաջ կը քնուին յեղափոխութեան տագնապալի օրերը եւ արտաքին ճակատներու վրայ պատերազմական զործողութիւնները, բայց հետագայ տարիներուն, 1921ի՞ն, 1924ի՞ն: Մոսկուայի, Կարսի, Լոզանի օրերո՞ւն եւս տագնապալի շրջաններ կ'ապրէր յեղափոխութիւնը, որ Հայաստանի համար բոլորովին աննպաստ Բրեստի դաշնագրին արամադրութիւնները հաստատող յաջորդական զիջումներ ըրաւ Լեմին՝ հայ ժողովուրդին իրաւունքները ոտնակոխելով շարունակ ու շարունակ պօրացնելով ու հովանաւորելով Թուրքը:

Մոսկուայի դաշնագրով (21 Մարտ 1916) վերջնականապէս կը գծուէին Խորհրդային Ռուսաստանի եւ Թուրքիոյ սահմանները եւ Թուրքիոյ կը յանձնուէին ամբողջ Կարսի եւ Արտահանի գաւառները, ինչպէս եւ ամբողջ Սուրմալուն:

Նոյն տարին (1921 Սեպտեմբեր-Նոյեմբեր), Թուրքիոյ եւ Անդըրկովկասեան երեք հանրապետութիւններուն միջեւ խաղաղութեան դաշնեք կնքելու համար կայացաւ Կարսի խորհրդաժողովը, ուր բացի Մոսկուայի դաշնագրէն՝ մերժուեցան Թուրքիոյ վերաբերող բոլոր դաշնագրերը, ներառեալ Սեւրի դաշնագիրը, եւ մ'չ միայն հաստատուեցաւ Մոսկուայի դաշ-

Նագիբը, այլևե Նախիթեանը առնուեցաւ Աղբակչեանի Հովանաւորութեան տակ:

Իսկ Լօզանի մէջ, Լենինի կառավարութիւնը, Լենինի ողջուցը, նորէն ուրացաւ Հայաստանն ու Հայ ժողովուրդին իրաւունքները եւ իբ ներկայացուցիչին բերնով յայտարարեց.

«Ետընդային Ռուսաստանը աւառնում էր Լօզանի Խորհրդա-
ժողովի կամայ սեղանի վրայ եւ հենց Յա էր, որ խնցարում էր
մեծ պետաւթիւններին յարձակուելու եւ ճգնելու փոքրիկ Թուր-
քիան»:

Բրեստի բանակցութիւններուն («Հոգեկամ ինչպիսի՞ տագնապ») մասնակցող Վահան Տէրեան մեռաւ այն ժամանակ, զերբ հայրենիքում դաշ-
նակցականներն էին», այսինքն՝ շնասաւ միամիտ Համայնավարներուն երա-
զած ճնշաստաւոր օրերին, շտեաւ բրեստեան ոգիով իբ հայրենիքը երկ-
րորդ, երրորդ եւ չորրորդ անգամ սակարկութեան նիւթ դարձուցած իբ կուու-
քին արարքները, որոնք ով գիտէ ինչպէս պիտի քառասպտակէին հոգեկան
իբ տագնապները ու պատրանաթափութեամբ պայթեցնէին հոգին:

Բրեստը աննպաստ հաշուելով ճնշաստաւոր օրերին՝ սպասող, այլ
աննպաստին քառասպտակուած երեսները տեսած մարդոց նպաստը կալի հո-
գեքանութիւնն է անշուշտ աղիտային, այդ բուրդէն ետք այդ բուրդին պատ-
ճառ դարձող առաջին անձը փառաբանող մարդոց ստրկահաճ զեղումը:

Որքան ալ ճգնինք առասպելներ հիւսել, հայերուն հանդէպ բարեհո-
պութիւններ վերագրել Լենինի, Հեքիաթներու հերոսներուն հետ շփոթել
զինք, առարկայական իրականութիւնը կը մնայ այն, որ հոկտեմբերեան յե-
ղափոխութեան առաջնորդին փրկագործութիւնը այս փուլերէն անցաւ եւ
աղիտայի եղաւ մեզի համար:

Այդ փրարներումներուն ու հետեւողներուն դիմացն էր, որ բարո-
յական իբ աւարեկումէն առաջ, 1923-1924 թուականներուն, Ա.Կաթիք Իսա-
հակեան պիտի խմբագրէր իբ ողբերը:

«Ա՛յս, ափսոս կարսն ու վաճը ու Մուշը: Աճիծուած բուլիկները փը-
նացրին մեր հարցը:

«Բուլշեիզմը եղաւ հայութեան գերիզմանը, սկսած 1918 թ.
«Թող ո՛չ մի հայ շյուսայ, թէ քանի բուլշեիզմը կայ՝ Հայաստանի
հոգին վրայ մի թիգ հոգ կ'աւելանայ, երբե՛ք. դեռ պիտի խլեն: Կարսը,
Իզդիլը կարած են, մինչեւ սովիտների անկման օրը»:

«Լենինի հաւար հայկական հարցը միբոց էր եւ ոչ թէ նպատակ», պի-
տի գրէք Հետադային բուլշեիկ պատմարան Բ. Բորեանը եւ ճիշդ կ'ըսէր, ո-
րովհետեւ պատմական բուրբ առեւտները կը հաստատեն, որ Լենինի հա-
մար Թուրքիան աւելի կարեւորութիւն կը ներկայացնէր, քան Հայաստա-
նը: Թուրքիոյ զլխաւորութեամբ Արեւելքի ժողովուրդները ոտքի հանելու
քաղաքական հեռանկարներ իրագործելու մտքով դարդած էր ան եւ ոչ թէ մեր
վէրքերուն դարձանումով, ինչպէս կը ճգնին ցոյց տալ պատմութեան ան-
տեղեակ քաղմութիւնները առտով կշտացնելու ելած խարեքաները:

Համաշխարհային յեղափոխութիւն: Ա՛յս էր Լենինի իտէալը, որուն
համար իբ պնդումով զոհած էր 15 միլիոն ուսւ եւ պատրաստ էր զոհելու
եւս 15 միլիոն եւ բնաւ տրամադրէր չէր հայ ժողովուրդին ազգակները
ունկնդրելու: Չմոռնանք մեր վէրքերը իրեն բացող մարդոց երեսին շղբը-
տած իբ խօսքը:

«Համաշխարհային յեղափոխութիւնը գոհեր է պահանջում:
Յաւում եմ, եթէ մէկ միլիոն հայեր էլ գոհուեն»:

Հայաստանի աղբյուր ծանրագոյն օրերուն, ներխուժող ջարդարարնե-
րուն դէմ միջոց մը ազդեցող իր հայ զինակիցներուն առջեւ այս ոչին էր,
որ գրտուրեց Լենին, ու կեղծ չէր իր արտայայտութեան մէջ, ա՛յդ էր,
կեղծը փաստերը չըջանցելով անոր բերնին Հայաստան արտայայտութեան
նէր զնոց կամակատարներն են, Վեյնիլը եւ հայերը» եւ նման խորապիտե-
րու տակ սուտ գրականութիւն մշակող ստութեան ասպետները, ժամանա-
րարար խնդրոյ առարկայ գրութիւններուն հեղինակը, որ շեղուած իր
նուն պատմութեան մէջ եւս կը շարունակէ նոյն լարը նուազել, քանական
թուականներու աշնան Հայաստան ներխուժող թրջական հորդաններուն ա-
ռիթով կրկին բանալով Լենինի բերանը.

«Պէտք է ետ կանգնեցնել քուրբական հորդանները, փրկել
Հայաստանը: Այժմ Թուրքիան զեկավարում են կադետները, նա-
ցիոնալիստները, սրունք պատրաստ են մեզ ծախելու: Անտանտին:
Պէտք է ամէն գնով պաշտպանենք հայոց գոյութեան ու անկախու-
թեան իրաւունքը»:

Այս այն շրջանն էր, երբ Քեազիմ Գարապէտի փաշան Անգարայի իր
կատարութեան կը զեկուցէր.

«Մտտ օրերս ես պէտք է զեկուցեմ ձեզ, որ Հայաստանը զըն-
չըւած է քարտէսից»:

Քեազիմ Գարապէտի իր սեփական ուժերուն վստահելով չէր, որ կը
յլէր Հայաստանը ոչնչացնելու յոխորտանքով չէ իր հեռագիրները, ունէր
սպասելով ուրիշ պատճառ մը, բոլշեւիկներուն հետ կնքուած դաշնագրի մը
քաջալերող ուժը, իր մէկ նամակին մէջ պարզուած հետեւեալ փաստը.

«Մեր, Ադրպէյնանի եւ բոլշեւիկների միջև կնքուած պայ-
մանների հիման վրայ, մեր սպաների, բժիշկների եւ պաշտօնեաների
մեծ թիւ գնացել է Ադրպէյնան: Թաշեւիկները մեզ առաջարկեցին
անյապազ պատերազմական գործադուրքներ սկսել, հայկական
սահմանների վրայ՝ հայերի դէմ, Կիլիկիայի սահմաններում՝ ֆը-
րմասցիների դէմ... Ադրպէյնանի գործերը պէտք է առիթ որոնեն
ընդհարուելու Հայաստանի հետ եւ Անատոլիայում գտնուող քուրք
գործերի հետ միասին անցնեն Հայաստանի սահմաններն ու սկսեն
գիւտարակամ գործադուրքներ Հայոց Հանրապետութեան դէմ»:

Կը հասկցուի, որ Գարապէտի այդպիսի համարձակ քայլեր չէր կըր-
նար ասնել, եթէ Լենին եւ իր բոլշեւիկները դաշնագրերով եւ տոսնձին հա-
մաձայնութիւններով համբան հարթած չըլլային իր առջեւ. հայ բոլշեւիկ-
ները, նոյնպէս, այդքան գրկարաց չէին ընդուներ Սարիզամիւրը գրաւելէ
ետք դէպի Կարս առաջացող թրջական բանակները, չէին բաշխեր հետեւեալ
բովանդակութեամբ թուցիկներ, եթէ չունենային Լենինի քաջալերանքը.

«Հա՛յ բանուոր, հա՛յ զիւզացի ու հա՛յ զինուոր,

«Քեմալական յեղափոխական բանակը՝ քուրք բանուորը, աշ-
խատուոր զիւզացին ու յեղափոխական սակեարը, պարգած խոր-
հըրդային կարմիր գրօշը, գալիս են փրկելու ինչ էն դահիճների
ձեռքից եւ տապալելու էն արիւնը ծծող դաշնակների անարգ լուծը:

«Ձկրակես, հայ աշխատուոր զինուոր, եղբայրական քուրք
բանակի վրայ, նա ինչ բերում է ա՛յ թէ ստրկութիւն, այլ ազատու-
թիւն. նա գալիս է օգնելու ինչ էն սրբագան պայքարի մէջ: Երբ
տեսնես կարմիր դրօշը, ա՛ն գէնիքդ եւ միացիր եղբայրական քուրք
բանակին ընդդէմ էն սխերիմ թշնամիների, ընդդէմ անարգ դաշ-
նակներին»:

Այս եւ նման ուրիշ միջոցներով հայ բուլշեւիկները քայքայեցին հայ-կական բանակը, մէկ կողմէ առիթ տալով «եղբայրական թուրք բանակին», որ խրուի «հայու հայրենիքի սիրտը», եւ միւս կողմէ ազերսազին ներկայացան Լենինի. «պատմուած քազրին» թշուառ բնազդութեամբ՝

«— Վլադիմիր Իլյիչ. խնդիրն այն է, որ երկիրը բաղադրվին ամպաշտպան է թողնուած թարբակյան հողդաների ստազ:

«Իլյիչի հայեացքը սրտեց.

«— Իսկ որսն՞դ է ազգային բանակը եւ այն դաշնակցութիւն կուսակցութիւնը, որ ստորագրութիւն դրեց «Թուրքահայաստանի մասին» դեկրետի նախագծի տակ:

«— Վլադիմիր Իլյիչ, ազգային բանակը լիովին քայքայուած է. իսկ դաշնակցների կուսակցութիւնն ամբողջովին սնանկացած է: Փռզովուրդը երես է դարձրել նրանից: Իր միակ յոյսը դրել է ձեր օգնութեան վրայ»:

Լենինին կ'իմացնեն նաեւ 1920 թուականի աշնան Հայաստանի ներկայացուցած թշուառ կառութիւնը պատկերացնող պատմածնախ անդամ Վլադիմիր Իլյիչ յօդուածին բովանդակութիւնը, որուն ի լուր բուլշեւիկն կ'այլափոխուի, կ'ը կնճոտի դէմքը, կ'ը մտածէ Անտանտի պետութիւններուն մարդասիրական փուռ ճանքուն մասին ու, գտնելով, որ «մինչեւ եիմա դիւանագիտական ոչ մի նոտա արդիւնք չի տուել», կ'ը նստի ու կ'ը կ'ը նա՝ մակ մը, ուր՝

«Քաղաքիւրոյի բնկերներին առաջարկել էր Հայաստանը սովետական հանրապետութիւն հռչակելու համար անյապաղ ազգամաքառական օգնութիւն ցոյց տալ հայ բնկերներին»:

Նկատելի է Հարկաւ նախադատութեան մէջ կիրարկուած նրբութիւնը: Թրքական Հորդաներու դէմ օգնութիւնը կ'առաջադրուի ընծայել ո՛չ թէ Հայաստանին ու հայ ժողովուրդին, այլ՝ «հայ բնկերներին», մայիսեան պատմութեան «Հերոսներուն», անոնց, որոնք թուրք բանակներու ներխուժման աչք ճակատադրական օրերուն ուրիշ պարսկահանութիւն չզգացին եթէ ոչ վերը յիշատակուած թուրքիկն ոգիով քայքայել հայ ժողովուրդին դիմադրական կորովը ու երազել, որ «Լենինը մեզ կ'օգնի ազատագրական մեր պայքարում եւ կարմիր դրոշները շուտով կը ծփան մեր լեռնաշխարհում»:

Ու այս բոլորը ա՛յն օրերուն, երբ բուլշեւիկներու եւ թուրքերու դժբախտութեամբ Հայաստանէն արդէն խլուած էին Ղարաբաղը, Զանգեզուրն ու Նախիջևանը: Ասոնք, ի Հարկէ, զի՛ մը զի՛ մը մարդկային դրսեւորումներ են եւ բնաւ ազերս չունին այդ օրերուն ապրող զտարին հայ մարդուն խորունկ տաղնապնդուն հետ: Բայց այդպէս էին հայանուն առաջին բուլշեւիկները: Հայաստանի մարմնին բացուած վերջերուն կոտորանքը զգալու եւ թշնամիին բռնապարտած եզերքները վերանուսնելու տնդով բռնկելու փոխարէն՝ հարազատին դէմ ազատագրական պայքար մղելու կը ճգնէին ու առ այդ թուրքին օր ցերեկով օչնող Լենինէն օգնութիւն կ'ակնկալէին, մեր լեռնաշխարհին վրայ կարմիր դրօշ ծփացնելու ծփուն պաւանտութեամբ:

Չուշանար անուշառ նաեւ Լենինի ծրագրեալ օգնութիւնը, եւ՝

«Շուտով կարմիր բանակի զօրամասերը, հայ պարտիզանների հետ, անցնելով Ղազախը, օգնութեան են հասնում ազատամարտիկներին ու զորքանք հայ գիւղացիներին»:

Պատմութիւնը ծանօթ է անկէ ետք, ու «Լեռնագիրը» անուն «պատմութեան» ալ պատմութեան յար եւ նման է՝

«Առանց դիմադրութեան փուլ է զայիս դաշնակիւորի բռնապետութիւնը .

«Ինկտեմբեր երկուսին զեկուցում եմ Լեմիճին .

«— Վլադիմիր Իլյիչ, Հայաստանը յայտարարուած է սովետական: Ահա՛ յեղկովի հեռագիրը:

Եւ ահա՛ ամբողջը:

Կացութեան տրուած է այնպիսի գունատրում ժը, որ կարծես անպաշտպան Հայութեան վրայ արշաւող թուրք հորդանները մեծ վտանգ ժը չէին ներկայացներ Հայաստանի համար, սովը աւեր չէր գործեր ու սովահար մեր սահմանակիցներուն մեր վզին սեղմած օղակները աւելի աղիտայի չէին, քան Դաշնակցութեան ներկայութիւնը, որուն գրեթէ անսովորական փլուզումով կը վերջանար ամին ինչ: Վերջացա՛ւ սակայն ամէն ինչ: Լեմին ո՛ւր տարաւ սովը, ո՛ւր բերաւ թուրքը, ո՛ւր հասցուց սովահար մեր գրացիները, ինչո՞ վերածեց կորսուած անկախութիւնը վերականգնելու հայոց յոյսերը, որ պատմուածքագիրքը կը համարձակի անտեսել մեր կորուստները եւ երեսանկեալ փառաբանել կորստաբեր կուռքը:

Իայց այդ ամբողջին մէջ, ինչպէս կը նկատէք, կայ իրականութեան համապատասխանող միտւոր ժը: Արդարեւ, պատմուածքագիրին տակնուվրայ ըրած ճշմարտութիւններուն ու ասկնուվրայ արամբարանութեան մէջ կայ մէկ թուականի պարկեշտ ընկալում, «Ինկտեմբեր երկուսին» կապուած պատմական փաստը .

«Ինկտեմբեր երկուսին զեկուցում եմ Լեմիճին»:

Ուղիղ եւ տարիներէ ի վեր, հաս թէ հոն, կուրութիւնը ծայրագոյն աստիճանի հասցուցած մարդիկ իրական թուականը (Ինկտեմբեր 2) ուրանալով՝ Հայաստանի խորհրդայնացումը տօնեցին Նոյեմբեր 29ին, Ազգայնականի սահմանակից իջեան գելը մասն թուլիւիկ փոքրաթիւ խմբակի մը սպաստամբական անորոշ փորձը ընդհանրացնելով ու գունազարդելով, մինչ այդ օրը կանգուն էր տակուին զգալականների բռնապետութիւնը եւ Ռուսաստանի լիազօր ներկայացուցիչ Լրգրանի հետ կը վարէր օբիւսական բանակցութիւններ, որոնք յանգեցան Հայաստանի խորհրդայնացման, «Ինկտեմբերի երկուսին»:

Ինչպէս ինկտեմբերու կարգին սկսած է ուրիշ խորհրդայնացման խեղաթիւրումն ալ իր գոյնը տալ, տեղը գիլիլ ճշմարտութեան, «Ինկտեմբեր երկուսին» .

Ու հիմա դարձեալ կարդացէք «Ինկտեմբեր երկուսին» հետեւող մասը .

«Վերջապէս, լուծուեց դարերով անլուծելի մնացած հայկական հարցը, վերականգնեց հայ պետականութիւնը»:

Ահաւորը այս է սակայն, այս համակերպութիւնը, լուծումը այս ձեւով ու այս սահմաններուն մէջ ընդունելու սահմանափակութիւնը, այս ուրացումը:

«Վերջապէս լուծուեց»...

Հապա՞՛ւմ եր հողե՛րը, մեր հողե՛րը»:

Հայկական հարցին բազկացուցիչ միւս մարզե՛րը...

Բրեստ-Լիտուսկի դաշնագրով թուրքին շնորհուած Վանայ, Էրզրումի, Պիթիսի, Սարիղամիշի, Կարսի ու Արտահանի մարզե՛րը...

Կարսի դաշնագրով Հայաստանէն անջատուած Նախիջեւանը հապա: Ստալինեան սահմանադրութեամբ կատարուած վերջին մասնատումնե՛րը, Ղարաբա՛ղը (Աշրպէյճանին), Ախալքալաքն ու Լոսիի մէկ մասը (Վրաստանին):



Կարմիրներէն զատ կրնա՞յ արդեօք մէկը առանց կարմրելու նման եղերական մասնատումներէ ետք Հայկական Հարցը լուծուած նկատել :

Ինչպէս կ'երեւի՝ Հայաստանի փրկիչին աչքին ամէնքը, մեր բոլոր դրացիները պահանջատէր էին, իսկ մենք՝ միայն պարտական : Միւսները իր կտաքին լծելու համար ամէնուն բաժին հանեց ան մեր հողերէն, միաժամակ հողեպէս հարստահարելով մեզ, ստիպելով հայրենի ժողովուրդը, որ քար դէմ սրտին ու ուլտանա աղաղակէ իր արժանապատուութիւնը յայտ եւ անյայտ մեռնարկներով խոցած քաղաքական Հաշուախօղիքներուն...

Ըստ խնդրոյ առարկայ լենինեան այս գլարքը՝ թխող շարքային դրէ-չին, տակաւին՝

«Լենինը արագ կարգում է աւետաքեր տողերը, վերցնում գը-րիչը, գրում է պատասխան հեռագիրը-

«Աւետաքեր տողերը»...

Կարծես թուրք հորդաները ետ մղուեցան բուլշեիկներու բարոյական ու դինական քաջակերանքով դիւրութեամբ նուաճուած հայրենի մեր եղբորներէն, Հեռացան Ղարաբաղէն, Նախիջևանէն, Կարէն, Արտասանէն, Կարծես քաղաքացան մինչև պատմական Հայաստանի սահմանները ու ցնծութիւն առթող լուծում մը ունեցաւ Հայկական Հարցը... «Աւետաքեր տողերը» :

Ու աւետաքեր տողերուն տուած Լենինի արձագանգը-

«Տրեւա՛մ. Հայաստանի ազգայնապետական կոմիտէի նախագահ ընկեր Կառնանին: Յանձն մեզ ողջունում եմ իմպերիալիզմի մեղաւորացրուած աշխատակրական Մովսէսական Հայաստանին: Ձեմ կանկաւում, որ Դուք կը գործադրէք բոլոր բան-ները՝ Հայաստանի, Թուրքիայի, Ադրպէյջանի աշխատակրների միջեւ եղբայրական համբարշխութիւն հաստատելու համար» :

Լենինի պատասխան Հեռագրէն այն սպաւորութիւնը կը ստացուի գարձալ, որ Հայաստանի վրայ արշաւող թուրք հորդաներ չեն եղած, Արդարեւ յիշանք այդ պահուն ամբողջովին չէ թրքացած, Հայաստանի մէջ այդ պահուն գտնուած է միայն մէկ կործանարար ուժ, «Խաչնակների բրո-նապետութիւնը», որուն տապալումէն ետք լուծելի Հայկական Հարց չէ մը-նացած այլևս, լիացած է ամէն ոք եւ ազգամիջեան խաղաղութիւն մը հաս-տատուած շահագրգիռ երկիրներու միջև :

«Պատմութեան քաղաքը» այգպէս ալ ներկայացուցած է դրութիւնը-

«Մի հայլուց անդորր էր իջել Իլլիչի դէմքին, ներքուն աչքե-րին: Վերապալէս, լուծուեց դարեմով անլուծելի մնացած հայկական հարցը, վերականգնեց հայ պետականութիւնը...» :

Աւելորդ է կրկին տնգամ վկայակոչել պատմութիւնը: Միայն թէ՛ եղածը պարզասպէս վարչակարգի փոփոխութիւն մըն էր, որ ո՛չ միայն չլուծեց գրարերով անլուծելի մնացած Հայկական Հարցը», այլևս ասոր-անոր բաշ-խեց վերանուաճուած հողերուն մէկ մասը ու բարդացուց նուաճելին հա-րաւորութիւնները :

Պատմութիւնը կ'ըսէ տակաւին, որ Լենինի անդորրը անվրդով չմնաց եւ «աշխարհի իմաստուն մարդը» չէր իմաստուն չէր եղած իր հայաստան-եան ճորտերուն կարողութիւններն ու մեր դրացիներուն ախորժակները գը-նահատելու հարցին կապակցութեամբ: Իրադարձութիւնները ծանօթ են բո-լորին: Հայաստանի մէջ իշխանութեան գլուխ եկած համայնապար առաջին ապիկարները այնպիսի՝ ծայրայեղութեան տարին անարժանութեան իրենց բարդոյթը, որ ընդամէնը երկու ամիսներու ընթացքին մէկ կողմէ քառսի մը վերածեցին երկիրը եւ, միւս կողմէ՝ թուրքերուն, վրացիներուն ու ադրբ-

պէջանցիներուն ըրած իրենց Հոգային զիջումներով առիթ տունն այն խոր գիտնութեան, որ ծառայեցաւ հետզհետէ, խորացաւ աւելի՛ ու աւելի՛ եւ պայթեցաւ ի վերջոյ Համաժողովրդական շափով մը:

Այդ օրերու մեր պատմութեան բուրբ դերակատարները յիշեալ իրադարձութիւններուն մէջ կը գանձն ֓նտրուարեան Համաժողովրդական ապրտամբութեան պայթուցիկ սերմերը, իրողութիւն մը, զոր մինչեւ անգամ թանձրամբիտները կ'ընդունին այսօր, կ'ընդունին նոյնիսկ լենինեան շարքեր սարքող անասող զպիւրները: «Պատմութեան զգիւցումը կրցած է երբորդ անգամ պարկեշտ ըլլալ ու ճշմանիպումներն կտորին մէջ իրականութեան հաւատարիմ մեալով սա թոտերը դրած է լենինի շրթներուն»:

«Չմայած նախագրողագումներին՝ մեր հայ քնկերները աչալուրջ չեղան եւ դաշնակներին հնարաւորութիւն տուցին ստի կանգնել, խռովութիւն կազմակերպել: Անկասկած, այդ արեւմտեան դասիւնից կարելի էր խուսափել»:

Անկասկած...:

Երկարեցաւ: Վերջացանք՝ մեր սկսած տեղէն, զիմելով դարձեալ Պարոյր Անակին, սեւակեան սա ախտանշաններն այս անգամ:

«Մեր խմբագիրներն ու հրատարակիչները պիտի յիշեն Տէրեանի զարմանալի պարզ եւ իր պարզութեան մէջ համարեղ խօսքը. «Ենանքի մէջ գուցէ կեղծիքը այնքան աչք չի ծակում, որքան գրականութեան մէջ»: Իսկ մեր խմբագրութիւնների եւ հրատարակչութեան զոններից, ինչպէս սիրտառատ մեքենայի կնճիթից, երբեմն տեղում է յափածոյ եւ արձակ յայնպիսի խտտան, որի մէջ մեր ճշմարիտ, հարուստ, բազմաբովանդակ կեանքը վերածուում է կեղծիքի՝ կեղծ բախումներից մինչեւ կեղծ հոգեբանութիւնը, կեղծ սիւսններից մինչեւ կեղծ գաղափարը»:

Լենինեան շարքերու կեղծիքով ու խեղճութեամբ սարքուած շարքային կտորներուն անկարկող Անակի գգոտացնող տողերը գրուած են մէկուկէս տասնամեակ առաջ, բայց սմանք, սա ի շողէ գրական արժանիքներու՝ կը շարունակեն տուրք տալ կեղծիքին, որով սղողուած է «Լենինը եւ Հայերը»:

Բայց կայ աւելի ապշեցուցիչը: Այդ շարքին եւ յաջորդին վերաբերող եւ անոնց կցուած սա ծանօթութիւնը.

«Պատմութեան մեքենայներն ու անկարկները Գրողների Միութեան յայտարարած մրցանակարաշխութիւնում 1973 թ. արժանացել են մրցանակի»:

Մրցանակի՛, եւ այն ալ՝ Գրողներու Միութեան կողմէ:

Յանուն գրականութեան քով քովի բերուած յիշեալ կեղծաւոր էջերը այնքան ընդդիմացուցիչ չեն թերեւս, որքան արդարաւստի է Գրողներու Միութեան կիրարկած շափանիչը:

Գրականութեան խեղճիքը (կուրտիկեան) լենինեան բաներուն կը դիմեն արդեօք, թէ լենինեան բաները զեռեւս կը շարունակեն խեղճացնել ու բիշները (Գրողներու Միութիւնը):

Ճշգրիտ պատճառը չենք գիտեր: Խեղճութիւնը կայ ու կայ...:

Գ. Պ Ը Լ Տ Ե Ա Ն

Անդրատառը, Ինտրա
եւ Տ. Զրաքեան

1-Յ.— Զրաքեան եւ Ինտրա կը դրեն տարբեր գրութիւններ եւ առանձին անունած ամէն մէկը կը խօսի տարբեր բանի մասին: Հոն՝ ուր Զրաքեան կը խօսի գրքին ճոզիին մասին, կ'ամփոփէ, կը համադրէ ու կը համակարգէ այն բողոքը, որ Վնեւաշխարհի մէջ կը մնայ ցրուած, անկարգ ու տարտամ: Զրաքեանէն դիտուած գրութիւնը կը դառնայ լեզուի, ոճի, արտայայտութեան մեւի հարց: Յօդուածաչարքի առաջին իսկ պարբերութեան մէջ՝ Զրաքեան կը գրէ. «... միայն պարտաւորուած եմ խօսքի նիւթ ընել մանաւանդ գրքին այն հանգամանքները, որ խնդրոյ առարկայ դարձան կամ թուեցան դառնալ, այսինքն՝ Վնեւաշխարհի լեզուն ու ոճը, եւ իմաստութիւնն ու ոգին, թէեւ այս մերջինը... խնդրոյ նիւթ չեզաւ...»(34): Իսկ Ծանօթութեան մէջ, ուր Զրաքեան չի հետեւիր ընթերցողներու դիտողութիւններուն, արդէն գրուած է. «այդ թերութիւնք ըլլան լեզուական յանգանութիւններ, մերթ անտղի եւ կանոնազանց, բացատրութեանց խրթնութիւններ, տպաւորութեանց չափազանցութիւնք, իմաստասիրական անորոշութիւններ, եւ ալլի, կարեւի է զանոնք բխցնել այն պարագայէն, թէ հեղինակը իր ներքին վիճակներուն սաստկութենէն հարկադրուած է հաւատարիմ մնալ անոնց եւ, ո՛չ միայն անոնց իսկութիւնը արտայայտել՝ այլ նաեւ անոնց զոյացման, երեւման մեւը. թէ պարզապէս չիլ մը շփացուած է այդ վիճակները...»(35):

Այստեղ Զրաքեան կը ստորագծէ գրութեան լեզուական մակարդակը: Ան կը կարգայ գրութիւնը՝ մեկնելով լեզուական հիմնադրերէն, առէն, բառաստեղծութիւն, ոճ, գրելակերպ, կառույց: Յօդուածաչարքին ամբողջ առաջին մասին մէջ՝ Զրաքեան կը զարգացնէ բառաստեղծութեան տեսութիւն մը, որուն իրապարծուած նմուշները կը գտնենք Վնեւաշխարհի մէջ: Աւարտած գրութեան ընթերցումին մէջ ընթերցողը նկատի ունի ո՛չ միայն արդիւնքը, այլև անոր արտադրութիւնը, աշխատանքն ու գործողութիւնը, այն բոլորը, զորս կը կոչենք գրողական գործողութեան մակարդակ: Մինչդեռ Վնեւաշխարհի տարածքին, պիտի տեսնենք այս գրութեան երկրորդ մասին մէջ, Ինտրայի դէմ յանդիմանական դիտակցութիւնը կը բանայ—կը ծածկէ այդ մակարդակը, կը բացառէ, կը փակագծէ գործողութիւնը, ենթարկելով լեզուի աշխատանքը փակագծումի մը, մինչև որ այդ ծածկումի ծայրագոյնին լեզուի հարցը խուժէ գրութեան ներս՝ իրրեւ անզանցելի փոս ու վիհ:

(34).— ՆՆԳ. Ա:
 (35).—Ն. էլ թԵ:

Հոն՝ ուր Ինտրա կը գրէ իրը, մարդը, մայրը նոյնութեամբ՝ Պնջելով մասամբ լեզուին թանձրութիւնը նշանակեալին առիւեւ, հոն Ձրաքեան կը կարդայ ու կը յայտնարծրէ գրութեան լեզուական եզրը, անոր գորարկութիւնը: Հետեւեալ հաստատօր կ'երթայ այս ուղղութեամբ. «Տեսէք այն հաստատօն, ուր Հեղինակը կը պատմէ խնթին մայրը, որ կը լսուի տախտակորմին հետէն (էջ 141): Ինչ անվերջ պարբերութիւն: Յիմարին քարոզը սակայն՝ անկապ դադարեցնելու իսկ շարք մ'է, անվերջօրէն հոսուն. եւ մանաւանդ թէ յտակօրէն լսելի չէ. ինչ որ որոշապէս զգալի է՝ Ձայնն է միայն, որ այլեւայլ ելեւէջներ, ընդհատումներ, հարցականութիւններ, այլապէս եղանակաւորումներ կ'ունենայ, պահելով միշտ իր ինքնութիւնն ու ընթացքին միութիւնը: Ինչպէ՞ս կրնայ պահանջուիլ, որ Ինտրա այս անվերջ մայրին իր վրայ բրած տպաւորութիւններու շարքը տրոհէ՝ մինչդեռ կ'ուզէ եւ կրնայ զայն ճշմարտեամբ հաղորդել նաեւ ընթերցողին... Ուրիշ էջի մը վրայ (էջ 26) իր յուշերուն անցքը կը պատմէ. եւ իր լեզուն ալ կը նմանի այդ երկարամէջ իրողութեան»(36): Գրել ո՛չ միայն հոգեվիճակին նկարագրութիւնը, իբրեւ աւարտած արդիւնք, այլև անոր յատկացումը, մեաւորումը. ո՛չ միայն խորհածը, այլև խորհիլը, զի խորհածներուն հետ խորհիլն ալ(37): Գրել իրողութիւնը նոյնութեամբ, տալ գիրին մէջ իսկ այդ իրողութեան ներկայութիւնը. ահաւասիկ գրելու զբնականօրէն եղանակ մը. «Ապահովապէս բնութենական մ'է այն գրագէտն, որ իր մտածման թոյլ կու տայ ընթանալ ու ճիւղաւորուիլ ամէն անուն ու ծաւալուն բանի պէս, առուի մը, բոյսի մը պէս, գործարանաւորութեան մը պէս, ամէն շանդարտօրէն կամ բնօրինապէս (НОГМ.) կենսալի բաներու նման»(38): Յատկանշալկանը հոս գրելակերպին բնականացումն է. գրել առուի պէս, բոյսի պէս, իրերուն տալով իրենց ընթացքը, ձգելով, որ ըլլան ինչ որ են, կենսալի երևույթներ: Ինտրայի ճիւղաւորուող նախադասութիւնները, պարբերութիւնները կը կրկնեն աշխարհի իրերուն թաւալը, «կ'երկնան ու կը պահպանեն այս շարժման տեւողութեան զգայութիւնը»(39): Այս իմաստով գրելը չի մասնաւորեր արդէն զոյ գաղափարներ, աւարտած իրենք իրենց մէջ եւ այսպէս ընդօրինակելի, այլ կը յայտնագործէ գաղափարներ:

Ձրաքեանի գրութիւնը ցոյց կու տայ Ինտրայի գրութեան բնականութիւնը, կենսալիութիւնը: Գրելու նման եղանակ Ձրաքեանի համար նկարել է. «Իր ոճն նկարագրող է, ինչպէս նաեւ իր գրին յաճախ նկարել մ'է. յատկութիւններ, որոնց վրայ խօսեցան քննադատք: Բայց այս յատկութիւնք կու գան ո՛չ թէ Ինտրայի գեթյանդիմանական մտքին համադրողութեանէն. եւ նկարչութիւնն, արձանագործութիւնը, ճարտարապետութիւնը համադրողութեան կերպառութիւններ, մեւեր են, ինչպէս Երաժշտութիւնն ու Գրականութիւնը կերպառութիւններ, եղանակներ են վերլուծողութեան... (Գրականութիւնը): Ո՛չ բուն գոյնն ու մեւը, ո՛չ բուն մայրը կրնայ տալ. բայց կ'նմանի այն անգոյն, եւ անմայն, եւ անձեւ երկարական հոսանքին, որ աչքին մէջ գոյն ու մեւ, ականջին մէջ մայն յատալ կը բերէ, հաւանօրէն նաեւ ուղեղներուն մէջ հոս եւ բերնին մէջ համ»(40): Գրելը՝ նկարելու իւրապա-

(36) — ՆՆԳ. Զ: «Ենթաշխարհի էլեմէնտը քրաքեանի կողմէ տրուած:
 (37) — ՆՆԳ. Ա:
 (38) — ՆՆԳ. Յոյն:
 (39) — ՆՆԳ. Զ:
 (40) — ՆՆԳ. Զ:

տուկ տեսակ մըն է ուրեմն, որուն համատեսութիւնը (synoptique) անմիջա-
կան չէ, ինչպէս նկարչութեան մէջ, որ Չրաքեանի համար զաւելի համա-
ձայն է բնութեան ու բնականին(41)։ Գրութեան նկարչականութիւնը չի
հիմնուիր նկարազրութեան վրայ, այլ լեզուին էական նկարագրին վրայ,
որ է որեկումբ բացակայ — լեզուէն դուրս — աշխարհի մը։ Իրբեւ այլ՝
լեզուն է՝ նաև անդրադարձումը՝ այդ աշխարհին զայսարանքներուն վրայ,
Ինտրայի գրութիւնը կը նկարէ բնութիւնը բնականօրէն, իր ձեւին ու
ձեւաւորման մէջ, ղէմյանդիմանական յարաբերութեան մը սահմաններուն
(42)։ Ան կը նկարէ՝ առանց որ նկարը իրբեւ նկարա-գրութիւնն եւ նկարագ-
րում, բեմադրում յայտնուի։ Ինտրա՝ նկարն է առանց դիտողին, առանց
գիտակցութեան։ Եւ ճիշդ իմացականութեան ղէմյանդիմանականութեան
պատճառով է, որ Ինտրա անկարող է, ըստ Չրաքեանի, համադրելու իր գա-
զափարհները ամբողջ ու մի կառոյցի մը մէջ։

Այսպէս՝ Ինտրա-Չրաքեան երկախօսութիւնը կը հիմնուի գիտակցու-
թիւն/ղէմյանդիմանութիւն տարբերութեան վրայ, բայց որ, իր կարգին,
կ'ենթադրէ զրոգական մակարդակին վրայ աշխատող պաշտօններու տարբե-
րութիւն։ Երկախօսութիւնը կարնի է միայն պաշտօններու բաշխումով մը՝
զրուած՝ ստորագրութեան երկու տարբեր նշաններուն տակ։ Աւելի՛ն. Ինտ-
րա-Չրաքեան զոյգը լեզուի կրկնակ ստանձնում մըն է. Ինտրա կ'առնէ լե-
զուն իր բնականութեան մէջ, իրբեւ իմաստներու, գաղափարներու, իրե-
րու վրայ համաձեւուող ու անոնց համաձայնուող երեւոյթ, որ ինքնին թա-
փանցիկ է ու պարապ, պարզօրոյ՝ ըսածին ու ըսուելիքին առջեւ, պատկե-
րին խորքը կարելի դարձնող, բայց ընդունող պատկերին առջեւ։ Երկրորդը
լեզուի այս բնականութիւնը կը կարգայ իր գործողութեան մէջ, իր ճիւղաւոր-
ման ու թանձրութեան մէջ, կը բռնէ լեզուն իր աշխատող նշանակեալներու
մեքենային մէջ։ Հետեւեալ հատուածը կատարեալ օրինակն է Չրաքեանի
լեզուական պաշտօնին. «Պէտք է, արդարեւ, ճերմաշխարհին մէջ գիտել
հարուստէպ հանդիպում մը մանրամասնութեանց հետախուզութեան, եւ բո-
ւանդակ սիրոյն, տարբազարհիւ ձգտումին եւ ընդհանուր, համապարփակ
զազափարհներու ծնողութեան. տեսնել թէ նրազան զգայութիւններ ու մը-
տապատկերներ արտայայտելու միտումին հետ՝ Ինտրա կը զգայ խոսցուց-
ման հարկը, ճապաղելի զգուշութեամբ. թէ բազմակողմանի արտայայտու-
թեան մը պէտքն եւ սակայն ճշգրտականջ (rigour) կարգաւորմամբ ամէն
ինչ գլխաւոր գազափարհն տակ ամփոփելու հակումն ունի»(43)։

1.7.— Ինչօ՞ւ Չրաքեան-Ինտրա օրինադասութիւնը, այդ անուննե-
րով եկող պաշտօններուն զբուսումը. արդեօք հասպաշտ ինքնահայեցում —
գրութեան մը մէջ, ուր հակադիր ձգտումներ կ'աշխատին —, որ կը մղէ Չր-
աքեան ճշգրտականջ հանրային ցուցադրութեան, քննադատութեան փորձու-
թեան, թէ գրողական արարքին մէկ ներքին տրամաբանութիւնը։ Արդէն
մէջբերուած հատուածի մը մէջ Չրաքեան կը գրէր. «Այս գրքին հեղինակն,
կիր զայն կը գրէր, խորհեցաւ որ անոր հրատարակութեան յետոյ քննադա-
տէր զայն ինքն իսկ։ Արդէն գրքին ծանօթութեան համաօտիւ իր դատա-
տանն ըրաւ, նախապարտատուութիւն այդ առաջադրեալ քննադատութեան,

(41).— Նշ.՝ Պ. Պ.
(42).— Եթանի որ Ինտրա ղէմյանդիմանական (intuitif) իմացականութիւն մ'է եւ
Բաթի որ պատկերային բացատրութիւնները կը օրէն Նշ.՝ Պ. Պ. Այս բարբիս մէջ, բացատրո՞ւ
Չրաքեանի համար, բացայայտ է, որ պատկերը կը կապուի ղէմյանդիմանականութեան.
(43).— Նշ.՝ Պ. Պ.

որուն պաշտօնը այսօր կ'իրագործուի(44)։ Իրագործումը կը կրէ Ձրաքեանի ստորագրութիւնը։ Չրքին գրուելու պահուն արդէն անոր ընթերցումը ծրագրուած է իբրև ջննդատութիւն, ինչ որ կը նշանակէ, թէ արդէն ընթերցումը դոյ է գրողական արարքին մէջ, քալող՝ բնագրին հետ, բնագրումին մէջ՝ իբրև անոր անհրաժեշտ-գալիք եզրուի։ Բնագիրը ինք կ'արտադրէ ընթերցումը, որ կ'իրագործուի զրքին ծափօրութեամբ եւ յողւածով։ Սկիզբէն ընթերցողը կայ «հեղինակին» հետ, որ փոխանակ նոյնանալու անոր, կ'անջատուի անկէ, կը սպասէ հրատարակումը, զրքին աւարտը՝ յայտնուելու համար։ Ընթերցումը, այսպէս իրագործուած, չի գար բնաւ ծածկելու գործը, ոչ ալ «օտանդակ» գրութեան մը դերը խաղալու։ Ընթերցումը կը ծնի գրութեան հետ, կ'եզերէ բնագիրը եւ կը բանայ այլ ընթերցումներու կալումը։ Ընթերցումը, զոր Ձրաքեան կը գրէ, մաս կը կազմէ գրութեան՝ իբրև գրութեան մէկ արտագրութիւնը եւ կը յայտնուի այն «բազմակողմանի արտայայտութիւնը»։ Այսպէս գրուելու իսկ պահուն գիրը կը բաժնուի, կը պատուի երկու ստորագրութիւններու։

1. Ի.— Ձրաքեանի գրութիւնը կ'իրագործուի Ինտրայի գրութեամբ։ Եթէ «Ներաշխարհի» հեղինակը Ինտրան է, ան է, որ ծնունդ կու տայ Ձրաքեանի գրութեան ընթերցողին։ Ո՛վ է հեղինակը եւ ի՞նչ է հեղինակութիւնը ի վերջոյ։

«Հեղինակութիւնն հայրութիւն մ'է, մանաւանդ սկզբնատիպ հեղինակութիւնը, որ ինքզինք պարտաւոր չ'զգար անպահանջ եւ անմիջականօրէն օտարակար՝ ուստի հաղորդական ըլլալու, ինչպէս որ մէկը մարդկային ընկերութեան անգամ հասցնելու համար չէ, որ հայր կ'ըլլայ, հայա ինքզինքն հաստատելու, շարունակելու համար»(45)։ Հեղինակութիւնը, առաջական այս օտմանումով, գրութեան հայրութիւնն է. հեղինակը սերմը տուողն է, կեդրոնը եւ ծագման վայրը իմաստներուն, անոնց ամբողջականութեան, համագրութեան ու յղացումին։ Գիտակից իշխանութիւն՝ կառավարող գրութիւնը ու տիրող անոր։ Ի՞նչ է սակայն միջանկեալ նախադասութեան մէջ ըսուած «սկզբնատիպ հեղինակութիւնը», աշխարհի եւ մարդու ստեղծումը սատուածային արարչագործութեամբ, որ դասականօրէն տիպն է որեւէ «բնատեղծութիւն»։ Արդարեւ, այնպէս՝ ինչպէս Հայր Աստուած կը ստեղծէ ոչինչն, այնպէս նաեւ «հեղինակը» կը թուի ստեղծել ոչինչն, կը մարդկայնանայ, կ'ուսնանայ «բորդի»։ Այս մեկով հեղինակը կը հաստատէ ու կը շարունակէ ինքզինք։

«Ներաշխարհ» որդին է Ինտրայի, գրութիւնը, իր կարգին, կ'արտադրէ Ձրաքեան ստորագրութիւնը՝ հայրը այլ գրութեան մը։ Սկզբնատիպ հեղինակութիւնը Ինտրայի կը գրէ, կը յղանայ՝ առանց յղուելու ընթերցողին, առանց նկատի առնելու հաղորդակցութիւնն ու հասկնալիութիւնը։ Կը գրէ, կարելի է ըսել, բացարձակ լեզուի մը մէջ։ Մինչ երկրորդ հայրը այդ ընթերցողն է, գրութիւնը գրուելու իսկ պահուն կ'անցնի, է՛ հաղորդակցութեան ծիրին մէջ։ Ընթերցողը, այն չափով որ կը կարդայ, կը վերակազմէ, կը վերակառուցէ գրութիւնը ըստ իր տեսանկիւնին ու նախասիրութիւններուն, կը գրէ փաստօրէն այլ գրութիւն մը՝ տարբերակը ընթերցուածին, շեղող անկէ ու անհասարելի անոր։ Այս իմաստով ընթերցողը հեղինակ մըն է։ Միծաղելի է անշուշտ մերժել գոյութիւնը, վերացականօրէն գրութեան մը,

(44).— ՆՆԿ. Ա.
 (45).— ՆՆԿ. Գ.:

տեղ մը գրուած, քայց ընթերցողն է, որ անոր կու տայ լինելութիւն, «ի-
մաստ» կամ ընթերցողութիւն: Հետեւաբար կայ երկրորդ հայրութիւն մը:
Ձրաքեան կը հաստատէ ինքզինք իբրեւ հայր-ընթերցողը, որ «ներաշխարհ»
կը գրէ իր ընթերցումին մէջ:

Ամփոփելով՝ կարելի է ըսել. Ինտրա կ'արտադրէ «ներաշխարհ»ը,
որ, իր կազմին, կ'արտադրէ Ձրաքեանը: Հայրը կը յղանայ որդին՝ յղացող
իր կարգին հայր մը: Գրութեան անունն սերնդագործումը, սերնդաբանու-
թիւնը:

1.9) — Մինչև հոս կանոնաւորապէս գործածեցինք Հեղինակու-
թիւն/հայրութիւն «փոխարեութիւնը»: Այս գործածութիւնը կրնայ թուիլ
շահագործումը պատահական «փոխարեութեան» մը, որ Ձրաքեանի ալ
յատուկ չէ: Բայց անոր բնականակամութիւնը եւ իսկութիւնը ոչինչ կը փո-
խէ հարցէն, երբ նկատի ունենանք հօր տեղը «ներաշխարհ»ի մէջ (էջ 171-
179): Փոխարեութիւնը զուտ «փոխարեութեան» մը աւելի է նախ, եւ յե-
տոյ՝ ինչո՞ւ մասնաւորապէս այդ փոխարեութիւնը:

Որպէն կը գրէ մեռած հօր մասին. «Անգիտակից ծնողութիւն մը չէր
կրնար բաւեր իր հօր ու քննադատ նայուածքին, որով ինքզինք կը սըր-
բագրէր իմ մէջս: Իր խիստ հայրութիւնը դիտակցութիւնն էր իր առնափառ-
րի ծնողութեանը: Անընդհատ կը ծնէր զիս. եւ շարունակ սպառեցաւ ո՛չ մի-
այն իր մարդու տառապանքներէն կամ ալքոլէն, այլ նաեւ իր յարատեւ ծը-
նողութենէն... Երբ իր ներշնչական վատուածքը տեսաւ, վշտագին, անկէ
տրամադրուող ու աննող ու անոր զուգահիւսող իմ անմասն հանդէպ, երբ
ինք մորթոքով զգաց իր օտարանայն իր նախառոյց Եսին յիշատակէն, որ
իմ մէջս կը վերկենցողէր, որ գուցէ, ըստ իրեն, կը նորաստեղծուէր իմ մէ-
ջս, ու գուցէ, իր ծերունիի աչքերուն առջեւ, կ'օտարանար ու կ'այլասե-
րէր... Իր որդիէն շարակառելու համար պէտք էր որ մեռնէր արդէն»(46):
Անիկ անդին. «Վասնզի գիտակցութեան անոմը չէ՞ որ էութեանս մէջ հօ-
րս ծագածմբը կը յայտնակերպի, — ինչպէս դիտակցութեան յետին բարե-
շրջութիւնը կը ձեւաւորուի Աստուծոյ վերստին ու ներշնչուող ընդերեւման
մէջ: Եւ արդեօք այն անորոշ ժամանակը, որ անհատական զարգացման
բարձրագոյն աստիճաններն ու գիտակցութեան լիազօյն երեւումը կ'որոշէ,
այն անորոշ ժամանակը հօր մա՛ր չէ՞ ընդհանրապէս: ... Այն ատեն իմ հօ-
րս մէջ տարբերութիւն մը կը դիտէի. հիմա գիտակից իմ նոյնութեանս,
որքան զատ անհասաներու կարելի է նոյն ըլլալ... կ'ատեն ինչ որ կ'ատէ ին-
քը... եւ ասիկա՝ ո՛չ թէ որովհետեւ զինքը կը յարգեմ, հապա անոր համար
որ ա՛լ ուրիշ կերպ չեմ կրնար ըլլալ. եւ ահա աստ'ը համար կը յարգեմ զին-
քը, իբր իմ օրէնքս: Կը բացատրեմ զինքը՝ կ'արդարացնեմ զինքը, որովհե-
տեւ ինձմով կը յղանամ, կը գտնեմ զայն»(47). եւ «Ձէ՞ մի որ հայրս իմ
մէջս է, հայրս, որ Ծնկեղեցւոյն մէջ կու լար»(48):

(46).— Ն. էջ 174-175:
(47).— Ն. էջ 176-177. ընդգծումը մեր կողմէ:
(48).— Ն. էջ 178: Ամբողջ հատուածի մասին տես Ձրաքեանի գաղտնաւոր. «172-174
էջերը, ուր իր հօրն հեռուէն յարաբերութիւնները կ'առէ պատմել ինտրա՝ կը ներկա-
յացնեն տեսակ մը անկարգութիւն, եւ նոյնիսկ մասնական սխալներ, որոց մասը զառաջադի-
ւ է սա. «Անընդհատ կը ծնէր զիս. եւ շարունակ սպառեցաւ»: Այս գաղտնաւոր ուղիւ չէ բնաւ.
Իրականութեան համաձայն չէ (ն.Չ. 2): «Գնահատելու գրութեան իմ մէջ այն բայց յատ-
կանակամ»:

Հայրութիւնը, վերի հատուածներուն մէջ, կապուած է գիտակցութեան: Անիկա նախ՝ Հայրութեան գիտակցութիւնն է, բայց նաև՝ գիտակցութեան բերած Հայրութիւնը: Այս վերջինն է, որ կը բազմանայ՝ Հայրը: Արդարեւ՝ որդին, գիտակցութեան յայտնուածութիւնը, Հայրութեան ճանաչուածութիւնը, կը գիտնայ Հայրութիւնը, բայց միեւնոյն ատեն կը ջնջէ Հայրը, դուրսից: Հայրութեան գիտակցութեամբ որդին կ'առնէ իր անկախութիւնը հորմէն, որ այսպէս կը բազմանայ: ճերմակ սպանութեամբ մը: Բայց ճիշդ անոր համար, որ գիտակցութիւնը կը յայտնուի՝ Հայրութիւնը կը ծընի որդիին մէջ, կը վերածուի ու կը ներդրուի որդիին մէջ: Հօրեմական օրէնքը կը մնայ: Կականք սակայն ա՛յն է, որ որդի'ն այլևս կը յղանայ Հայրը, կը դառնայ հօր Հայրը: Հայրը կը ծնի որդիէն: Ինտրա կը գրէր. «Անընդհատ կը ծնէր զիս. եւ շարունակ սպառնցաւ»- կարելի է այլևս գրել. անընդհատ կը ծնիմ զինք եւ շարունակ կը սպառիմ:

Հայր-որդի այս յարաբերութիւնը, հոգեվերլուծաբանական մակարդակին վրայ եղիպեան բացայայտ կառոյց մը կը կազմէ, ինչ որ ներկայ է, ծածկուածի փորձին մէջ, որ Չրաքեանի դասաստանն է: Որդին կը ջնջէ Հայրը այնպէս՝ ինչպէս զէպի մայրը զացող ցանկութիւնը կ'անցնի հօր մահուանէն: Գիտակցութիւնը, եւր Հիմնուած են Ինտրայի ժօտ սպանութեան մը վրայ — ինչպէս ընկերութիւնը կը հիմնուի որդիներու Հայրասպանութեան վրայ, ըստ Ֆրեյտսի —, որ եթէ նախ հօր սպանութիւնն է, է՛ նաև որդիինը: Եւր չի կրնար խուսափել զինք կազմող արարքէն եւ թերեւս ասոր համար է, որ Սոփոկլէսի Եղիպոսը — Վեդիպոս արքայն ողորդութեան մէջ — կը փակէ աչքերը, կը ջնջէ գիտակցութիւնը ու Եսին աչքը կուրուսեան ժուրի մէջ: Հօր սպանութեամբ կը հիմնուի Եւր, բայց անով նաև կը հաստատուի Եսին քանդուած ցանկութեան զոհացումին մէջ: Նոյնացումը, արչարեւ, հօր ու որդիին, Ինտրայի ժօտ մանաւանդ, ցանկութեան իրականացումը կը նշէ, եղիպեան բարոյութիւնի քանդումը: Մնաց որ, քանդումը կը շարունակէ մնալ քանդուած կառոյցի մէջ:

Որդին կը գրէ. խօսքը, պատումը կը սկսին եղիպեան բարոյութի կազմութեամբ: Որդին կը գրէ, երբ Հայրը սպառած է, երբ թափուած է անոր արեւը: Ինտրայի գրութեան մէջ սպառումը գրուած է անցեալով. Հայրը մեռած է արդէն, երբ գիրը կը սկսի, կամ գիրը կը սկսի ու Հայրը կը մեռնի, կամ ալ գիրը կը կազմաւորէ որդին հօր եւ իմաստին սպառումէն ետք: «Ետք» ու «առաջ» ժամանակագրական նշումներ չեն հոս: Ինտրա աւելի ճշգրիտ կերպով կ'ըսէ. «Անընդհատ կը ծնէր զիս, եւ շարունակ սպառնցաւ»: Անցեալ անշուշտ, բայց շարունակուող ծնունդ ու սպառում, կարծէք հօր մասին զըրեւր, Հայրը գրեւր ըլլար արդէն հօր սպառումը, սպանութիւնը, անոր գիրի վերածումը: Գրելը, այս իմաստով, ցանկութեան բախումն է հօր դէմ. հօր վերլուծումը՝ հօր լուծումն է:

Որդին մեծ ցանկութիւն մըն է, որ հօր արգելումէն անդին կը դառնայ յաղթական գոհունակութիւնը ցանկութեան, ասոր ժուրի, գիշերին ու անիմաստին: Բաղձանքի շարամարանութիւնը՝ միուդի շէ սակայն. կը մնայ ներքին, ցանկութեան մէջ իսկ, տիրող մորթոքը, ինչ որ կը նշանակէ, թէ ցանկութիւնը հօր ցանկութիւնն է, իրի ցանկութիւնն է, կարծէք ժուրի ու անիմաստը ըլլալին անցանկալի: Ասոր համար կարելի է ըսել, թէ գրելու ցանկութիւնը կը սկսի հօր մահուամբ կամ մահը կը սկսի գրելով, բայց կը մնայ միշտ, Ինտրայի ժօտ, զէպի Հայրը ցանկութիւնն է: Ասոր համար նաև Ինտրա կ'ընկերի, կամ կը վարանի գրութեան աշխատանքը հասցնելու ցան-

կուսեան ու մսխումն իրականացումն: Ինչ որ կը կազմէ զրելու ամենտե-
տութիւնը: Գէպի խնթութիւն եւ խնթութեան դէմ:

Ո՛ր է հայրը, ո՛վ է հեղինակը այս անգամ փոխարեութեան կալ-
ւածին մէջ:

Տեսանք, որ հայրը կը ջնջուի որդին կողմէ՝ ինքզինք յղացող: Որ-
դին հայրն է հօր: Ահաւասիկ շրջումը: Ընտանեկան յարաբերութիւնները
կ'առնեն հակառակ ուղղութիւն մը. որդին կը դառնայ ծագում, ծագումը
հօր՝ իր մէջ, ինքն իր ծագումը: Այս իմաստով գրութիւնը — որդին — հայ-
րն է, հայրը՝ հեղինակին: Գրութիւնն է, որ կ'ընէ «հեղինակը» հեղինակու-
թիւնը, կը յղանայ: Ան է հեղինակ արտագրողը: Անդադար կը ջնջ ծնող
հայրը, ասոր անձնաւորութիւնը, անհատականութիւնը: Գրութիւնը կը դառ-
նայ հայրասպանութեան վայրը Եդիպոսի պէս. աւելի ճիշդ՝ գրութիւնը կը
սկսի Եդիպոսի բարդոյթով, բայց զանցուած ու բռնուած՝ մօր մեծ ցանկու-
թեան մէջ: Եթէ որդին հայրն է, որդին կը ծնի ինքզինք, «Ներախշարի»
իբրեւ գրութիւն կը ծնի ինքզինք: Ինտրա ստեղծումն ու յղացումը՝ իր գը-
րութեան վնասիկ ենթակայ է գրութեան, ասոր պատուուող, հոսող ենթակա-
յութիւնը ըլլալէ առաջ: Ձրաքեան իբրեւ պատճառաբանող գիտակցութիւն,
որդին է գրութեան, գիտակից, ջննդատ նայուածքը որդին՝ զինք յղացող
գրութեան վրայ, զոր մեկնարանութեամբ կը սպաննէ իր կարգին: Ձրաքեան
այլեւ թէ՛ որդին է, թէ՛ հայրը իր գրութեան, հեղինակուող հեղինակու-
թիւնը, որ իր հեղինակութիւնը կ'առնէ Ինտրայի գրութեան, բանուած այդ
գրութեան: «Ներախշարի» ինքն իր որդին ու հայրը միասին: Ինքն իր ըն-
թերցողը եւ «հեղինակը» զրոյական ժամանակին մէջ:

Անուններու տարբերութեան, հեռաւորութեան ու շրջումներուն մէջ,
այսպէս, անոնց սահմաններուն տակ տեղի կ'ունենայ անսովոր ու զեռ տա-
րողութիւնը չլսփուած արարք մը. հեղինակային խօսքին, ասոր ճշմարտա-
ցիտութեան, դիրքին ո՛չ միայն խնդրարկումը, այլև քանդումը(49): Ոչ ոքի կը
պատկանի խօսքը, երբ անունը կը ծնի «գործէն», երբ գրութիւնը կը դնէ
ինքզինք ապա-կեղրուն անունի մը տակ, յղուող ոչ մէկ անձնաւորութեան:
Ձրաքեանայի չէ այլևս Ինտրայի ձեռքին տակ կարդալ հետեւեալը. «Միտս
ճշմարտութեան տեսակէս մ'է, Իոնան սկզբունք մ'է. հուսնէս բխած ան-
գրթելի սկզբունք մը: Յաւանական անգրեսութեանս ողին է. կուսեղու-
թիւնը. ա՛յն է՝ ինչ որ եմ, ինչ որ կ'ըլլամ... ո՛վ իմ ներաշխարհիս գոյու-
թեան շքեղ ու ստուերայի իմաստը: Պէտք էր որ իբօք, մարմնովին, էովին
կորսուէի անոր անձին երանականութեան մէջ. անոր նշանակութեան խնկա-
րոյր հիշատութեանը մէջ»(50): Ամէն ինչ կը ծնի գրութեան, նոյնիսկ ներաշ-
խարհին իմաստը: Ձրաքեան գիտէ ա՛յն շփով, որ կը կարգայ: Բայց այս
գիտութիւնը — եւ գիտակցութիւնը — հեռու է գրութեան համատեա տիրա-
պետումն ըլլալէ: Գրութեան մէջ չըլնող ծալքն է ստիկա, մեկնարանութիւն
մը, որ կը բանի գրութեան տակ, թափանցուած է չգրուած, շրջուած ու
չտարազուած գործողութեամբ մը: Յօդուածաշարքին մէջ, որուն վերնագի-
րը արդէն վկայութիւն մըն է, Ձրաքեան կը գրէ հեղինակային դիրքէն, կը
նայի հայրութեան նայուածքը, բայց հայրութիւն մը, որ ծնած է որդիէն:

(49).— Աւելորդ չէ այստեղ յատկապէս այս գործազուրկամ շրջումը շրջամէկ մը
մէջ, որ կը գապի շրջանի ըլլալէ, երբ ամենք գրութեան իբրեւ միակ ենթակամ գրու-
թեան:

(50).— Ն. էջ 242:

Այսինքն՝ Հեղինակային զիրքը տեղագար տարուած է գրութեան գործարկութենէն: Վերնագիրը «Ներաշխարհիս հեղինակէն դիտուած» էր դառնայ Հարցական, երկդիմի- փորձ ժը կայ Հոն առնելու Հեղինակի տեղ ժը, բայց կայ նաև Հեղինակին բացակայութիւնը. կարծէք գրութիւնը գրողը բլլար երրորդ ժը: Զրաքեան-մնարտ անուններով հեղող գրութիւնները կը կազմեն ական ժը պայթեցնող Հեղինակային խօսքին Հնաւանդ մենատրութիւնը:

Անդրատառ ու առա կը բանան գրութեան այլ-տարածարանական եզր ժը: Երբ կայ երկուքը — չին բառով արած —, երբ գրութիւնը կը սկսի երկու անունով, յոգեակերով, կը սկսին բազմատարրութիւնը, բազմիմաստութիւնը, բազմակեղերունը եւ բազմութիւնը: Պատուուողը ենթակայութիւնն է, որ կը բռնէր յենարանի տեղը, պատուուողը Եան է՝ ինչպէս Եղիպոս Հայրատպանութեամբ կը մտնէ արենակցական յարաբերութիւններու ցանցէն ներս, ցանկութիւններու արածարանութեան մէջ, մինչև վերջական կուրութիւնը եւ մութը: Արեան, սեռի ու ցանկութեան կայրութիւնը «Ներաշխարհիս», ուր կը մեռնի Հայրը-Հեղինակը-Իմաստը-Եսը, որպէսզի ծնի գրութիւնը՝ սանձարձակ, այլատարր, անեսական, անկեղծող գրութիւնը: Ամբողջ «Ներաշխարհիս» անեսութեան բաղձանք ժըն է, Եսէն անդին ձգտում ժը — զանգըրեսութեան ժըն — որ կը պատուէ եսին սահմանները, զոյն տանող անեղրութեան, անջատող, Հատող, կարատող իրերը, անձերը եւ անոնց սահմանաւորութիւնը, ձգտող՝ միութեան — էսփին, մարմնովին —: Բաղձանքը, Հետեւարար, ան-իրի բաղձանք ժըն է, իրի ջնջումի ու բացակայութեան բաղձանք ժը, ան-սահմանի անսահման բաղձանք ժը, տւելի նուիրապետական, ջան ընկերային:

Բայց անկեղծող միութիւնը, որուն սմէն մէկ կէտը կեղծուն է, տարազումն իսկ է խենթութեան, Ինարայի մօտ, եւ անոր բաղձանքը Հայպէս շխմարականն:

(Շար. 3 եւ վերջ)

Գ. Գ.

Լ. ՄԿՐՏՁԾԱՆ

ՄՏԱԾՈՒՄՆԵՐ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Գ.

Թէ՛ իրրեւ ընդհանրապէս արուեստի եւ թէ՛ իրրեւ ժամաւորապէս գրականութեան մի բնագաւառ՝ բանաստեղծութիւնը ինքնուրոյն տեղ է բռնում, շեշտուած կերպով տարբերուելով արուեստի ու գրականութեան միւս բնագաւառներէց: Երբ աչք ենք նետում պատմութեան վրայ, մարդու՝ խօսքի ու գրի հետ կապուած հոգեւոր գործունէութիւնը բանաստեղծութեամբ է սկսւում, երբ կեանքին զուգահեռ բան ճատեղծելու արարքը արտակարգ զօրութեան հետ էր կապուում:

Հազարամեակների ընթացքում բանաստեղծութիւնը արտայայտուել է տարբեր եղանակներով, տարրական հոգեբանական կանչերից մինչեւ ամենաբարդ կապակցութիւնները: Բանաստեղծութիւնը խօսքով է սկսուել, բայց միայն զըրով է շարունակուել ու հասել մեզ: Եւ այժմ կարող ենք յիտադարձ հայեացքով «հետեւել» նրա ընթացքին՝ պատմական ամբողջութեամբ վերցրած հարուստ տուեալների օգնութեամբ: Այս ասելով, նկատի ունեմ միջերկրածովեան աւազանի եւ յարակից մօտիկ ու հեռու երկրների հոգեւոր բերքը:

Ահա եւ պատմութեան շրթան: Բարեբերի հեռու աւերակների միջից

բարձրանում է «Գիլգամիշը»՝ «աշխարհի ամենահին դիւցազնավէպը», ինչպէս ասում են մասնագէտները Էւ Նրան վերագրում գրեթէ 7 հազար տարուայ հրեանութիւն: Այս յաջորդում են Եգիպտոսի, իսկ աւելի ուշ՝ Բարայի կրօնական բանաստեղծութիւնները: Ասպարէզ է մտնում Հելլազան: Եւ մենք լսում ենք Հոմերոսի ու Հեսիոդոսի ձայնը: Նաեւ ուրիշ բազմաթիւ ձայնք: Ահա դառնացած եւ անհանգիստ թափառական Արքիլոքոսը, սպարտացի ռազմերգու Տիրթլոսը, բանաստեղծ օրէնադիր Սոլոնը, Լիւրոսի դաւակներ՝ կենսաւոր ու գործունեայ Ալքայոսը եւ սիրերգու Սաֆոն, գինու եւ ուրախութեան երգիչ Անակրեոնը, ներքողազիր Պինդարոսը, ապա հովուերգու Թէոկրիտէսը, բազմաշնորհ Կալլիմաքոսը եւ ուրիշ շատերը:

Հելլազայից եւ յունական սփիւռքից յետոյ՝ Հռոմը: Ահա Վերգիլիոսի, Հորացիոսի եւ Օվիդիոսի իւրայատուկ բանաստեղծական եռագիտութիւնը: Իսկ նրանց կողքին՝ տարբեր ժամանակ արուեստասէր կատուլլուսը, փրիւտոֆայբանաստեղծ Լուկրեցիուսը, երգիծազիբ Իւլիանալը (Յորենալը) եւ բազմաթիւ ուրիշները: Այնուհետեւ հազար տարուայ բանաստեղծական տեղաբաշխում է շատե՛ք նահանջ ու ջուն: Ու նորից վերելք՝ Դանթէ Ալիգիերիի, Պրանչեսկո

Պետարհա, յաջորդ դարերի Եւրոպայի բանաստեղծական Հեղեղը բարձր ուղղութիւններով, մինչեւ այսօր :

Այս բոլորը յիշելիս՝ անկարելի է մոռանալ զմեր անունը, որը զէթ բանաստեղծութեան ասպարէզում բնաւ փոքր չէ եւ երբեք, ժամանակի համեմատ, փոքր չի եղել : Տեսնելը Հեշտ է, եթէ նայենք այն ճանապարհին, որը ձգուած է գողթան երգերից մինչեւ Նորեկացի, միջին դարերով հասնում նորագոյն ժամանակներին : Տեսնելը Հեշտ է, եթէ Հայեացքը կենտրոնացնենք այն բղկտուած, մանրանկար բնաշխարհի վերայ, որտեղ նաեւ բանաստեղծութիւն է մշակուած Չարենցից մինչեւ Ռազմիկ Դաւոյանն ու աւելի կրտսերները : Եզրակացութիւնը սկզբունքօրէն նոյնը կը լինի, եթէ մի պահ նայենք աշխարհի չորս կողմը՝ բնաշխարհից դուրս :

Միաժամանակ տեսնում ենք Հայութեան պատմական միջավայրը, այն Հարեան ժողովուրդներին, որոնց զրկում բանաստեղծներն են ծնուել ու աճել : Այդ բանաստեղծների շարքում բազմաթիւ են նաեւ անուանիները : Նրանք եւս արտաբերում են պատմական թանկագին վրկայութիւններ ու դրանով իսկ օգնում հասկանալու, թէ ինչու՞մ է բանաստեղծութեան ինքնութիւնը, ինչպիսի գործօնների հետ է կապուած նրա գոյացումը ու տարածումը :

Պատմութիւնը ապրողներին է կտակել բանաստեղծական մեծ ժառանգութիւն : Այդ ժառանգութեան վերաբերեալ գրուել են մեծաքանակ ուսումնասիրութիւններ, որոնցից հազիւ ամենանշանաւորներն են մատչելի շարքային դրասէրներին : Մնացեալին պէտք է ծանօթանալ մատենագիտական ցանկերում, ըստ ժամանակի եւ հնարաւորութեան, բուն ուսումնասիրութիւնները թողնելով միմեանցից այս կամ այն չափով՝ անտեղեակ՝ ճիւղային Հմուտ մասնաղէտներին :

Բայց բանաստեղծութիւնը միայն պատմութիւն չէ եւ ոչ էլ միայն ուսումնասիրութեան նիւթ : Բանաստեղծութիւնը

ծնուել է անյիշելի ժամանակներում մարդու գիտակցութեան հետ միասին եւ տեսնում է մինչեւ այսօր՝ նոյն գիտակցութեան կողքին : Պատմութեան ընթացքում շատ բան է հերքուել եւ շատ բան էլ յայտնաբերուել, իսկ բանաստեղծութիւնը անհերքելի է մնում, թէ եւ կարծես թէ դրա համար երեւութապէս առարկայական հիմքեր չկան :

Յիրաւի, բանաստեղծութիւնը չի ուսուում : Այն մ'չ հայ է, ոչ ջուր : Ոչ էլ հազուա ու բնակարան : Եւ լաւ է, որ այդպէս է՝ անկախ ու ինքնարաւ իրականութիւն : Բայց ահաասիկ Հազարամեակներից ի վեր շատերը նրան են ապաւինում, նրա մէջ որոնում սնունդ ու ապաստան, երբեմն էլ մարմնական սննդից ու պաշտպանութիւնից այս կամ այն չափով զրկուելու գնով : Եւ այդ ինքնածին ու անհասկանալի յամառութիւնը փոխանցում է սերնդից սերունդ, մարդուց մարդ, նոյնիսկ անընդախոր վիհերի վրայով, պատմական ընդմիջումների տարածութիւնը անտեսելով :

Դա այդպէս է, որովհետեւ բանաստեղծութիւնը ըստ էութեան Հողեկան իրողութիւն է եւ միայն Հողեկան կափանիչներով կարող է չափուել : Մտածել բանաստեղծութեան մասին՝ առանց մտածելու Հողեկան կեանքի Հաւաստիութեան, ինքնավարութեան եւ այլեւայլ օրինաչափութիւնների մասին, նըշանակում է ի սկզբանէ վրիպման դատապարտել իրեն : Ուստի եւ բանաստեղծութիւնը Հողեկանից դուրս ուրիշ բաների կապիլը պարզապէս անիմաստ է : Առհասարակ, Հողին ու Հողեկանը զգալին ու Հոտնելը՝ աւելի Հեշտ է, քան այն «ճանաչելն» ու բնութագրելը : Այդպէս է եւ բանաստեղծութիւնը : Աւելի Հեշտ է այն ճաշակել, նրանով ապրել, քան ճշգրիտ բացատրութիւններով լուսարանել :

Բանաստեղծութիւնը՝ Հողու աչքերով իրերը տեսնելու եւ դասաւորելու բոլորովին ինքնաշատուկ եղանակ է : Այդ ինքնաշատուկ եղանակն է բանաստեղծութեան հոմանիշը եւ դրանով է

տարբերում մաքի շարադրման միև ե-
ղանակները: Եղանակը կարելի է փո-
խարինել մօտեցում բառով: Դերը նոյնն
է:

Առարկայական աշխարհում իրը իր
է եւ միեւնոյն չափանիշներով է երե-
ւում կենցաղային մակարդակով: Բայց
երբ նոյնիսկ սովորական իր գնահատե-
լու, ուստի եւ նրա համար զայտաշանջ
նշանակութիւն եւ իմաստ փնտաւու
հարց է ծագում՝ անմիջապէս տարբեր-
ւում են զկարծիքները: որքան մարդ՝
այնքան կարծիք: Մօտեցումների այդ
բազմազանութիւնը առաւել եւս վերա-
բերում է երեւոյթները, մարդկային ա-
րարքները եւ աւելի բարձր իրողութիւն-
ները բնութագրելու բնագաւառին: Մի-
եւնոյն ակնյայտ երեւոյթին բոլորովին
տարբեր մեկնարանութիւն են տալիս,
օրինակ, բարեմիտն ու չարամիտը,
հաշտարարն ու խառնակիչը, եթէ շհաշ-
ւենք միև բոլոր միջանկեալ զորակնե-
րը: Սա առօրեայ կենանքն է: Կնդիրն
աւելի է բարդանում հոգեկան, գրական
բնադաւառում:

Միեւնոյն աշխարհը տարբեր հե-
տաքորութիւններ է արժնացնում, շը-
հաշուելով հանրային գործի ու աշխա-
տանքի մարդկանց, դիտնականի, փիլի-
սոփայի, գրողի եւ արուեստագէտի մըտ-
քում: Եւ հենց բուն դեղարուեստական
գրականութեան ներսում ակնյայտ են
տարբեր հետաքրքրութիւնները: Մի՞թէ
նոյն աշքով են նայում բանաստեղծը,
արձակագիրը, թատերագիրը, երգիծա-
բանը եւ ուրիշները միեւնոյն երեւոյ-
թին, կամ թէ՛ միեւնոյն եզրակացու-
թիւնների՞ յանգում եւ տեսածը նոյն
մակարդակով ներկայացնում: Պարզ է՝
որ ոչ:

Այդ պարագան աւելի ցայտուն
պատկերացնելու համար մտաբերենք թա-
տերական լուսարձակները: Այդ լու-
սարձակներին յղուող լոյսի զխառնուրդ-
ների՞ օգնութեամբ կարելի է հաղար ու
մի տեսողական պատրանք ստեղծել, այս
կամ այն գունաւորումը տալ բեմի վրա-
յի իրերին ու դերակատարներին: Եւ

նոյն իրը կարող է մի պահ հրաշալի ե-
րեւալ, իսկ յաջորդ պահին՝ զգուեկի,
մի պահ պայծառափայլ, իսկ այսպէս
ու խարխուլ, եւ այլն:

Ահա եւ իրերը տեսնելու ու ներկա-
յացնելու տարբեր եղանակների բազմա-
զանութեան շրջանակում պէտք է որոշել
բանաստեղծութեան տեղը:

Գրականութեան մէջ սովորաբար
բանաստեղծութիւնը չի արտայայտում
իր մաքուր միեւնոյն, ինչպէս որ ձու-
լածոյ ոսկին երբեք նոյնութեամբ հան-
րային շրջանառութեան մէջ չի դրւում,
այլ շիման ու կապակցութիւնների մէջ
է մտնում գրական միև սեռերի ու տե-
սակների հետ: Եթէ մի կողմ դենք
նոյնիսկ չափածոյի ու արձակի ձեւական
հարցը, բանաստեղծութիւնը յաճախ թա-
փանցում է արձակագրական երկեր, կամ,
ընդհակառակն, իր մէջ առնում արձակա-
գրութեան յատուկ միտքիմ նկարագրա-
կան տարբեր: Այս ամէնով հանդերձ,
բանաստեղծութիւնը զգացում է, կա-
րելի է ճշդել, թէ որտեղ է ներկայ եւ
որտեղ բացակայ:

Նախ՝ բանաստեղծութիւնը կոչուած
է ոչ այնքան նկարագրելու, որքան որ
արտայայտելու, բացայայտելու: Ուս-
տի՝ թէեւ բանաստեղծութեան մէջ եւս
իրերը ներկայ են իրենց արտաքին կող-
մերով ու հիմնական, մատչելի շինա-
նիթ» են ծառայում, կարեւորը այդ ի-
րերի կապակցութիւններն ու ներքին
չփումներն են: Հետեւապէս, բանաստեղ-
ծը չի բուարարւում արտաքին աշխու-
հով, այլ հոգու ճանապարհով մշտապէս
պնդում է ներքին իրականութիւններ՝
թէ՛ իր մէջ եւ թէ՛ անձայր տիեզերքում:
Նա այդ ներաշխարհային ճամբորդու-
թիւններով է տարբերւում տեսածը նը-
կարագրող, թէ՛կուզ եւ միահիւսող գը-
րողներին:

Սա բանաստեղծութեան ճանապար-
հն է: Ի հարկէ, միեւնոյն ճանապարհը
ընտրած բանաստեղծներն էլ իրենց հեր-
թին նոյն ձեւով չեն տեսնում, նոյն աը-
դիւնքներին չեն հասնում: Դրա համար
էլ տարբեր են եւ ոչ ոք չի կարող ներ-

կայանալ միւսի փոխարէն կամ երաշխաւորել նրա ձեռքբերումները: Ամենաշատը կարող է լինել շուկայի զփոքի փոխանակումը եւ որոնող ժարդկանց հոյն տեսակին պատկանելու որոշ գիտակցութիւն:

Բանաստեղծութեան խորհրդաւոր կողմերից մէկն այն է, որ բանաստեղծը բնագրական ժողովով չի գոհանում մասնէի աշխարհով, արտաքին ու ներքին սովորներով, այլ ձգտում է իր մէջ սովորներէ տիրեցրական ամբողջութիւնը: Եւ վերջինս անժամանակութիւնը չի շփոթեցնում նրան, այլ, ընդհակառակը, աւելի է բորբոքում եռանդը: Այդ է պատճառը, որ բանաստեղծական աշխարհում ուղղակի վերացում են ժամանակի ու տարածութեան բոլոր սահմանները: Բանաստեղծը, անշուտ, կարող է ամփոփուել որեւէ կէտի կամ որեւէ պահի վրայ, ինչպէս որ արդէն լինում է սովորաբար, բայց դրանով սկզբունքորէն չի հերքում անժամանակութեան մէջ ուղած ժամանակ շարժումը:

Այդ արժամաբանութեամբ է, որ բանաստեղծը կարող է «հանդիպել» ու ձգտել իր ժամանակից դուրս՝ անցեալում սպրած կամ ապագայում ապրելիք էակների հետ, տարբեր դարերի դէպքերը կապել իրար ու միասնական ընթացքի մէջ դնել, աշխարհի ծայրից թռչել: միւս ծայրը կամ նոյնիսկ աստղերը, եւ այլն: Այդ փարմունքը թէեւ առարկայական ատուծով հիմքից զուրկ է, միանգամայն իրական է հոգեկա՛ն ատուծով եւ ո՛չ արհեստական: Հոգին միայն այդպէ՛ս է ապրում, երեւակայութեան ուստով ճեղքում բոլոր պատնէշներն ու սահմանները:

Սահմանների վերացման այդ անզուսպ ու զամբողջատիրական» ոգին արտայայտում է եւ մի այլ մակարդակով: Բանաստեղծութիւնը յատուկ է անշունչ իրերի եւ շնչաւոր էակների մակարդակներն անտեսելը, բուսական ու կենդանական, մարդկային ու աստուածային իրողութիւնները ընդհանուր յայտարարի բերելը: Ընդամին հաւասարեցումը

տեղի է ունենում վերընթաց կարգով, այսինքն՝ ոչ թէ բարձրն է հաւասարեցումը ցածրին, այլ՝ ցածրը բարձրին: (Լինում է հակառակը, բայց ոչ եղանակաբանական միտումով): Առարկան շնչաւորում է, բոլոր անձնաւորում, անբան կենդանին բանական յատկանիշներով օտարում, մարդը աստուածային գծի վրայ դրում: Դրա հետեւանքով, բանաստեղծական աշխարհը համատարած շունչ է, շարժում, փոխադարձ կապ եւ աստուածամերձ իրականութիւն: Յաստեղծական կեանք եւ մահուան բացակայութիւն: Բանաստեղծը անձամբ դիտէ, անշուտ, որ դա առարկայօրէն այդպէս չէ, բայց եւ այնպէս մշակած բանաստեղծութեան մէջ իր տիրեցրական երանքն է արտացոլում:

Ճիշդ է, բոլոր ժամանակների բոլոր բանաստեղծութիւններն էլ չեն հիւսւած այս սկզբունքով: Բայց դա արտեստի հանրամանալ ականդոյթի մասն է կազմում եւ դրեւորում տեսարար՝ մի անը շատ, մի այլ տեղ զիչ կամ աներշունչ: Բաւական է աչքի առջեւ բերել թէ՛ մոդուրդական բանահիւսութեան ժամանակութիւնը եւ թէ անհատ բանաստեղծների երկերը, եւ կը տեսնուի, թէ ինչ է նշանակում աշխարհի շնչաւորում: Կարելի է ասել, որ դա երբեմնի մոգական ու առասպելական պատկերացումների մնացորդն է: Բայց եթէ այսօր էլ բանաստեղծութեան մէջ տիրեցրական տարրերի զառաջալծման» ու փոխադարձ կապի սկզբունքը ի զօրու է, նշանակում է մոգական ու առասպելական պատկերացումները միայն հնադարեան կեանքին յատուկ ստորոգիծներ չեն, այլ եւ մարդկային ներքին հոգեբանական հիմնաւոր իրողութիւններ:

Սակայն, ժամանակի ու տարածութեան սահմանների վերացումը, տիրեցրական տարրերի ընթացիկ աստիճանակարգը ընդհանուր յայտարարի բերելը՝ պայմանաւորում է բանաստեղծի ազատութիւնը ապահովելու պահանջի հետ: Միայն ազատ ու անսահման միջավայրում կարող է բանաստեղծը ազատորէն

չարժուել, անսպաս զշինանիթն ունենալու դէպքում է, որ կարող է գործադրել իր Քարարչական, ստեղծագործական ուժերը, առանց խոչընդոտի, իրերի ու շնչառորների բարեացակամ եւ կամաւոր հնազանդութեան դէպքում է, որ անկաշկանդ դասաւարտումները հնարաւոր կը զառնան: Բանաստեղծի ազատութիւնը բխում է տիեզերական ազատութիւնից:

Այդ ազատութիւնը երկրային ազատութեանը միայն անունով է նման: Քաղաքացիական կեանքում ազատութիւնը, անհրաժեշտաբար եւ իրաւաժողով, պատկերացում է միայն համապատասխան սահմանափակումներով եւ անխղճ իտրէն կապուած է Պեմենարաճը պատասխանատուութեան հետ: Այլ կերպ անկարելի է, որովհետեւ գործ ունենք նիւթական իրականութեան հետ, որտեղ մէկէ անպատշաճ ազատութիւնը կարող է շատերի, նոյնիսկ ամէնքի գոյութեան ժրխտում դառնալ: Մինչդեռ բանաստեղծութեան մէջ այդպիսի վտանգ չկայ, ուր որտեղ հողեկան է ու նոյնիսկ ընդուն է կեանքի ու ժառանգ սահմանը: Այս դէպքում՝ բանաստեղծի ազատութիւնը արդէն իսկ անսահման է, ուրիշների կողմից ճանաչուի կամ ոչ՝ միեւնոյն է: Խօսքը, անշուշտ, բանաստեղծական աշխարհի բուն առկայութեան մասին է, այլ ոչ թէ գրել-սպելու եւ այլն: Եթէ վերջին պարագայում այս կամ այն շափով ընդհարուած են բանաստեղծի ու իրականութեան միջին պատկերացումները՝ դա կարելի է քննութեան առնել ու պարզաբանել ուրիշ տեսանկիւնից:

Ազատութիւն՝ նշանակում է գործունէութեան դաշտ: Բնականաբար, քանի որ լինում են տարբեր ուժի ու ճրգութեան բանաստեղծներ՝ տարբեր մեծութիւն են ունենում գործունէութեան դաշտերը: Ուստի՝ պայման չէ, որ փոքր պաշտի սահմանուած բանաստեղծը մեծ պաշտի ծայրը հասնի: Բայց ազատութիւնը հասարակական սահմանափակում է բոլորին: Ամէն ոք պէտք է վստահ լինի, որ իր առջեւ բաց է դաշտը, որ իր երթին արգելք չկայ: Ազատութեան մէջ է, որ

ստեղծում են բանաստեղծական ամբողջութիւններ, առանց վերապահութեան ու անդամահատումների: Ուստի՝ որեւէ բան ստեղծելուց առաջ բանաստեղծը շահագործուած է ազատ ասպարէզով: Այդ ազատութիւնը քաղաքացիական մակարդակով կարող է լինել կամ շլէնել՝ միեւնոյն է. բանաստեղծն ստեղծում է իր մէջ եւ նրան արագիւտում, այս աշխարհի մէջ մի այլ աշխարհ կառուցելով:

Այսպէսով, բանաստեղծութիւնը բանաստեղծի համար ազատութիւն է եւ ազատագրում: Ազատութիւն, քանզի նրա մէջ է, որ կարող է անկաշկանդ շարժուել: Ազատագրում, քանզի նրա միջոցով է, որ կարող է պարզուել իր մէջ կուտակուող արարչական ուժերից: Այլ ուժերը բանաստեղծի մէջ կուտակուած են ծնունտ օրից (եթէ աւելի յետ շփանք), լնչած օդի հետ, զգայարանների միջով, խմորում ներսում ու ելք որոնում: Գրականը չեն սպառում, այլ մշտական շրջանառութեան մէջ են եւ բանաստեղծը ընտրելով փոխանցող օդակ է՝ այդ ուժերի, իսկ տիեզերքի կենտրոն՝ իր համար:

Բանաստեղծը, դիտակցելով հանդերձ իրական ու բանաստեղծական աշխարհների էական տարբերութիւնները, իրեր կանոն, առաջին հերթին կառուած է մտում նրան, որն ինքն է ստեղծել եւ իրենն է, այլ ոչ թէ այն ճիւղին, որը բոլորինն է եւ ոչ ոքի: Նա, ճիշտ նոյնիսկ ուզենայ, չի կարող հրաժարուել բանաստեղծական ազատութեան աշխարհից, այսպէս կը դադարի ինքը լինելուց: Եւ ահա՝ մշտապէս ինքը մնալու եւ ներքին ազատութիւնը վայելելու աջ հրամայականը բանաստեղծին դնում է հակասական կացութիւնների մէջ՝ իրական աշխարհի պայմաններում: Յանախ ներկայանում են քննութեան դիմանալու առիթներ: Լինում են եւ զիջումներ ու նահանջներ, միջուկի սիրոյն կեղեւը գոհելու համաձայնութիւններ ու բազմատեսակ երեւութական զործարքներ: Միայն թէ՛ մնայ ներքին ամբողջութիւնը:

Ներքին աշխարհը ըստ երեւոյթի

ինքնանպատակ չէ: Աննիթական ազատութիւնը ապրող մարդուն տալիս է հոգեկան առանձնականութեան կարողութիւն եւ այս կամ այն չափով զերծ է պահում նիւթական աւերիչ գործօնների հարուածներից ու պատճառած ցնցումներից: Մարդ ի վիճակի է դառնում «ճարտարօրէն» վարելու սեփական զեկը, շրջանցելու շրջանցուելիք սպառնական վիճակները եւ զվատը լուս տեսնելու» կամ «չեղին շաքար դարձնելու» կախարչական ճանապարհով ապահովելու, ըստ հնարարին, իր կենսական հաւասարակշռութիւնը: Սա «բանաստեղծական օրորոցի» նպաստներից մէկն է, որից կտրոջ են օգտուել թէ՛ բանաստեղծները եւ թէ՛ բանաստեղծի շփոհ հասկացող ընթերցողները ի հեճուկս թուղի պէս կարծր ու դիւրարեկ «երապարտներն»:

Չնայած բոլոր պայմանականութիւններին, բանաստեղծութիւնը իր բնութեամբ լուրջ է, կլանող ու կախարհող, ինչպէս սէրը, ազօթըրը եւ կեանքի միւս բոլոր ինքնարուխ ու իսկական իրողութիւնները: Ես անսեղեակ չեմ, որ կան նաեւ երգիծական բանաստեղծութիւններ: Բայց դրանք իրականում բանաստեղծութեան կերպարանքով հրամցւող երգիծանք են եւ դա, ի հարկէ, ապօրինի չէ: Բայց բուն բանաստեղծութիւնը անպայման ուրիշ է՝ տառապազին նուիրումի, միամիտ հաւատի ու օգնութեան ծնունդ: Նշանակում է՝ մարդկային հոգեբանութեան մէջ իր անփոխարինելի տեղն ունի բանաստեղծութիւնը եւ յենում է մնայուն տարրերի վրայ:

Գ.

Բանաստեղծութիւնը դիտելիքների կուտակում չէ, այլ ապրելու ձեւ, ներքին հոգեւոր կամ նմանակերպ ուժերը շարժման մէջ դնելու միջավայր, տիեզերական ժօտիկ ու հետաւոր խորութիւնների մէջ թափանցելով ամբողջութեան ներկայութիւնը զգալու եղանակ եւ նոյնիսկ կեանքի զէնք: Անցեալի ժառանգու-

թիւնը, քնակահարար, դառնում է հաբըստութիւն, փոխանցում սերնդից սերունդ: Բայց իւրաքանչիւր կենսունակ սերունդ, առանց յատուկ նշանակութիւն տալու, թէ իրենից առաջ ուրիշների կողմից ինչ է սահղծուել, ինքն է մշակում բանաստեղծութեան սեփական պարտէզը: Աւելի ճիշդ՝ իւրաքանչիւր բանաստեղծի հետ վերածնունդ է բանաստեղծութիւնը եւ վերաստեղծում ա՛յն, ինչ որ անթիւ անդամ արդէն վերաստեղծուել է:

Ինչպէս մարդիկ չեն դադարում շնչելուց, որովհետեւ իրենցից առաջ ուրիշները արդէն շնչել են, ապրելուց, որովհետեւ ապրել են, սիրելուց, որովհետեւ սիրել են, եւ այն, այնպէս էլ ոչ ոքի մաքով չի անցնում հրամարուել բանաստեղծութեան մէջ ընկղծուելու պատահականութեանց, որովհետեւ իրենից առաջ ուրիշները գրել են եւ իր իմացած ճշմարտութիւնները գտել: Ու թէեւ բանաստեղծների արծարծած նիւթերը ի սկզբանէ գրեթէ նոյն են, բանաստեղծութիւնը ինքը միւս էլ թափ է եւ չի ձանձրացնում ոչ մի դրոշի: Որո՛վհետեւ իւրաքանչիւր բանաստեղծի հայնացք երգիչի է, կարող է պատահամբ նմանուել որեւէ այլ անձանօթ հայնացքի, բայց չի կարող բուրբոնի նոյնը լինել, եթէ բանաստեղծը ամբողջութեամբ է կենտրոնանում իր հայնացքի մէջ եւ յիշողութիւնները չի խտնում անմիջական ապրումին:

Անուշտ բանաստեղծութեան մէջ ետ կան պարզ ու բարդ իրականութիւններ: Ուստի՝ պարզի դիտակցութիւնը կարող է կարճացնել բարդին հասնելու ճանապարհը: Այդ իմաստով էլ՝ անցեալում ձեռք բերուած գրական նուաճումները կարող են օգնել հետագայ ստեղծագործողներին, ինչպէս որ արդէն լինում է իրականում: Բայց այդ փոխանցումը այնքան վճռական չէ, որքան որ, ասենք, գիտութեան եւ այլնի մէջ:

Գիտութեան մէջ, օրինակ, այբբենական ճշմարտութիւնները թէեւ վաւերական են եւ հիմնական, ոչ ոք չի կա-

րող նրանց կրկնութեամբ պարծենալ: Գիտութիւնը յաջորդական յատնարե-
րումների շարք է, որոնք եւ կազմում
են նրա շարժիչ ուժը: Իւրաքանչիւր
փուլի պիտանական խտում է ժխան այդ
փուլին պատշաճող լինելով ու շարժա-
նիշներով, ինքնին հասկանալի համարե-
լով նախորդ փուլերը: Հնի ու նորի
ընդգրկման սահմանը յստակ է:

Մինչդեռ բանաստեղծութեան մէջ
Հնի ու նորի սահմանը այդպիսի յստա-
կութեամբ չի գծւում: Բանաստեղծու-
թիւնը կեանքի բխումն է, նրա ուղեկի-
ցը: Եւ ինչպէս որ չի կարելի յիշօրէն
խօսել Հնի ու նոր կեանքի ինքնայա-
տուկ որակական տարբերութիւնների
ժաման, այնպէս էլ բանաստեղծութեան
մէջ չի կարելի սպասել արժատական
խզում: Տարբերութիւնը ապրումների,
պատկերացումների եւ արտայայտու-
թեան ձևերի մէջ է, այլ ոչ թէ անպայ-
ման Հնի ու նորի: Որակային տարբե-
րութիւնները կարող են գրանցուել թէ՛
ուղղահայեաց եւ թէ՛ հորիզոնական ժա-
կարդակների վրայ, թէ՛ տարբեր ժամա-
նակների եւ թէ՛ նոյն պահի տարածական
Հէնքի ոլորտում:

Ըստ իս, բանաստեղծութեան մէջ
յանձն նորութեան մրցազարգը կարող
է ուշադրութիւնը շնորհիւ բուն հարցից:
Իսկանը ոչ այնքան նորութիւնը, որքան
որ ինքնուրոյնութիւնն է: Եթէ վերջինս
կայ՝ այս կամ այն շարժով սպառնում
է եւ առաջինը: Իսկ առանց վերջինի՝ ա-
ռաջինը կարող է պարզ հրազարութիւն
լինել, առանց մնացուց երաշխիքի: Բա-
նաստեղծութիւնը զարգանում է ոչ թէ
գիտելիքների գումարման, այլ ապրում-
ների փորձարկման եւ կենդանի շփում-
ների ճանապարհով:

Այսպէսով, բանաստեղծութեան ծա-
ռի գալար մնալու իրողութիւնը հաս-
տատուել է բոլոր ժամանակներում եւ
հաստատուում է նաեւ մեր օրերին: Թէեւ
արտաքուստ թուում է, թէ բանաստեղ-
ծութիւնը այլեւս հմայք չունի եւ գնա-
լով պակասում է հաստարիմների թի-
ւը, ուշադիր զննութիւնը վկայում է, որ
այն նոյնքան ներկայ ու կենսունակ է,

որքան որեւէ ժամանակ: Սա մի այնպի-
սի իրողութիւն է, որ չի կարող յենուել
սոսկ վիճակագրութեան վրայ, որպի-
սին, ի դէպ, ո՛չ եղել է եւ ոչ էլ կայ:
Հասկանալու համար հարկւոք է որոշ
չրջահայեացութիւն, սովորական աըր-
տունջներից այն կողմ տեղեկու պատ-
րաստակամութիւն:

Հնարւոք է, որ արդի բանաստեղ-
ծութեան որոշ տեսակներ շատ երկըր-
պագուններ չունեն, ինչ-ինչ պատճառե-
րով: Բայց հազարամեակների բանաս-
տեղծական բերքը զանազան լեզուներով
անընդհատ վերահրատարակւում է եւ
դրում գրասէրների տրամադրութեան
տակ: Այս դէպքում իւրաքանչիւր գրա-
սէր ընտրութիւն կատարելու աւելի քան
լայն հնարաւորութիւն ունի եւ զամենա-
դժուարահամեմատ անդամ կարող է բաւա-
կան թուով հարազատների հանդիպել
դարերի երկայնքով: Բանաստեղծութի-
ւնը ամբողջական ըմբռնում է եւ անհնա-
րին է կապել իր որեւէ տեսակին ու այդ
տեսակի ճակատագիրը նոյնացնել ընդ-
հանրապէս բանաստեղծութեան ճակա-
տագրի հետ:

Անուշտ, ինչպէս արդէն նշուել է,
ընթերցասիրութեան ու ընթերցանութեան
շտափողը կարող է փոփոխուել: Մեր
օրերին, օրինակ, բանաստեղծութիւնը
այն տարածումը չունի, ինչ որ ունի ար-
ձակ գրականութիւնը: Բանաստեղծու-
թեան լճակը արձակի ովկիանոսի մօտ
շատ փոքր է երևում, բայց դրանով
կանդերձ՝ նա չի շոգիանում ու շքա-
նում: Պատճառը պարզ է: Արձակը հա-
սարակութեան աօրեայ կեանքի արտա-
ցումն է, ուստի եւ հասարակութեան
տեսանելի, ըստ պահանջի յորդառատ
ու սպառելի: Մինչդեռ բանաստեղծու-
թիւնը ներքին ու ճյուղիւղ իրակա-
նութիւնների պտուղն է, ըստ էութեան
դժուարամատչելի իր անխառն վիճա-
կում: Բայց բանաստեղծութիւնը եւս
բաշխւում է՝ փոքրիկ բաժնեւէջներով
ու լուծուած վիճակում, որի անունը,
սակայն, այլեւս բանաստեղծութիւնն է,
այլ երգ եւ ուրիշ բաներ:

Բանաստեղծութեան հանդէպ լայն

Հասարակութեան ցուցարեւած ոչ խանդավառ վերաբերմունքը թերեւս բացատրուի նաեւ Հասունացման ու յառաջդիմութեան երեւոյթով: Յիրաւի, դատելով պատմական վկայութիւններէց, պարզակենցազ ժողովուրդներէ կեանքում բանաստեղծական խօսքի Հմայքը աւելի շնչառած էր: Մինչեւ հիմա էլ կան ժողովուրդներ, որոնք տակաւին քիչ թէ շատ աչքի ընկնող գրականութիւն չունեն, բայց զրա փոխարէն ունեն հարուստ բանահիւստութիւն, ինչ որ բանաստեղծականի գրուածման մէկ եղանակն է: Հաւանաբար այդ Հմայքը ոչ այնքան բուն բանաստեղծութեան Հեռ է կապուած, որքան որ բանաստեղծութեան Հեռ միասին հրամցուող միւս մասշտիպ ու կենսաթրթիւ տարրերի: Որքան ժողովուրդներէ կեանքը ընդլայնուած եւ թարգմանուած է, այնքան նուազում է բանաստեղծական մտածողութեան ու խօսքի ազդեցութեան թափը: Այս օրինակութիւնը կարելի է Հաստատ Համարել: Այսօր, օրինակ, արեւմտեան՝ ամէն տեսակէտից առաջաւոր երկրներում արձակ գրականութիւնը անօրինակ փարթամութեան մէջ է, մինչդեռ բանաստեղծութիւնը կայ միայն իր Համար՝ ի միջի այլոց:

Նոյնը վերաբերում է եւ անհատներին: Բանաստեղծութիւնը առաւելապէս հրապուրում է թարմ ու նորահաս պատանի-երիտասարդներին: Տարիների ընթացքում, երբ կլանում է կեանքի առօրեան, մեռքերը կոչանում են եւ ջիւղերը կարծրանում, իսկ միտքը զգաստանում», նոյն Համեմատութեամբ էլ նուազում է բանաստեղծութեան ներգործութիւնը: Բանաստեղծութեանը փոխաբերում են ուրիշ Հետաքրքրութիւններ: Սովորաբար սուտում է նաեւ, թէ նպատակալարմար է, որ այսինչ կամ այնինչ տարիքին Հասնելուց յետոյ, բանաստեղծներն էլ Հրաժարուն իրենց բզբաղմունքից: Իմ խորին Համոզումով, այդ յոռետեսութիւնը հիմնաւոր չէ՝ Հետեւեալ տրամարանութեամբ:

Ճիշտ է, որ «բարդակենցազ» ժո-

ղովուրդներէ մօտ բանաստեղծութիւնը ազդու չէ:

Ճիշդ է, որ զէպի ծերութիւն տանող ճանապարհին աստիճանաբար նուազում է բանաստեղծութեան Հմայքը:

Բայց ո՞ր կենսաշրջանն է առաւել նշանակելին՝ ծաղկափթիթ անման ու վերապայ մղումների ասարճը, թէ՞ պարպուած ու անաւուն, մահամերձ վիճակը: Արդե֞ք չըրացած ու տապալուած ծառի կողմը նախնաբնիկ է դայար ու նորարդորջ անկիներէց, եթէ Հաշի առնենք միայն կեանքի ներկայութեան ու բացակայութեան պարագան:

Եթէ նիւթական աշխարհում կան օրինակափութիւններ, որոնք Հասկնալի են եւ անխուսափելի, մարդկային կամքից դուրս, Հողեկան կեանքը կարգաւորում է մարդկային կամքի որոշակի միջամտութեամբ: Թերեւս չատերի մօտ Հողին եւս իսկապէս գծերանումն է, բայց Հողին ընդհանրապէս, իրրեւ այրպիսին, անպայման դատապարտում չէ ծերանալու, կեանքի թրթիւններին արձագանգելու կարողութիւնից զրկուելու: Այս իրողութեան լաւագոյն ապացոյցը տալիս է բանաստեղծութիւնը, որ կարող է մարդու կեանքում տեսել սկզբից մինչեւ վերջ, օգնել, օրպէպի պահպանել կենսազգացութիւնը, անհատականութիւնը, ազատութիւնը եւ անցողիկ իրերին գուրիչ աչքով նայելու՝ կարողութիւնը: Վերջին Հաշուով, այդպիսի իրական օրինակները քիչ չեն եղել եւ չեն: Ըստ երբ այս տեսանկիւնից ենք դիտում իրականութիւնը, բանաստեղծութեան ճակատագրի վերաբերեալ յոռետեսութիւնը բաւական նահանջում է:

Ի Հարկէ, բանաստեղծութիւն ասելով չպէտք է Հասկանալ միայն այն, ինչ որ մշակուած է պատմական որեւէ պահի, ասենք այսօր: Բանաստեղծութեան էութիւնը, գրանորումները, դերը պատկերացնելու Համար պէտք է պատմական լայն Հորիզոններ ընդգրկել: Քանզի ինչպէս ամէն բանի, բանաստեղծութեան Համալայի ընթացքը եւս երաշխաւորում չէ ոչ ոքի կողմից: Բանաստեղծութեան

ճակատագիրը պայմանաւորուած է լինում ապրող հասարակութիւններ ճակատագրով: Լինում են վերելքներ, վայրէջքներ, զարարներ, ամառի բացատներ, ջրածիգ բնկումներ, անցողիկ փրփուրներ ու նսեւ... կեղծիքներ: Ամէն ինչ պատճառաբանուած է պատմականօրէն, միայն թէ՛ դա երեւում է ամէն ինչի պատմութիւն գառնալուց յետոյ, երբ ցայտուն են դառնում այլազան տարրերի փոխադարձ կապակցութիւններն ու այս կամ այն երեւոյթի օրինակաբանութիւնը:

Մեր ժամանակներում եւս, ինչպէս արդէն քանիցս նշուեց, ամէնուրեք այս կամ այն չափով բանաստեղծութիւն է մշակուում: Բայց չինք կարող ասել, թէ մեր գարշազման բանաստեղծութեան ծաղկման դարաշրջան է, թէ՛ եւ ուրիշ բնագաւառներում այնքան շատ ծաղկող բաներ կան: Բուն ստեղծագործութեան կողքին գերակշռում են զանազան փորձարարութիւնները: Արժէքաւորի կողքին բաւական տարածուած են եւ ծածուկութիւնները: Այնպէս որ՝ բանաստեղծութեան անունով հրամցուող շատ բան տեսնելուց յետոյ, կարելի է յուսահատօրէն բացազանչել. «Մի՛ թէ սա է բանաստեղծութիւնը», երբ անպոչանգլուխ, անսկիզբ-անվերջ, այլանդակ մենախօսութիւնները նորաձեւութիւն են համարուում:

Բայց բանաստեղծութիւնը մենակ չէ: Եկարչական որոշ նորաստեղծ յղացումների ցուցանանդէսներում շրջելիս կարելի է նոյն ձեւով ասել. «Մի՛ թէ սա է նկարչութիւնը»: Քանզակագործութեան դէպքում՝ «մի՛ թէ սա է քանդակագործութիւնը»: Նոյն հարցը անտեղի չի թուայ եւ երաժշտութեան համար: Բանաստեղծութեան մէջ գոնէ դեռ ոչ ոք չի հասնել բառի եւ տառի (նշիւնի) ժխտմանը: Այլ ասպարէզներում համատարած ժխտումը կարծես թէ գառնում է «նուիրական» օրէնք: Շատ դէպքերում նկատուում է մի զարմանալի, հիւանդագին միտում՝ վերադառնալ դէպի նախամարդկայինը, աննյանը, անմիտը, տղեկը, զգուելին: Թերեւս դա համար-

ւի «պատրանքների վերացում» կամ «խորութիւնների ընդդրուում», եւ այլն: Մակայն նման պատճառաբանութիւնը չի կարող հիմնուող լինել: Ի տես յիշեալ երեւոյթների, ամէն ոք, բնականաբար, ունի իր բացատրութիւնները: Ինձ համար եւս անբարենչի հանելուկներ չկան: Մակայն իմ բացատրութիւնները վաւերական են միայն ինձ մօտ եւ հական չեն մ'չ աշխարհի, ոչ էլ արուեստի ճակատագրի համար: Եթէ հասարակութեան կեանքում, ինչպէս եւ արուեստի մէջ որոշ հոսանքներ են առաջանում եւ տարածում գտնում, բացատրութիւնը պէտք է որոնել այդ հոսանքների զրոգապատճառների ու հետեւաքննելի, այլ ոչ թէ սեփական նախախորութիւնների ու ճաշակի մէջ: Իւրաքանչիւրի համար սեփական նախախորութիւններն ու ճաշակը շատ կարեւոր են, նայինսկ վճռական, հրամցուող այս կամ այն զապրանքը՝ ընդունելու կամ մերժելու համար, բայց զբանջ չեն կարող փոխարինել համապարփակ հետազոտութիւններին:

Այս միջանկեալ օրինակները պատահական չէին եւ առընչում են խորհրդագծութեան առարկային՝ բանաստեղծութեանը: Ուշադրաւ է, որ ճզնաժամային մտայնութեան նշանները առաւելապէս երեւում են արուեստի որոշակի ասպարէզում, մասամբ էլ բանաստեղծութեան մէջ: Արուեստագիտական պատկերացումների աւանդական համակարգը խախտում է: Ելքը կարծես թէ խցում եւ շարժումը կասեցւում: Յետի մէջ ինքնագոհութեամբ դպիւր դառնում է կայութեան արդարացում: Եւ թւում է, թէ երեւի բաւականաչափ հիմք ունեն ժամանակ առ ժամանակ ձեւակերպուած շրջափուլային տեսութիւնները, թէ զարգացումը, յառաջդիմութիւնը եւ անսահմանութիւնը ուղիղ գծի վրայ չեն գտնուում, թէ ինչ որ տեղ կանգ առնելն անհրաժեշտ է՝ շրջուելու եւ ամէն ինչ նորից սկսելու համար, լաւագոյն դէպքում մի այլ մակարդակով, եթէ կարելի է վերահսկել գործողութիւնները:

Մրանք սոսկ հարեւանցի խորհրդա-

ծութիւններ են: Եթէ արուեստի մէջ որեւէ մտայնութիւն գոյանում եւ շարունակում է՝ նշանակում է կայ նաեւ արձազանգոյ համապատասխան Հասարակութիւն: Արուեստի զէպքում եւս, անտարակոյս, «սպրանքի գինը շուկան է որոշում»: Եթէ ազատ են արուեստագէտները, ազատ են նաեւ արուեստն ընկալողները: Ընդունելն ու մերժելը Հասարակչաւ օրինական եւ թոյլատրելի են: Հետեւապէս փորձարարութիւններն էլ սահմանուած են որոշ Հասարակութեան Համար, այլ ոչ թէ բոլորի: Իւրաքանչիւրն սպրում է իր նախասիրու-

թիւններով: Դրա Համար նպատակարար պայմաններ կան՝ նաեւ կրօնական մշակութային ժառանգութեան Հաշուին: Թող լինեն փորձարարութիւններ: Բայց թող մնայ եւ մարդկային ողջմտութիւնը:

Այդ ողջմտութիւնը հետազօտել է բանաստեղծութեան ճանապարհը եւ Հասարակութեան նրա Հանդէպ: Ծլմարիտ քառասունհինգութիւնը բխում է կեանքից եւ ուղեկցում մարդուն, ոչ թէ կողքից, այլ ներսից: Դա այդպէս է այն անյիշելի ժամանակներից ի վեր, երբ կոտորել է, թէ մարդը կենցէ ոչ միայն Հացիւ:

(Շար. 2 եւ վերջ)

Լ. ՄԿՐՏՁԵԱՆ

Ն. Զ Ա Ր Խ Ո Ւ Տ Ե Ա Ն

**Ֆ Ր Ա Ն Ս Ա Կ Ա Ն
Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Կ Ի Ց
Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Ծ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը**

Յ Ե Տ Պ Ա Տ Ե Ր Ա Ջ Մ Ե Ա Ն Շ Ր Ջ Ա Ն (1945-1955)

Ժ Ա Ն Ք Ե Ր Ո Ւ

Ժան Գերոյ ծնած է Պորտո քաղաքը, 6 Յունիս 1911ին, մէկ խօսքով՝ Ճրանաւա Մօրիաքի քաղաքացին է: Կանուխէն սիրած է գրականութիւնը եւ իր բարձրագոյն ուսումը զարգացուցած է այդ ուղղութեամբ: Պատերազմի ընթացքին ծառայած է նաւային ուժերու մէջ եւ զինուորային ետք անցած է ընդդիմադիրներու շարքը, զնկապետ Ռեմիի խմբակէն մէջ: 1942ին կ'իյնայ Կեսթափոյի ճիրաններուն մէջ եւ կ'արգելափակուի Մառութաւաքնի կեդրոնացման կայանը, ուրիկէ հրաշքով օղջ կը վերադառնայ 1945ին:

Ժան Գերոյի գրական ստեղծագործութեան սալարէզը ընդարձակ է եւ ալլազան, բայց անոր մեծագոյն յաջողութիւնները պէտք է փնտռել բանաստեղծութեան մարզին մէջ:

Իր գործերէն յիշե՛ք.— «Թռչող կոյտնացիներ» (1935), «Երկնային երևայթմերը» (1939), «Փրկութեան հայելի» (1943), «Մշուշի եւ գիշերուան պանսններ» (1945), «Մարդոց եւ քառանկերուն ժամանցը» (1947), «Քրիստոսնեայիմ պսակը» (1949), «Ծննդավայր մեռելափոսը» (1950), «Ամբիները բնակարաններ են նաեւ» (1952), «Բալար ժամանակներու համար» (1959):

Ժան Գերոյ իր գործերուն մէջ կը զարգացնէ նուատացած ուխտաւորի թեման: Իրեն համար մարդը կորսուած արարած մըն է երկինքին եւ ջուրին միջեւ, եւ կը փորձէ խուսափիլ գեհեմական այն նահատակութեն, որ կը կոչուի առանձնութիւն: Իր բոլոր էջերուն մէջ կը նկարագրէ թափառումը մարդուն, որ կը տարակուսի, կը յուսայ ելք մը գտնել իր յախենական փրկաւորութենէն եւ յոգնած է իր առանձնութիւնը աղաղակելէն եւ մշուշի ու խաւարի մէջէն զէպի քրիստոնեային պսակը քաշելու յուսահատական ընթացքէն:

Անձկութիւնն ու Հողեկանութիւնը կը Հանդիսանան իր Հաւատքին գըլ-խաւոր տարրերը, զորս կ'արտայայտէ ինքնուրոյն եւ պատկերաւոր ոճով մը:

ծութիւններ են: Եթէ արուեստի մէջ որեւէ մտայնութիւն գոյանում եւ շարունակում է՝ նշանակում է կայ նաեւ արձագանգող համապատասխան հասարակութիւն: Արուեստի զէպքում եւս, անտարակոյս, «ապրանքի գինը շուկան է որոշում»: Եթէ ազատ են արուեստագէտները, ազատ են նաեւ արուեստի ընկալողները: Ընդունելն ու մերժելը հասարակութեան օրինական եւ թոյլատրելի են: Հետեւապէս փորձարարութիւններն էլ սահմանուած են որոշ հասարակութեան համար, այլ ոչ թէ բոլորի: Իւրաքանչիւրն սպրում է իր նախասիրու-

թիւներով: Դրա համար նպաստաւոր պայմաններ կան՝ նաեւ կուտակուած մշակութային ժառանգութեան հաշուին: Թող լինեն փորձարարութիւններ: Բայց թող մնայ եւ մարդկային սղջմտութիւնը:

Այդ սղջմտութիւնը հետազօտել է բանաստեղծութեան ճանապարհը եւ հաստատունի նրա հանդէպ: Ընթացիկ բանաստեղծութիւնը բխում է կեանքից եւ ուղեկցում մարդուն, ոչ թէ կողքից, այլ ներսից: Դա այդպէս է այն անյիշելի մամանակներից ի վեր, երբ կուտուել է, թէ Վարդը կեցցէ ոչ միայն հացիւք:

(Շար. 2 եւ վերջ)

Լ. ՄԿՐՏԶԵԱՆ

Ն. Զ Ա Ր Խ Ո Ի Տ Ե Ա Ն

Ֆ Ր Ա Ն Ս Ա Կ Ա Ն

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Կ Ի Ց

Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Շ Ո Ի Թ Ի Ի Ն Ը

ՅԵՏ ՊԱՏԵՐԱԶՄԵԱՆ ՇՐՋԱՆ (1945-1955)

Ժ Ա Ն Ք Ե Ր Ո Ւ

Ժան Գերոյ ծնած է Պորոս քաղաքը, 6 Յունիս 1911ին, մէկ խօսքով՝ Ծրանսուա Մօրիաքի քաղաքացին է: Կանուխէն սիրած է գրականութիւնը եւ իր բարձրագոյն ուսումը զարգացուցած է այդ ուղղութեամբ: Պատերազմի ընթացքին ծառայած է նաւային ուժերու մէջ եւ զինադուլէն ետք անցած է ընդդիմադիրներու շարքը, զնդապետ Ռեմիի խմբակին մէջ: 1942ին կ'էյնայ կեսթափոյի ճիրաններուն մէջ եւ կ'արգելափակուի Մասթհաւընի կեդրոնացման կայանը, ուրիկ հրաշքով ողջ կը վերադառնայ 1945ին:

Ժան Գերոյի զրական ստեղծագործութեան ասպարէզը ընդարձակ է եւ այլազան, բայց անոր մեծագոյն յաջողութիւնները պէտք է փնտռել բանաստեղծութեան մարզին մէջ:

Իր գործերէն յիշենք.— «Թուշոզ հայամտացին» (1935), «Երկնային երեւոյթները» (1939), «Փրկութեան հայելի» (1943), «Մշուշի եւ գիշերաւան պոեմներ» (1945), «Մարդոց եւ քաղաքներուն ժամանցը» (1947), «Փրկատոցնային պատկը» (1949), «Մննդավայր մեռելափոսը» (1950), «Ամիսները քնակարաններ են հան» (1952), «Բօլբը ժամանակներու համար» (1959):

Ժան Գերոյ իր գործերուն մէջ կը զարգացնէ նուաստացած ուխտաւորի թեման: Իրեն համար մարդը կորսուած արարած մըն է երկինքին եւ լուրին միջեւ, եւ կը փորձէ խուսափիլ գեհնական այն ճակատագրէն, որ կը կոչուի ատանձնութիւն: Իր բոլոր էջերուն մէջ կը նկարագրէ թափառումը մարդուն, որ կը տարակուսի, կը յուսայ եւք մը դտնել իր յաւիտենական փրկարարութեան եւ յոգնած է իր ատանձնութիւնը աղաղակելէն եւ մշուշի ու խաւարի մէջէն դէպի քրիստոնեային պսակը քալելու յուսահատական ընթացքէն:

Անձկութիւնն ու հոգեկանութիւնը կը հանդիսանան իր հաւատքին դըր-խաւոր տարրերը, զորս կ'արտայայտէ ինքնուրոյն եւ պատկերաւոր ոճով մը:

ԳՐՈՒԱԾ ՊԱՏԻՆ ՎՐԱՅ

Կը պատկանիմ լուսօրս
 Զայնիս շուքին
 Հաւատքի մերկ պատերս
 Տրամսայի կարծր հացին :
 Կը պատկանիմ վերադարձին
 Գոցուած դրան
 Ո՞վ կը գարնէ բակին մէջ
 Ո՞վ կ'երգէ խաղաղութիւն
 Այգը կը սնուցանէ եռզը
 Կրակի ազրիւրէն
 Կը պատկանիմ կապոյտ երկինքին ,
 Որ կը տառապի քարին վրայ :

ԿԸ ՔՆԱՆԱ՛Ս ԱՐԳԵՕՔ

Արթնցի՛ր. ցուրտը հասած է մեր դռներուն
 Եւ լուսինը կը գոցուի մեռած բերնի մը պէս :

Արթնցէ՛ք, պազպատէ՛ ձեռնոցներով մարդեր,
 Սուր մը՝ լքուած մանուկի մը պէս :

Արթնցի՛ր, մտեր ձի հեծած է արդէն
 Եւ օրաքերքին մէջ կը լսեմ անոր սմբակներուն ձայներ :

Արթնցի՛ր, ես եմ ձայնափնտնելու ուրուականը,
 Զեզի փռիս կու տամ ձայնս, որ կը հարուածէ կոնակէն :

Արթնցէ՛ք, պազպատէ՛ ձեռնոցներով մարդեր,
 Գիշերը երածեշտ կ'առնէ ձորին յատակէն :

Արթնցէ՛ք, այս այն ժամն է, երբ առիւծները խմելու կ'երթան,
 Սուր ժամը, որ կը գոցուի իր փղոսկրէ քեւերուն մէջ :

Արթնցէ՛ք, ելարանը արդէն կոքնած է պատին
 Եւ լուսինը կը բարձրանայ ձեր գրահներուն մէջէն :

Արթնցի՛ր, խարոյկներու հին գայրոյթ,
 Նոր արթնցած քած, որ կը քաշէ շղթան :

Արթնցէ՛ք, պահարաններու հսկայական կատաղութիւն,
 Տախտակամածի շարժ, յոյսի քեթիւ ազմուկներ :

Արթնցի՛ր, Տէ՛ր իմ, եթէ ոչ պիտի ուտուիս,
 Աստուած իմ, որ զիս կը լուսաւորես մինչեւ անցիկն ծայրը :

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Պոեմ մը այժմեր բաց չի մնար: Ան կը դառնայ կոյր, երբ բանաստեղծը կը լէ՛ւ գայն: Պոեմը պէտք ունի ուրիշներուն. կը եամակերպի անոնց սովորութիւններուն, անոնց անբիղութեան, անոնց յոյսին ճառ: Տեստաբիւմ, բանաստեղծ: Պէտք է որ բառերը քաղեն բառերը:

Այս կտորները քաղուած են «Փրկութեան հայելի» եւ «Բարձր ժամանակներու համար» հատորներէն:

ՌՐՆԷ ՇԱՐ

Ռրնէ Շար ծնած է Հարաւային Ծրանայի Վօքլիւզ նահանգի կանաչազարդ ու ջրառատ գիւղերէն մէկուն մէջ, այն աղբիւրին մօտ, ուր Փեթրարք առաջին անգամ հանդիպեցաւ իր անմահ սիրուհիին:

Կանուխէն մասնակցեցաւ գերբրապաշտ շարժումին եւ արտադրեց բանաստեղծական բազմաթիւ հատորներ: Պատերազմի ընթացքին՝ ան Հրամանատարը եղաւ վարքիզաններու խմբակի մը, որ կը գործէր լեռնային շրջաններու մէջ: Հոն՝ մօտէն ճանչցաւ ժառանգային տառապանքը, սկսնատես եղաւ անպատմելի հերոսութիւններու եւ անյիշելի վատութիւններու, եւ հասկցաւ, որ բանաստեղծութիւնը բառերու խաղ մը պէտք չէ ըլլայ միայն, այլ մարդ արարածին էութեան մէկ մասնիկը: Փոխեց իր գրելաձեւը, իր տողերուն տալու համար աւելի ծանրութիւն եւ աւելի մաքրկայնութիւն: Իր բանաստեղծական արտադրութիւններէն յիշենք.

«Մարտը՝ առանց տիրոջ» (1934), «Դարսը, գիշերը կառավարուած է» (1938), «Միայն կը մնան անոնք» (1945), «Հիփոսի թղթիկներ» (1946), «Մէկը եւ միւսը» (1957), «Տիրի սանդուխտը», (1958), «Խօսքը՝ արշիպեղազոսի ձեւով» (1962), «Համայնական Անրկայութիւն» (1964):

Ռրնէ Շարի ստեղծագործութիւնը անցած է երկու հանգրուաններէ, որոնց միջեւ կը տիրէ երկար լուսթիւն մը, որ կը համապատասխանէ պատերազմական շրջանին:

Առաջին շրջանը կը համապատասխանէ գերբրապաշտ ներշնչումին եւ ունի անոր երկու դիտարութիւնները. բառերու սանձարձակ եւ անկապ գործածութիւն եւ ենթարկում զէպքերու վերլուծարումին:

Երկրորդ շրջանը կը սկսի 1946ին, երբ կը յայտնուի նոր բանաստեղծ մը, որ կ'երգէ իրականութիւն մը, որուն զաղտնիքները մեզի անձանօթ կը մնան: Շար մեզի ցոյց կու տայ այն ճամբան, որ կրնայ տանիլ լարբերինթոնէն դուրս:

Վերջին տարիներուն՝ Ռրնէ Շար կը նկատուէր արդի բանաստեղծութեան ամէնէն վաւերական զէմքերէն մէկը, որովհետեւ անոր էջերէն կը ծնի լեզի լուստեսութիւն մը, որ զինք կը դասէ Մալրոնի մը կամ Բամիւի մը կողքին, որոնք, իրեն պէս ապրելով հանդերձ կեանքի անհեթեթը, չէին խրած անոր մէջ եւ խօսքը կը նկատէին աշխարհը փրկելու միջոց մը. «Գնա՛րագոյն յուսահատութեան ժամանակ եւ աննպատակ յոյսին, որ մեզ կը դատապարտէ այրելու խօստումին եւ անցեալին միջեւ, խօսքը չընեղեղ է», կը գրէ Շար իր անեղծուածային սօսով:

Ան գիտէ պարզ բառերով եւ առօրեայ տեսարաններով ստեղծել փաթեթաւ եւ տարօրինակ պատկերներ, որոնք կը հանդիսանան անուրանալի ժառանգը իր գերբրապաշտ անցեալին: Շար երկրպագողը չէ ունայնութեան, որովհետեւ իր կրօնքը կը կոչուի բանաստեղծութիւն:

ՀԱՐՍԱՆՆԵՎԱՆ ԳԷՄՔԸ

Ներկայիս անհետացե՛ք, պահակներս, կանգնեցե՛ք հեռուները,
Թիւի՛ն քաղցրութիւնը գոյութիւն չունի այլևս,
Հրածե՛շտ ձեզի, ընկերներս, բիրտերս, ուղեցոյցներս,
Ամէն բան ձեզ կը տանի, մուսստացնող տիրութիւն:
Կը սիրեմ...

Ո՛վ զեզումի երկնակամար, փորի՛ց պսակին վրայ
Սև օժիտի մրմունջ,
Ասեմամարզանքի ո՛վ չորցած կշռոյթ:
Մեռ՛ւնդ, ուղղութիւն սուր ըմբոսներուն, բող գունեմ իրենց խորիսլը,
Անժխտելի մուշը՝ նոր վաղորդայնով:
Իրիկունը գոցեց ծովահէնի իր վերքը, ուր կը ճամբորդէին անորոշ
հրթիռներ՝ շուներու տեսական վախի մէջ:
Անցնալի ճիւղայի սուգերը դէմքին վրայ:

Անմարելի ապակի- շունչս կը հպեր վերքի՛ց բարեկամութեան եւ կը
զինէր անտեսանելի քաղաւորութիւնդ
Եւ մշուշի շրթունքներէն կը ծորէր պողպատէ տանիքով եւ աւազակոյտ
սեմով մեր հանայքը:
Գիտակցութիւնը կը գորացնէր բու յաներծութեանդ բրթաքանդ կառոյցը.
Հաւատարիմ պարզութիւնը տարածուեցաւ ամէն տեղ:

Առուակներ՝ քարայրային մեռելներու ձայնամիշներ,
Դո՛ւք՝ որ կը հետեւիք երաշտ երկիւնքին,
Ձեր քայլածքը խառնեցէ՛ք փոքորիկներուն, անոր՝ որ բուժեց
դասալուծութենէն,

Ձեր առողջ ուսումներուն փոխարէն:
Յարկին տակ հասը կը խեղճուի կռելով սիրտ եւ լոյս:
Ա՛ն Մտածումս, քափանցիկ ձեռքս ծաղիկը,
Առանց արթնցնելու մութ ծառատանը:

Պիտի չտեսնեմ կողերուդ, անօթութեան այդ պարսերուն՝ չորնալը եւ
լեցուիլը փուշերով:
Պիտի չտեսնեմ մակարոյծիմ էնզ փոխարինելը շերմարանիմ մէջ:
Պիտի չտեսնեմ խեղկատակներու մօտեմալը վերածնող այգին մէջ:
Պիտի չտեսնեմ մեր ազատատենչ ցեղին ստրկօրէն ինքնաբաւ ըլլալը:

Պատրա՛նք, բարձրացանք սարահարթին վրայ.
Ճամբաներու հորիզոնը մինչեւ եղեամբիմ մակընթացութիւնը,
Անդարմանելիին մտերիմ վերջաւորութիւնը:
Ահա՛ մեռած աւազը, ահա՛ փրկուած մարմինը.
Կինը կը շնչէ, Մարդը ռաբի կանգնած է:

ԷՏՄՈՆ ԺԱՊԷՍ

Համոն ժապէս ելիպտական ծագում ունի, ինչպէս ցոյց կու տայ իւր մականունը, որուն առաջին գիրը կարելի է վերածել նի: Ան ծնած է Գաւհրէ, 1912ին եւ երիտասարդ տարիքին բանաստեղծական ուխտ ըրած է: Երկար տարիներէ ի վեր կ'ապրի Ճրանաս: Ժապէսի Համար բանաստեղծութիւնը հոգեկան պահանջք մըն է, որուն պէտք է զոհացում տալ:

Իր պոեմներուն մէջ կարելի է նշմարել ներքին ճակատագրի մը յարտուսն փնտրութիւնը, առօրեայ դէպքերը եւ տեսարանները վերլուծելու կարողութիւնը՝ բանաստեղծական մթնոլորտի մը մէջ:

Իր գործերէն յիշենք՝ «Երգեր դիւի մը հանգիստին համար» (1947), «Աշխարհին կեդրուր» (1955), եւ «Կը կառուցեմ բնակարանս» (1959):

ՔԵՁԻ ԿԸ ԳՐԵՄ ԵՄՆՐ ԵՐԿՐԷ ՄԸ

Կըզրեմ բառերին համար: Քեզի կը գրեմ երկրէ մը, որ ծանր է թիւապարտի մը քայլերուն պէս, քաղաքէ մը՝ նման ուրիշ քաղաքներու, որ զպուած ազազակները կը գայարունին ցուցափեղկերուն մէջ, սենեակէ մը, ուր թարթիչները կամաց-կամաց քանդեցին լուսիւնը:

Դուն ես, մակտաագրուած ընկալուի, գրելուս պատճառը, գուաքք ներշնչարանը լոյսին եւ գիշերուան:

Դուն ես կապոյտէն ծարու կարօպի վիզը,
Այնքա՞ն գեղեցիկ՝ որքան սիրուիին ձեռքը
Աչքերու վրայ:
Այնքա՞ն քաղցր:

Քեզի կը գրեմ ժամանակ, հեւացող ու կարմիր քառերու մարմնով:

Անոնք քեզ կը պարտեն: Իմ մէջս ընակող բալտ քառերը ես եմ եւ անոնց իւրաքանչիւրը քեզ կը փառաբանէ իմ ձայնովս: Քեզի պէտք ունիմ սիրելու համար, սիրուելու համար այն քառերէն, որ կ'ընտրեն զիս: Պէտք ունիմ տառապելու ներաններուդ մէջ, որպէսզի կարենամ վերապրիլ պսնմի վերքերէն:

Նեոս եւ թիրախ միտնգամայն: Պէտք ունիմ իշխանութեանդ՝ ինքզինքէս ազատագրուելու համար:

Քառերը ինծի առվեցուցին զգուշանալ նշանակուած առարկաներէ: Դեմքը հալածուած աչքերուն ապաստանն է: Միակ փափաքս է կոյր

ըլլալ:

Այնքա՞ն գեղեցիկ, որքան սիրուիին ձեռքը
Մանուկի մը ժպիտին վրայ:
Այնքա՞ն թափանցիկ:

ԵՐԵՎԱՆԻ ՓՈՒԵՐՈՒՆ ԵՐԳԸ

Երեք կարմիր փիզեր կը խնդան
Գրատան մը սեմին առջեւ

Երեք փիզեր եւ փոզոցը
Մարգրիտ մը եւ արօրը:

Մտե՛ք, խնայե՛ր եւ բժիշկներ,
Ներում կը շնորհուի ռեազորներուն:

Երե՛ք փիղեր եւ երե՛ք աստիճաններ,
Հաւասար գետնի վրայ սառցահալի մէջ:

Եւ ապակիէ աչքերով պռոնիկներ՝
Երե՛ք հարիւր հազար ցուակներ:

Երե՛ք կարմիր փիղեր
Կու լամ մեր տան վարը:

Երե՛ք փիղեր ու պողոտան
Եւ գեղեցիկ մերկ ազնիվ մը:

Երե՛ք փիղեր գիշերային,
Զգայուն սիրտ մը եւ անոնց ձանձորաբլբլ:

Մտե՛ք, մշխիթի ատաղձագործներ,
Ծախելի՛ք շատ փայտ ունիմ:

Մեծ խարոյկ մը կը պատրաստուի
Քարերուն եւ ձիերուն համար:

Մտե՛ք, աղատներ եւ թագաւորներ,
Պարստիկ եւ ազնի արձակողներ:

Մեղրի եւ գիճորքաւորի երեկոներ,
Հաղին եւ մոմերուն համար:

Երե՛ք փիղեր նստարանի մը վրայ,
Արծիւ մը եւ ներմակ առատուր:

ՀԱՆՐԻ ՄԻՇՕ

Հանրի Միշօ ծնած է 1899ին, Պելճիքայի Նամիւր քաղաքը: Եղած է ինքնամփոփ եւ լուսկեաց պատանի մը, որ կը խրաչէր արտաքին աշխարհի բրտուքենէն եւ սպաննայիքներէն: Կեանքին այդ շրջանը լաւագոյն ձեւով նկարագրելու համար՝ խօսքը տանք բանաստեղծին. «Մինչեւ պատանու-բիւն, ան կը մտանէր գազտնապահ եւ ինքնաբաւ գունտի մը, պղտոր, խիտ եւ անձմական տիեզերք մը, ուր ոչ մէկ բամ տեղ ունէր, ո՛չ ծնողք, ո՛չ զգացում, ո՛չ սէր, ո՛չ մէկ առարկայ, ո՛չ նայնիսկ անոնց պատկերը կամ գոյութիւնը...»:

Անմիջապէս որ առիթը ներկայացաւ, Հանրի Միշօ ուղեց ճանչնալ այն աշխարհը, որ այնքան կը տառապեցնէր զինք: Այցելեց շորս ցամաքա-մասերը: Վերադարձին՝ սկսաւ յաճախել գրական եւ գեղարուեստական շրջանակները: Առաջին օրէն յարեցաւ գերբրապաշտ շարժումին եւ մնաց գերբրապաշտ՝ իր կեանքին ամբողջ տեւողութեան:

1940էն ի վեր կ'ապրի մեկուսի, հետու աշխարհէն ու կը շարունակէ ստեղծագործել լուսթեան մէջ, ճրիտասարգ բանաստեղծները Հանրի Միւլոն կը նկատեն արդի բանաստեղծութեան ամէնէն վաւերական առաջնորդը եւ կը հետեւին անոր քայլերուն:

Միւլո բանաստեղծ է իր ամբողջ էութեամբ եւ իր բոլոր արտագրութիւնները բանաստեղծութիւններ են: Իր գործերէն յիշենք զլիտաւորները. «Ով որ եղայ» (1927), «Եհուատոր» (1929), «Բարբարոս մը Ասիոյ մէջ» (1932), «Փիշիբր կը շարժի» (1934), «Փետուր» (1938), «Փորձութիւններ, դեւահանութիւններ» (1943), «Կեանքը ծալքերու մէջ» (1949), «Անցքեր» (1950), «Ենդն հրաշք» (1955), «Անհանգարտ անհունը» (1967):

Հանրի Միւլո գերբնական գործաւ ու մնաց գերբնական ոչ թէ նորարարութեան մը հետեւելու համար, այլ որովհետեւ այդ շարժումը կը համապատասխանէր իր էութեան եւ ներաշխարհին:

Միւլոյի ներշնչումին տանցքը կը կազմէ այն թշնամանքը, որ է ըսկըզբանէ գոյութիւն ունի մարդ արարածին եւ տիեզերքին միջեւ: Բարբարոսարար, Պարզը պաշտպանուելու եւ յարձակելու համար ունի զէնք մը, — խօսքը: Բայց խօսքը հում նիւթ մըն է, որմէ բանաստեղծը կը պատրաստէ իր զէնքերը և հիմուրը կը գործածէ իբր վառօդ: Խօսքին և տիեզերքին յարասեւ բարութեան կը ծնին կայծեր, որոնք կը հանդիսանան բանաստեղծութեան բոցավառումները եւ կախարհանքը: Խօսքը, որ կը ծնի այդ թշնամանքէն, կը վերածուի փամփուշտի բանաստեղծին ձեռքերուն մէջ եւ կ'երթայ Հարուածել արեգիկը եւ գայն կը վիրաւորէ եւ կ'ալլափոխէ:

Միւլոյի գինամթերքը իր ոճն է: Ինքնուրոյն եւ արտակարգ ոճ մը, շնչապառ եւ կտաւդի, ուր պատկերները եւ շարժադրութիւնները ունին նոյն սանձարձակ բրտութիւնը: «Բանաստեղծութիւնը աշխատանքի մը արդիւնքն է, այլ անբացատրելի շնորհիք մը», կ'ըսէ Միւլո:

ՀԱԿԱՌԱԿ

Քեզի համար պիտի շինեմ ֆաղափ մը ցնցոտիներով,
Պիտի շինեմ ֆաղափ մը՝ առանց յատակագիծի եւ կրաղիւսի,
Շէնք մը, գոր պիտի չկարեմաս քանդել...

Ծուխով, մշուշի եւ քմբուկի ձայնի խառնուրդով,
Պիտի հիմնեմ ծանր ու հոյակապ ամրոցներ,
Ցնցումներէ եւ յորձանքներէ բաղկացած ամրոցներ,
Որոնց գէւմ ձեր հազարամեակները եւ երկրաշարժութիւնը
Պիտի փշուռին անհիմաստ բարբաջանքներու եւ աւազի փռչիւններու պէս:

... Օձին քայլեր իմ հաւատարիմ բարեկամս է,
Հաւատարմութիւն մը, գոր կը գնահատէ իր իսկական արժէքով:
Եղբայրներ, գեհեմապարտ եղբայրներ, հետեւեցէ՛ք ինծի անվարամ,
Գայլին ժանիքները չեն ձգեր գայլը,
Ոչխարին միսն է, որ կը թաւնայ:

ԹԱՊԱԽՈՐՍ

Գիշերուան մէջ, կը պաշարեմ թագաւորս, կը կանգնիմ աստիճանաբար եւ կ'ուարեմ վիզը:

Կրկին կը գորանայ, կը յարձակիմ վրան եւ երկրորդ անգամ կ'ուարեմ վիզը, կը ցնցեմ գայն, կը ցնցեմ փտած սալարեցիի մը պէս եւ անոր թագը կ'երեւոյ գլխուն վրայ:

Եւ սակայն ան իմ թագաւորս է, զիտեմ, որ ինձ ալ զիտէ եւ ես անոր ծառայութիւն կ'ընեմ:

Սակայն գիշերուան մէջ ձեռքերուս կիրճը գայն կը խեղդէ անգագար:

Վատութիւն չէ այս, որովհետեւ կու գամ մերկ ձեռքերով եւ կը սեղմեմ անոր թագաւորական վիզը:

Եւ իմ թագաւորս է, գոր այնքան ատենէ ի վեր գուր կը խեղդեմ սենեակիս մէջ: Անոր կապաւտցած դէմքը կամաց-կամաց կը վերստանայ իր բնական գոյնը, գլուխը կը բարձրանայ ամէն գիշեր:

Այսպէս է, որ կը վարուիմ անոր հետ, անվերջ կեանքիս մութ սկիզբէն ի վեր:

Եւ անմիջապէս գայն կը պառկեցնեմ գետին, կ'ապտակեմ, կ'ապտակեմ, յետոյ ճիթը կը սրբեմ՝ ինչպէս մաճուկի մը, ծաղրելու համար:

Սակայն կտակած չկայ, որ ան է թագաւորը եւ ես անոր հպատակը, մէկ հասիկ հպատակը:

Յաջորդ օրը պէտք է վերակսիմ:

Ան միշտ հան է: Ձի կրնար մեկնիլ վերջնականապէս: Պէտք է որ ինձի պարտադրէ իր անիծեալ մերկայութիւնը եւ թագաւորական մերկայութիւնը իմ այնքան փոքրիկ սենեակիս մէջ:

(Շար. 4)

ՆՈՒՊԱՐ ԶԱՐԽՈՒՏԵԱՆ



ԱԼԵՅՈՒՓ ԶՈՒՐԵՐ

(Կ. ՄԵՆԵԱՆ)

Կ. Մենանի Եկեղեցիի գուրգուրանքն անան հասարակ, որ արժանացու հասն հՀայկ Մերկնիկականք գրական Ժրգանակին, կը հաշուէ 202 էլ և կը պարունակէ 22 գրութիւններ:

Գրական-գեղարուեստական սրահումէն ասորիբեր սահմանում ժը անհրաժեշտ է՝ ընտրուելու համար Կ. Մենանի ներկայ հասարակ: Գրքին ժուտը կազմող ևւ շնորքը խորագրուած առաջին գրութիւնն ինչ ընթերցողը կը արժանազէ ասորիբեր ուղղութեամբ: Գրականութեան արեւթեր՝ ասորիբեր Ժը կը զուէ գրքին առչերուն ևւ էջերուն ընդմէջին ևւ զայն կարգալու հեղի ժը կը ժղէ ընթերցողը, կրկններ, գրականին ընտրութիւն ասորիբեր շահարգութեամբ:

Այս երեսուցի թերեւս պատճառը այն ապուարութեան, ըստ որում՝ Եկեղեցիի շարքերը պէտք է ըստենի երկու ասորիբեր գրքերու, ևւ կամ՝ նոյն գրքին մէջ ամբողջապէս երկու անշտտ ժուտերու: Այդ բաժանումը չէ կատարուած գրքին մէջ, անհիւս կը կատարուի ընթերցողին ժուտին ևւ կը կրէ հետեւեալ երկու պիտակները, — աղգային ևւ ժարդիպան-անհասարակ:

Աղգային ևւ, այս պարագային, հայկական նկարագիր ունեցող գրութիւններուն թիւը աստեներկու է: Անոնք, ինչպէս վերը յիշուեցաւ, թրեւտաւորը շարք ժը չունին ևւ սակայն իրենք գրենք կը ժանեն յատկանշական խորագրերեւում՝ շնորքը, շնորքներէն, շնորքը սիւնքը, շնորք է հայրենիքն, շնորքը ի ըստուան Մանստը, ևւայն: Այս վեցին ևւ անոց ամբողջութեան երկրորդ կէտը կազմող մնացեալ վեցին մէջ իրենք կատարուած են միեւնոյն թեմային վրայ, ա՛յն թեմային, որ հայուն սահագն է, հայկական ասորիբեր է, Միկուտը ժուտահող ևւ անոր վերաւոր կողմը ժանանելող խորքը, հայկական դիմադրին աղաքանուը ևւ կամ անկի ճիւղ՝ այդ դիմադրին իրենց հողին մէջ

կողմերուն ևւ կրել լիցողներուն սահագնաւոր բախումը, իրարամերժ ևւ սակայն իրարու նըքտող կողմերու պայթարը վերջին հաշուով:

Տասներկու այս գրութիւններուն մէջ, Մանիբի գէժ յանդիման կանգնած՝ իր հողին մէջ շնորքացած լին Ժը կը զանգուէ հայը, Օլտականի գերեզմանը ստարապիկ ուխտի կ'երթայ ևւ ար. Գ. կ'աշտթէ, շնանալաներու Յերիայալքիւնը պահպանող արմեն ցեղը կը ժարանի, Փրանսական չուկային մէջ մտաշէ ընող հայ ժանուղը շնորք ասի լ'աղմէնիկն ևւ հայ ևւ եւրոպական ցամաքամասին մէջ անկիւնը նման հայ աղբիւրը կը տուայտի, կ'ըմբռնուանայ ու արցունքով հարց կու տայ, շնորք է իմ ծայրեմիտայ: Տակուին մէկ ուրիւր կը շնորք ժանուլ իր հայութիւնը ու չի կրնար, միւտը՝ աստեմուսութեան մէջ անդալար կը կրկնէ. շնորք հայ եմ, ևւ հայ եմ, ևւ հայ... ու յետայ՝ շնորք եմ նայ: Մանուկին արիւնը կը իւրար, իտալուտ ծնողը կ'ուզէ ինչո՞ւմ ընել այդ իւրտուսին աղմուկը ու այդ ընտրին վրայ հայ ժամիկը կ'աղաթէ. շնորք պաննա՛ զու զիտայ...:

Ու այս էջերուն մէջ ընդգծուած ու միւտ գլխաղբուած է Միկուտի մէջ աստեմուտը հայու այդ արկարը՝ սփիւտաւայր — կամ՝ ինչպէս կը սիրէ կուչի ինքը՝ Մենան — արտահայտուան ևւ հայը:



Երկրորդ բաժնին մէջ զետեղուած գրութիւնները կը պատմեն սիրային ու հոգեկան արտմներ, կը զանգուկեն ընտրութեան պատկերներ, վեր կը հանեն սահագնութիւններ, որոնց մէջ, այս անգամ, կը տկարանայ ևւ գրեթէ կը ժարի հայուն ճիւղը ու կը մնայ ժարը՝ պարզ, սովորական, երբեմն նայինիկ ասորիբեր ևւ զուրիկ ստալինին տը պատարկու յատկութիւն: Այդպէս տիպարները

հայ են միշտ, բայց հայկական չեն անոց ազգուսնիքը, վերաբերումները:

Այսուհանդերձ, վերջին ժամանակները չէ, որ նախընտրելի էր գործնէ գրքին ազգային երանգ ունեցող բաժինը: Ընթերցողին պարագային մտանշուղ փանտրիզմն ալ չէ անկասկած այդ նախընտրութեան շարժանքը, այլ այդ բաժինն ժէջը պարզեանն ժառնի ու հոգին յանտեսանքը կազմու էր ու ասով ինչ սիրելի գործող կժայրը. Մեհեան ազգան է ինչ որ էր պէ, աւելի՛ն. ան ներկայիս կ'ազգի այդ բարբը, հեղեանէ աւելի բուն առաջագոյն, աւելի խուճապային սարսփով:

Դիտուած երևույթ է, որ հայ գրագէտին համար գիրքին չէ եղած խուճապիլ զարգացական շունչն, երբ ան էր պէ իր ազգին մասին, Թեբուն ան կամովին էր յանձնուի պատգամայի այդ անկողին: Այդպէս պատահած է երբեմն նաև Մեհեանի հետ, հակասակ անոր, որ սրտի բարեխոսքին ազմուէր միշտ ներկայ է ազգերուն ժէջը:

Ասոնք եղած են հասարակ ընկենալի շուրքն անուանողոյնու հիմնական ազգուէր: Հայու հոգին յատուկը առաջադիպող ուղեները էր շարունակն ու սրովհետև անոր ար շունին, ուր կարեան բախիլ ու վերստի, էր բարձրանան վեր ու էր ծիփան... այնուպի շուրքն, որոնց մեզ չըլինին ընդժէջն հեղեանէր մեր գանկերուն էր դանակուրէ իր ու մեր սարսփան, անձնորանն:

Ք. Ճ.

ՀԻՆ ԿԱՐՈՏՆԵՐՈՒ ՃԱՄԲՈՎ (Խ. Ն. ԳԱՒԱՌ)

1973ին հրատարակուած էր շուրջ 700 էջերէ բազմազան շինն կարտներու ճամբուլը զկարտը տրամաբանութիւն չի ճանչնար յանախ՝ արտադարանող կարտատարէ մը ուղեւորութեան ստաւարն է: Ուղեւորակէպ չէ, որովհետև անիկա մեզի չի ներկայանար վիզապի մը փոստախոսութեամբ:

Աւարին 50 էջերու սարսփան ներկայացնե-

լէ նաք պոյսուհայութեան անցնուն ու մշակութային, տեսական ու ընկերային ներկայ կարտները, վերջ էր գանէ Ռ. Ն. Գաւառի (Նախարարան) զպտոյտ մը Պայտայ քաղաքով մէջ բաժինն ու կ'ուզուիք շինելի գտնանալ:

Ասարտար-Անգարա համարագութեան կանգ կ'աւել պար մը Անգարայի մէկ պաշտօնատան մէջ, ուր անիկ կ'ունենայ հանգիտում մը, որուն ընթացքին, հեղեանն ու մանկութեան թուրք խաղընկերը կ'ազնկուին զաչար մանկութեան յուշերը, իրարու կենցաղ էր պարզին, ազա կարտահայ հայը թրքական մայրաքաղաքին հարմարաննէն ետք՝ յախարարար կ'այցելէ Կեստրիտ, Կիւրթի, Մուլթիտ, էր դառնայ սեղանակից հանձնարան մեր բեկորներուն, էր կոկոնայ Մուլթիտայ հայ ստաղիական Մ. Մարտագութեան կենդանին համար զմերթին ի ստա, ու ամայի եկեղեցիին յուսմանն ներս թեւաւորող ազաւ նիներուն հետ էր թեւաւորէ շինն կարտներու ճամբան...

Ձե՛ր, հաշիւ չէ, որ կը պահանջեն ֆեզմէ... աւելի քան մէկ դար, այդ կամարներու սակ ֆեզ օրենքներին ու ֆեզ փառաբաններին, լալով կարծեքներին ծննդն ու յանարանատարանք նախատինն զետին քանով՝ ստանարներու հաղ համարներին...

Ձե՛ս խոսիք, չե՛ս գիտեք... Հաւ մտք կիրմեր կան, գնա՛, եւ այլ մը պաշտար անոց մալ յարներ...

Մուլթիտայ յանկարանն էլներու սարսփան անցնալի մէկ սգիականին զրուսուածէն ետք՝ Կարտեր-Արտերի լրջապայտ էր հասի մեր մեծ բանաստեղծներին անոց անգամայրը՝ Ակն: Քուշակ, Մեմարնայ, Մեմանթու ու Ակն:

Հեղեանին գիշերներու հաշիւով ստան Ակնայ ախարի գանգերն ու լգեալ կարտութեանները, զեմերն ու յուշերը, խորհուրդներն ու հեղատու գտնները էր թագանցին գիշերուն շափ թաւ Ակնայ կիրանուն մէջ, մինչ անգին՝ ուղեւորի մը ժամանան սպասող հիւզե եզող հայ երչիքէ մը ներս, ցեղային աւանգութեաններուն հուսարարի հովի մը, մեղք անկողին՝ կ'երգէ պատասխի մը արուստով ու յղացումով հայտարար շինն ընկաններէն...

Շինն կարտներու ճամբով ճամբայ էլած Ռ. Ն. Գաւառ էր դանուի անգամայր Ակն ախարիին մէջ: Պար մը էր դանդաղի հեղեանէր եւ էր ծաւալն Ակնայ անցնալն ու ներկան շուրջող էջերը:

Լոկարներ

ԻՆՔՆԱԹՄԲԿԱՎԱՐՄԱՆ ՄՐՑԱՎԱՋԲ

Տազանդի բնառայութիւնը համեստութիւնն է:

9. ՍԵՒԱԿ

Յաւէտ ողբացեալ Պարոյր Սեւակ առյաւէտ ողբայի կիտատաղանդ, անտաղանդ ու ժիւղի խոտան արտադրող ապաշնորհներուն զէժ մնայուն ջղայնութիւն ժը ապրեցաւ եւ հակադրաբար ձեւակերպեց փորձառական իմաստութիւններ, որոնցմէ մէկը վերի հաստատումն է անկասկած.— «Տազանդի բնառութիւնը համեստութիւնն է»:

Արդարեւ, իր ուժին, արժէքին, արուեստին մասին վստահութիւն ունեցող մարդը համեստութիւնը շնորհի մը պէս կը կրէ վրան, չի խօսիր, օրինակ, արդէն կտտարած իր մէկ նուաճումին մասին, կը խոկայ նորի մը հաշտին, գովք չի մուրար, կը շարունակէ գործը, իր անունին եղած գնահատանքը չի փութար հրապարակային ցուցադրութեան նիւթ դարձնել, նուաճելի նոր տեսիլքէ մը մրրկավար՝ կը քաշուի իր աշխատանոցը:

Մեր աշօրուան իրականութեան մէջ, վերոյիշեալ հակադիր երկու եղբրուն առաջինին, բացասականին դրսևորումները աւելի յաճախողէպ դարձան վերջերս եւ կը շարունակեն իրենց թափանցումները մինչև իսկ բոլորովին տկուր դպիրներէ ներս, որոնք առանց հաշիւ տալու բարոյական հասկացողութիւններուն ու աղամարդու արժանապատուութեան՝ անյայտ արժանիքներու թուարկումով կը սոնքան մամուլի բաց տարածութիւններուն վրայ: Օղտուելով ստեղծուած այդ խառնաշփոթութենէն՝ իրենք գիրենք գործով արժեւորելու անընդունակները կը ժպրհին տակաւին խօսքով յազուրդ տալ արուեստի մարդուն հետ որեւէ կապ չունեցող հրավառ ու անզուսպ փառասանչութեան մը, ինքնաթմբկահարումը հասցնելով համեստութեան բոլոր շափերը զանցող համեստութիւններու:

Ախտագին այս երեւոյթին վերջին օրինակը տուաւ, ստորագրեց ջազաքիս մէջ լոյս տեսնող «Շիրակ» ամսագրի խմբագիրներէն Լեւոն Վարդան, նոյն «Շիրակ» ամսագրի Օգոստոսի համարին մէջ, իր սեփական հատորներուն մասին հինգ էջերու վրայ փռած առատածե՛ռն ջատագովութեամբ:

Անհրաժեշտ չէ քննութեան նիւթ դարձնել եւ գտնել տկարութենէ ծընունդ առած ետխտածուութեան այս ցոյցին պատճառները, մնաց որ, ասոր պէտք ալ չկայ: Փաստերուն մատնանշումը կը բաւէ վրուլի: Ահաւասիկ երկու հատուած: Լեւոն Վարդան կը խօսի Լեւոն Վարդանի հրատարակած երկու գիրքերուն հեղինակայի՛ն արժանիքներուն մասին.—

Արձակ բանաստեղծութիւն մըն էր «Գիրք Մենուսի»ն եւ նոյն տունն՝ վկայութիւն մը իր ժամանակէն: Աւօրեայ ցաւի ու տատապանքի, անկումի եւ քայքայումի էջի մը վրայ արիւնդ սիրտով եւ մատներով գրուած գիրքն էլ այդ, որ եթէ յաճախ մերժեց մատչիլ զգացումներուն՝ մօտեցաւ, սակայն, զարպասներուն ի-

մացականին եւ անկէ վերցուց հիմին հետ նորը եւ նորին հետ՝ մտա-
ցրելու եւ պատմութեան վերածուելու սկսած անմիջականը :

Հարցումներու չպատասխանեց «Գիրք Մենուստի»ն . ինչպէս
որ կ'ընեն իմաստասիրական գիրքերը, ոչ ալ փորձեց բնագանցա-
կան մարգամբներու մղուիլ՝ հակառակ որ ոմանք այդ բաներն ու-
զեցին զոտել, եւ գտնել ալ կարծեցին, այս հատորիկին մէջ . իրա-
կանութեան մէջ խռովի մը ծնունդն էր այս գիրքը եւ որպէս այդ-
պիսին ալ մնաց վկայութիւնը խռովայայտ ժամանակաշրջանի մը :

Վերցուցէ՛ք խորքը յիսունական թուականներուն՝ ընկալել
կարեւորու համար ալիքը սա խռովին : Գրէ՛ք անոր դէմ դժգոհ տե-
րունդը իրանանահայութեան, որ օրերէն ներս կը գտնէր խախտած ,
զլիխիվար շրջած բան մը, իմացական եւ հոգեկան վերաբերում մը,
չյագեցուող պապակ մը որուն կը պակսէր ամէն ստորագիլի, բան
մը որ չունէր սնուն, բան մը գոր չէր ճանչնար այդ սերունդը, եւ
ահա դուք կ'անենաք հէնքը «Գիրք Մենուստի»ին : Արդարեւ, տաս-
Պընսնդ տասնամեակ բազկացած օտ հատորիկը կը խօսէր քիչ մը ա-
մէն բանի մասին . անկէ կը խօսէր կեանքին եւ մահուան, սիրոյ
եւ տոնելութեան, անկումի եւ բարձրացումի . հոգի եւ հայրենիքի,
ծնունդի եւ Տայֆայումի, մայրութեան եւ հայրութեան, հոր եւ
գաւկի, հաւատքի եւ Աստուծոյ, կեղծիքի եւ նշմարութեան, սու-
տի եւ իրաւի, մեծութեան եւ փոքրութեան, գեղեցիկի եւ տգեղու-
թեան, մարդու եւ տիեզերքի, ժամանակի եւ երջանկութեան, նա-
խամարդու եւ վազուան, անմահութեան եւ յուերժացումի, սկիզ-
բի եւ վախճանի, վախի եւ յարգանքի, լոյսի եւ իմացականի, հո-
գիի եւ կեանքի նպատակին, ամբողջականութեան եւ հատուածի,
գիտակցութեան եւ բնագոյի, ստրկութեան եւ ազատութեան, հոգիի
եւ մարմնի, օրէնքի եւ կապանքներու, յաղթանակի եւ պարտու-
թիւններու, կիրքի եւ տակաւին այն բոլորին մասին, որոնք դարեւ-
րակ արիւնեցին ուղեղն ու գիտակցական կեանքը մարդուն եւ ստեղ-
ծեցին անմատչելի՝ այլ իմացական աշխարհ մը, գոր իմաստասիրու-
թիւն կը կոչեն ոմանք :

*Հոս կանգ առնենք պահ մը եւ գրիչ մը ամէն բանի մասին խօսող
յիշեալ գիրքին առիթով մենք եւս բռնեք քիչ մը քիչ բան ու ամէնէն ա-
ռաջ ա՛յն, որ քիչ մը ամէն բանի մասին խօսող գիրքերը ամէնէն մակերե-
սային ու անշահ հրատարակութիւններ եղած են միշտ եւ երբեք չէ պատա-
հած, որ հարց մը լրջութեամբ աւարտեն ու գիտութիւն լրջութեան մակար-
դակին վրայ : Բայց ինչպէս կը պարզուի ինքնագովարանական վերի շնչակը-
տուր գեղումէն, ընդամէնը փոքրածաւալ գրքոյի մը սահմաններուն՝ Լեւոն
Վարդան սպասած է մարդ էակը շահագրգռող բոլոր հարցերը, մոռնալով
միայն ու բացառաբար մէկը... Համետութիւնը :*

*Աւելի գործանալին այն է տակաւին, որ իր ընդգրկած նիւթերուն ա-
ռատութեան չափ, գրական առատ շնորհներ յայտնաբերած ըլլալու նարդի-
սականութիւն մը եւս թոյլ տուած է ինքն իրեն Լեւոն Վարդան : Այսպէս .*

Բայց բնագանցութեան սահմաններէն ներս ինկող սա նութե-
րուն Լեւոն Վարդան չտուաւ բնագանցական տարագում : Իր չեղա-
իմաստասէրին չոր, պատճառաբանուած եւ լոկ իմացականին յա-
զարդ տուող խօսքը . ընդհակառակը, իրմ եղաւ վնիւտն եւ տարա-

գումէ աւելի՝ թռիչք եւ իմացական մարզանքէ աւելի՝ քանաստեղծութիւն, ահա թէ ինչո՛ւ համար իր ընթերցողներէն աւանք, առաջին իսկ հերթին, *«Գիրք Մենուատի»* ներս ուզեցին գտնել տեսնողներուն շարունակութիւնը հին արեւելին եւ հեթանոս իմաստունները ուրարտական աշխարհին:

Առհասակամ բամ մը կար, սակայն, այս գիրքին մէջ. նոր մարդու մը խօսքն էր. որ ունէր շնչորը եւ երանգը հին խօսքերուն, արիւնի եւ պորտի կապ մը որ ներկան կը տանէր երէկին, կամ, ընդհակառակը, երէկը կը բերէր ներկային: Նոր խօսք սակայն. բայց *«Գիրք Մենուատի»* վեռն վարդան չէր փորձեր նոր խօսք ըսել. իրը կրկնութիւնն էր հինին՝ նոր ձեւով միայն:

Բայց վեռն վարդանը առաջինը չէր այդպէս ընդունուած մէջ. իրմէ առաջ կային գերմանացի Նիցշէն եւ լիթանացի ձգարան Խալիլ ձգարանը, որոնց հետ եթէ ունեցաւ հանգիստութեան եզրեր՝ անոնք եզան աւելի ձեւի քան բովանդակութեան:

Ահա եւ հաստատած մը երկրորդ հասարակ նուիրուած բաժնէն, ուր նորինքն ուժգին է ինքնաբերականորձան մտնդին թափը:

Քիչ չեզան անոնք, որոնք խանդավառ կերպով դիմաւորեցին *«Փիւնիկեան արեւուն վրայ»*ն, որովհետեւ անկէ ներս գտան սիրտի եւ սիրտի խննդ մը պարզօրէն. ուրիշներ գտան շատուածում մը գեղեցիկ խօսքի, քանաստեղծական թռիչքի, հոգեկան զգացումի եւ իմացական ներուժի: Ոմանք գայն կոչեցին վէպ մը, որուն սակայն կը պակսէր ուղիւր գործող անձերուն եւ հոգեկան ու իմացական հանգոյցներուն եւ քախուսներուն: Արձակ սա էջերը պատումաճքի տարազէն ներս գետնդելու փորձեր ալ չպակեցան բնաւ. չպակեցան նաեւ սա հասարը իմաստասիրութիւն նկատողներ. մինչդեռ իրականութիւնը կըսէր բոլորովին այլ բան — *«Փիւնիկեան արեւուն վրայ»*ն գեղարուեստական գործ մըն էր. ուր լեզուական, արտայայտչական եւ գեղարուեստական փայլարկումներուն մտնիկը չէր պակսէր նաեւ փայլարկումը միտքին եւ իմացականին:

Արդարեւ, սա գիրքը, ըսինք արդէն, ունէր մթնոլորտի տեսակ մը շարունակութիւնը *«Գիրք Մենուատի»*ն: Իրականութեան մէջ՝ անիկա ինքնապեղում մըն էր, իջնել մը ունջ ու այլէն ներս հոգիին ու միտքին, զգացումներուն եւ սիրտին ու վեր հանել մը հոն պահ մտածը. տնչո՛ւտ որ անիկա եզաւ արգասիքը խռովքի մըն ալ, որ պահ մը կամ պահեր արեւոյնց ներքին մարդը վեռն վարդանին եւ ստեղծեց բոլոր այն պայմանները որոնց մէկտեղումովն իր գոյութեան պիտի կոչուէր այս հասարը:

Անկէ ներս, ներս սա հասարէն, ուր ամէն ինչ դարձաւ գիտակցութեան ու ասարութեան սիրոյ մը առանցքին շուրջ. քիչեր ուզեցին տեսնել այդ խռովքը եւ քաւարարութեան միայն հեքիաթովը սիրոյ մը, որ իր աւարտին պիտի հասնէր ինչպէս սիրոյ պատմութիւններն ընդհանրապէս: Մինչդեռ, իրականութեան մէջ, *«Փիւնիկեան արեւուն վրայ»*ն եզաւ սիրոյ պատմութիւն ըլլալէ շատ աւելի բան մը: Անիկա առօրայ կեանքի մը եւ գայն յուզող հարցերուն, մարդկային յարաբերութիւններուն եւ հասկացողութիւններուն, մարդկայինն վեր աւելայ գերբնականին ու մարդու անոր մատչումին, սիրոյ

և ասուածայինին, ժամանակին և անկէ յառաջացած մարդկային գիտակցութեան, մահուան և յաներժին, հազին ու հայրենիքին, և տակաւին մարդկային եսին և անոր ընկալութեան իմացական մէկ դրսեւորումն էր լակ:

Հո՛ւ ալ, սա գիրքին ալ, կը պակսէին իմաստասիրական տարագրեր: Իմաստասիրութիւն չէր ընէր Լեւոն Վարդանը՝ ճո՛ղնուկ իր այն էջերուն մէջ որոնք ամենէն աւելի յագեցած էին միտքով և իմացապաշտութեամբ, թէպէտեւ հետագայ ուսումնասիրող մը պիտի չդժուարանար բնաւ գանգամ էջերու վրայ տարածուած ու սրուած գաղափարներէն մէկտեղել և ստեղծել որոշ տարագում որոշ ալ նիւթերու շուրջ. բայց սա գիրքին հրատարակութեան օրերուն գայն գրախօսողներէն ո՛չ մէկը փորձեց սա ձեւի մատչում մը անոր: Ու գովեստի խանդավառ խօսքերուն ինքնազնուական գտնուեցան նաև և ծանր արտայայտութիւնները պախարակումին, ժխտումին և ուրացումին: Գուցէ նախորդին պիտի ըլլար, որ Լեւոն Վարդան ի՛նք պատասխանէր այդ վերջիններուն, բայց չըրաւ այդպէս ու ճիշտն օր ժամանակը լուծէր հարցերը և ժխտական ու քաջածու հագրով մարդեր գոհանային իրենց արարքով, և հանդարտէին:

Հիմա որ մօտ մէկուկէս տասնամեակ է անցեր սա գիրքին հրատարակութենէն ի վեր՝ անհկա կը կենայ հան ուր որ էր 1960ին: Տասնամեակ մը ես և գուցէ գտնուի սիրտի և միտքի տէր ռուսացու մը իրանամահայ գրական ճիւղի պատմութեան որ ուզէ արդարութիւն քննել «Փիւնիկեան ակերտն վրայ»-ին հետ «Գիրք Մենուստի»-ին նաև, որովհետեւ անոնք, այդ երկու գիրքերը, եզան իմացապաշտ գրականութեան առաջին արտայայտութիւնները իրանամահայ գրականութեան զարգացումի ուղիին վրայ և այդ իսկ պատճառով ալ արժանի կը մնան արդար դատումի և գնահատումի՝ որպէս արտայայտութիւնը միտքի, սիրտի և լեզուի:

Լեզուի՞ ըսինք — բայց հայերէնը չունեցաւ ո՛րեւէ գաղտնիք Լեւոն Վարդանին համար: Գեղեցիկ խօսքի մնաց վարպետը մեր մօտ և հայերէնի ուժգնութիւնն և անոր ներքին պոռթկումը արտահանող մը եղաւ մեր մէջ: Բաւ չորոնեց բնաւ, պատկեր ստեղծելու նիւրը չունեցաւ երբեք: Հայերէն բառերուն անցաւ բառարանային իմացումէն շատ աւելի անդին՝ անոնցմով ստեղծելու համար իմացական այն մթնոլորտը որով յագեցած եղան իր երկու հատորներն ալ: Տիրած ու տիրապետած հայերէնին՝ անհկա վարեց զայն Բեգասի մը նման՝ խիզախութեամբ և գիտակցօրէն, աւելի՛ն անով իբրև խորքեր իր հոգիին ու ներաշխարհին ու պեղեց գանձնէ անոր ընձեռած միջոցներով, և արդիւնքը եղաւ լեզուական շէնքութիւն մը լակ:

Եթէ չէիք գիտեր, գիտցէ՛ք ուրեմն, որ յանձին Լեւոն Վարդանի և իր գործերուն, Հայ գրականութիւնը ունի արհեստով գրուած գիրքեր, խառնվայրյալ ժամանակներու վկայութիւններ, Հին Արեւելքի տեսանկյուններու շարունակութիւն, ուրարտական աշխարհի հեթանոս իմաստուններու Հետ պարտի կապ, նոր մարդու խօսք, գերմանացի Նիցշէին և իրանացի ձեռք-բանին անմիջապէս յաջորդող մտածող մը, «սիրտի և միտքի խնձոյց», «չաւորուանում մը զէջեցիկ խօսքի, բանաստեղծական թռիչքի, հոգեկան բզ-զացումի և իմացական ներուժի»: Իմացապաշտ գրականութեան առաջին արտայայտութիւնը եղած ըլլալու յիշեցում. և տակաւին ինքն իրեն շնոր-

հած վարպետի կոչում, բեզաս մը՝ հայերէն լեզուի, եւ այս բոլորին արդիւնքը բլեզուական շքեղութիւն մըն, այսուհանդերձ, գովքի լափլիզող ծարաւ, հետեւաբար կոչ՝ ուսումնասիրուելու...

Նման մարմաջները իրենց անդարմանելի տկարութիւններուն առիթով բարդոյթներ կուտակած եւ բարդոյթներու մղումով մեծամեծս փբացող մարդոց յատուկ գրտւորումներ են եւ, ո՛վ գիտէ, թերեւս շատ արդար ալ չէ նման անբնական վիճակներու մտտնանշումը...

Արգարեւ, կրնայինք աչք գոցել իր սեփական անձր գերազնահատելով ցոյցի հանող այս անամօթ երեւոյթին դիմաց, եթէ Լեւոն Վարդան ինքն իրեն նուիրուած առանձին մենագրութիւն մը գրած եւ հոն խմբագրած ըլլար իր մենութեան տաւայտանքը, բայց գրուածը մենագրութիւն մը չէ, չունի նոյնիսկ անհասական թերթերու մէջ յաճախ տեղ գտնող նման անպատասխանատու ելոյթներու շքեղանքը, պա՛րզ, տպուած է խմբագրական ութ հոգինոց կազմով սփռուած գրական պաշտօնաթերթի մը մէջ, եւ տրդէն այս է երեւոյթին ամէնէն բնդվզեցուցիչ կողմը:

Պաշտօնաթերթ մը պէտք է դիտնայ պահել շափի եւ կշիռի զգացումները եւ թոյլ շտայ, որ շյազեցած փառասիրութեամբ ալիկոծ անձերը, խմբադի՛ր ըլլան անոնք թէ աշխատակից, ինքնաթմրկահարման մրցավազք սարքեն իր էջերուն վրայ:

«Միրախ» ամսագրի խմբագրական կազմին մէջ իրենք գիրենք յարգելի գիտցող յարգելի անձեր չեն պակսիր, վերոյիշեալ նարդիտականութեան առիթով թոյլ տուած թուլութիւնը սակայն բան մը կը պակսեցնէ գրական պատասխանատուութեան իրենց կոչումէն...

ՅԱԶՈՐԴ ԹԻՒՈՎ

1.— Կը սկսինք հրատարակել ծաւայուն ու պատմական հարուստ տառերով սօցտագործած մեծարժէք ուսումնասիրութիւն մը:—

«ԳՐՈՂՆԵՐՈՒ ՃԱԿՏԱԳԻՐԸ ՅԵՂԱՓՈՒՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԸՆԹԱՅԻՆ»

2.— Անտիպ նամակ մը Տիրան Զրաքեանէն

3.— Բնութագիրը՝ արարական գրականութեան նորայայտ մէկ դէմքին:—

«ՏԱԳՆԱՊԱՆԱՐ ՄԱՆՈՒԿԸ՝ ՍԱԼԻՄ ՊԱՐԱՔԱԹ»

4.— «Բագին»ի տրամադրած Սալիմ Պարաքաթի մէկ անտիպ բանաստեղծութիւնը:—

«ՍՊԱՆՆԵՑԷ՛Ք ԲՈՆԱՇՔԱՆ»

5.— Անտիպ բանաստեղծութիւններ Արսէն Երկաթէն